



ՀՀ արոտավայրերի կառավարման
ոլորտում առկա խնդիրների և դրանց
պատճառահետևանքային կապերի
ուսումնասիրություն

2019

ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների և դրանց պատճառահետևանքային կապերի ուսումնասիրություն

ապրիլ 30, 2019

Սույն հետազոտությունն իրականացվել է գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման փորձագետ Վիկտորյա Այվազյանի կողմից «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ»-ի շրջանակներում՝ ՀՀ-ում արոտավայրերի կայուն կառավարման հայեցակարգի մշակման նպատակով:

Հետազոտությունն իրականացվել է «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի աջակցությամբ, որն իրականացվում է «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության ֆինանսավորմամբ:

Բովանդակություն

Պատկերների ցանկ	3
Հապավումների ցանկ.....	4
1. Ամփոփ նկարագիր	5
2. Ներածություն	8
2.1. Ուսումնասիրության իրականացման նախապատմությունը և հիմնավորումը	8
2.2. Ուսումնասիրության խնդիրը և նպատակները.....	9
3. Մեթոդաբանություն	12
4. Բնական կերհանդակների՝ արոտների և խոտհարքների դերն ու ներկա իրավիճակը.....	18
4.1. Բնական կերհանդակները	18
4.2. Բնական կերհանդակների նշանակությունը ՀՀ տնտեսությունում.....	23
4.3. Բնական կերհանդակների բնապահպանական նշանակությունը.....	34
4.4. Մարդածին գործոնների և կլիմայի փոփոխության ազդեցությունը բնական կերհանդակների էկոլոգիա-տնտեսական վիճակի վրա.....	35
5. Արոտավայրերի կառավարում	42
5.1. Արոտավայրերի օգտագործման հիմնական մոտեցումները և խնդիրները	42
5.2. Արոտավայրերի կառավարման ներկա իրավիճակը և խնդիրները.....	56
6. Արոտների կառավարմանն ուղղված պետական ներկա քաղաքականությունը և իրավական դաշտը	74
6.1. Պետության կողմից իրականացվող քաղաքականությունը և ծրագրերը	74
6.2. Արոտների կառավարմանն առնչվող օրենսդրական և իրավական դաշտը.....	77
6.3. Ոլորտում շահագրգիռ կառույցների և կողմերի կողմից իրականացվող ծրագրերը ...	82
7. Եզրակացություններ և առաջարկություններ	87
7.1. Եզրակացություններ	87
7.2. Առաջարկություններ	91
Հղումներ	94
Հավելվածներ.....	97
Հավելված 1	97
Հավելված 2.....	98

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Ֆոկուս-խումբ քննարկումներին մասնակցած թիրախային խմբերի ներկայացուցիչների թիվը և համայնքները՝ ըստ մարզերի.....	14
Աղյուսակ 2. ՀՀ հողային ֆոնդը և արոտավայրերի ու խոտհարքների բաշխվածությունը ըստ սեփականության, 2018թ.....	18
Աղյուսակ 3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքն, մլրդ. դրամ	25
Աղյուսակ 4. Տնտեսություններին պատկանող որոշ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը.....	26
Աղյուսակ 5. Որոշ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը ըստ տնտեսությունների չափի.....	26
Աղյուսակ 6. Անասնազրկաքանակի փոփոխությունը 1985-2018թթ ընթացքում տարեվերջին, 1000 գլուխ.....	29
Աղյուսակ 7. Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող ապրանքների ներմուծում ՀՀ, տոննա	31
Աղյուսակ 8. Որոշ տեսակի անասնակների առկայությունը մեկ պայմանական խոշորի հաշվով 1985 և 2017 թվականներին	33
Աղյուսակ 9. Գյուղատնտեսական կենդանիների հիմնական կերատեսակների գները, դրամ/կգ	33
Աղյուսակ 10. Արոտօգտագործող տնտեսություններին ՏԻՄ-երի կողմից ապահովվող մասնագիտական ուղղորդում	44
Աղյուսակ 11. Հեռագնա և համայնքամերձ արոտավայրերի հասանելիության և օգտագործման աստիճանի գնահատականը ըստ համայնքների	51
Աղյուսակ 12. Հարցման մասնակիցների գնահատականները արոտավայրերին և անասնապահությանը առնչվող որոշ թեմաների վերաբերյալ գիտելիքների կարիք ունենալ կամ չունենալու վերաբերյալ	55
Աղյուսակ 13. Արոտավայրերից ստացված և դրանց ուղղված ծախսերի մասնաբաժինը ՀՀ համայնքների բյուջեների մուտքերում և ելքերում, 2018թ	61
Աղյուսակ 14. Առցանց հարցման համար ընտրված համայնքներ.....	97
Աղյուսակ 15. Ֆոկուս-խումբ քննարկումների համայնքային խմբերը.....	97
Աղյուսակ 16. Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների ցանկ	99

Պատկերների ցանկ

Պատկեր 1. Ըստ մարզերի համայնքների ընդգրկվածությունը ուսումնասիրության մեջ՝ ըստ փաստացի առկա և վարձակալության ենթակա արոտավայրերի տարածքների (առ 01.01.2018թ).....	16
Պատկեր 2. Վարձակալության ենթակա և առկա արոտավայրերի հարաբերակցությունը (առ 01.01.2018թ).....	17
Պատկեր 3. Արոտավայրերի և խոտհարքների բաշխվածությունը ՀՀ մարզերում, 2018.....	20
Պատկեր 4. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները.....	21
Պատկեր 5. ՀՀ-ում տարածված արոտագտագործման սխեման տարվա ընթացքում	22
Պատկեր 6. Մնասնագիտաքանակի բաշխվածությունը ըստ մարզերի, հունվար 2019 թ., ԱՎԿ 28	
Պատկեր 7. Արոտավայրերից օգտվող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %.....	30
Պատկեր 8. Կաթի և կովերի գլխաքանակի փոփոխությունը 2008-2017թթ, %-ով նախորդ տարվա նկատմամբ	30
Պատկեր 9. Կերային մշակաբույսերի արտադրությունը ՀՀ ներկա տարածքում 1985-2017թթ ընթացքում, 1000տ.....	32
Պատկեր 10. Համայնքամերձ և հեռագնա արոտավայրերի վիճակը հարցմանը մասնակցած համայնքներում, ըստ ներկայացուցիչների գնահատականների	37
Պատկեր 11. Համայնքամերձ և հեռագնա արոտավայրերի վիճակի փոփոխությունը վերջին 10-20 տարիների ընթացքում, ըստ ներկայացուցիչների գնահատականների.....	38
Պատկեր 12. Ուսումնասիրված համայնքներում արոտավայրերի կամ դրանց ենթակառուցվածքների վերականգնման կամ բարելավման աշխատանքների իրականացում. 40	
Պատկեր 13. Արոտագտագործման վերահսկումը ՏԻՄ-երի կողմից.....	44
Պատկեր 14. Արոտավայրի կառավարման պլանի առկայությունը հարցմանը մասնակցած համայնքներում՝ ըստ ներկայացուցիչների գնահատականների (ըստ համայնքի).....	48
Պատկեր 15. Համայնքներում կիրառվող արածեցման եղանակները ըստ հարցման մասնակիցների գնահատականների՝ անհատապես և ըստ համայնքի.....	50
Պատկեր 16. Համայնքամերձ արոտավայրի հասանելիությունը սահմանափակող հանգամանքները ըստ համամասնության (ըստ համայնքների).....	52
Պատկեր 17. Հեռագնա արոտավայրի հասանելիությունը սահմանափակող հանգամանքները ըստ համամասնության (ըստ համայնքների).....	53
Պատկեր 18. Արոտագտագործման հիմնական ենթակառուցվածքների վիճակը հարցմանը մասնակցած համայնքներում	54
Պատկեր 19. Արոտավայրերի և եղած անասնագլխաքանակի համապատասխանությունը ըստ մասնակիցների գնահատականների.....	55
Պատկեր 20. Արտադրողի կողմից տավարի մսի և կաթի իրացման միջին տարեկան գինը.....	63
Պատկեր 21. Արոտավայրի օգտագործման/վարձակալության պայմանագրի առկայությունը և դրանց ժամկետը ուսումնասիրված համայնքներում	70
Պատկեր 22. Արոտավայրերի կառավարման խնդիրների պատճառահետևանքային կապը	89

Հապավումների ցանկ

ԱԳԿԿ	Անշարժ գույքի կադաստրի կոմիտե
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՎԿ	Ազգային վիճակագրական կոմիտե
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը
ՀԳՌԿՄ	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն
ԽԵԿ	Խոշոր եղջերավոր կենդանի
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի կազմակերպության Զարգացման գործակալություն
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄԵԿ	Մանր եղջերավոր կենդանի
ՌԶԳ	Ռազմավարական զարգացման գործակալություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարման
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԶ	Տարածքային կառավարման և զարգացման

1. Ամփոփ նկարագիր

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տնտեսության հիմնական ճյուղերից մեկը և տարիներ շարունակ պետական կառավարման մարմինները տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով խթանում են ոլորտի զարգացումը: Այդուհանդերձ, անասնապահության ոլորտն այսօր էլ բազում մարտահրավերներ ունի, որոնցից ամենանշանակալիցը անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճի ապահովումն է՝ հիմնվելով ոչ թե անասնագլխաքանակի ավելացման, այլ՝ արտադրողականության բարձրացման վրա՝ կազմակերպելով արդյունավետ պահվածք և կերապահովում:

Նկատի ունենալով, որ հանրապետությունում արոտավայրերն ու խոտհարքները հանդիսանում են կենդանիների կերի ապահովման հիմնական աղբյուր, ապա դրանց՝ հատկապես արոտավայրերի կայուն կառավարման ապահովումը խիստ արդի խնդիր է:

Համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տվյալների՝ ՀՀ հողային ֆոնդի ավելի քան 68% գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր են, որոնց կեսից ավելին՝ 1172 576 հեկտարը կազմում են բնական կերհանդակները՝ արոտավայրերը և խոտհարքները: Արոտավայրերն ու խոտհարքները առավելապես օգտագործվում են անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների կողմից և ներկայումս տարեկան արտադրված մսի ավելի քան 50%-ը, կաթի մոտ 70%-ը և բրդի գրեթե 100%-ը գոյանում է արոտային կերի օգտագործման արդյունքում:

Կախված համայնքում առանձին տնային տնտեսությունների ունեցած անասնագլխաքանակի մեծությունից, տեսակից, ինչպես նաև արոտավայրերում անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունից՝ հեռագնա և համայնքամերձ արոտավայրերը տարբեր համայնքներում տարբեր ինտենսիվությամբ են օգտագործվում, ինչն անմիջական ազդեցություն է ունենում արոտավայրերի էկոլոգիա-տնտեսական վիճակի վրա:

Հանրապետության բոլոր մարզերում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների գերակշիռ մասը ներգրավված է տավարաբուծության մեջ և համայնքներում առկա հիմնական անասնագլխաքանակը ԽԵԿ-երն են: Սրա հետ մեկտեղ, տարբեր մարզերի ունեցած արոտավայրերի և անասնագլխաքանակի քանակական համեմատությունը վկայում է, որ բոլոր մարզերը, բացի Արմավիրից և Երևան քաղաքից, չեն օգտագործում իրենց արոտավայրերի ողջ պոտենցիալը:

Արոտավայրերն ու խոտհարքները յուրահատուկ բնական էկոհամակարգեր են և բացի գյուղատնտեսական նշանակությունից ունեն նաև բնապահպանական նշանակություն: Սրանք կենսաբազմազանության անգնահատելի աղբյուր են և մեծնշանակություն ունեն կլիմայի գլոբալ փոփոխության մեղմացման հարցում. արոտավայրերը, հանդիսանալով ածխածնի բնական պահեստարան, նվազեցնում են մթնոլորտում ածխաթթու գազի մակարդակը:

Հանդիսանալով համայնքային և պետական սեփականություն՝ արոտավայրերի կառավարումը և տնօրինումն ընկնում է ՏԻ մարմինների պատասխանատվության ներքո: Այդուհանդերձ, իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ արոտավայրերի կառավարման ոլորտում ՏԻՄ-երը շատ պասիվ են և հիմնականում գործընթացը կազմակերպված չէ, արոտավայրի վերահսկում չի իրականացվում կամ իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ վարձակալության պայմանագիր կնքելիս և այլն:

ՏԻՄ-երի կողմից արոտավայրերի կառավարումը իրավական տեսանկյունից պարտադիր է միայն նրանց տնօրինման ներքո գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների համար, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարումը պարտադիր չէ: Համայնքային սեփականության արոտավայրերի կառավարումը անուղղակի կերպով ներառված է ՏԻՄ մասին օրենքով համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների շրջանակում:

Արոտավայրերի կառավարումը ՏԻՄ-երի կողմից ենթադրում է մի շարք գործառույթների իրականացում, այդ թվում նաև՝ համայնքում արոտավայրերի կառավարման պլանի առկայություն: Սակայն ոչ բոլոր համայնքներն ունեն նման պլաններ՝ մինչ 2019 թվականի հունվարնամանատիպ պլաններ մշակվել են հանրապետության միայն 231 համայնքներում/բնակավայրերում: Միննույն ժամանակ պետք է նշել, որ միայն կառավարման պլանի առկայությունը չի ենթադրում դրա իրականացումը:

Արոտավայրերի կառավարման գործընթացի ներդրումը հանրապետությունում չի կարելի կապել միայն ՏԻՄ-երի հետ, այլ պետք է դիտարկել համապարփակ՝ հաշվի առնելով գոյություն ունեցող միջավայրի սահմանափակումները: Այս տեսանկյունից հանրապետությունում արոտավայրերի կառավարման գործընթացը ներդնել խանգարող գործոնները կարելի է դասակարգել որպես՝

1. կառուցվածքային խնդիրներ
2. կազմակերպչական խնդիրներ
3. տնտեսական և սոցիալական խնդիրներ
4. բնական և տեխնիկական սահմանափակումներ

5. ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ
6. ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ
7. իրավական գործոններ
8. քաղաքական և ինստիտուցիոնալ խնդիրներ

Հանրապետությունում արոտագործման լիարժեք կառավարման հիմնական խնդիրը հանդիսանում է անասնապահության ոչ եկամտաբեր լինելը, ինչը, բացի այլ գործոնների, միևնույն ժամանակ հանդիսանում է արոտավայրերի թերի կառավարման և ոչ ճիշտ օգտագործման հետևանք: Արոտավայրերի կայուն կառավարման ապահովման համար նշանակալից է նաև արոտավայրերի օգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների սղությունը: Թերի ենթակառուցվածքները, մասնագիտական և ֆինանսական սահմանափակ ռեսուրսները նպաստում են արոտավայրերի դեգրադացմանը, նվազեցնում են անասնապահության եկամտաբերությունը և արոտագործողների շրջանում թույլ չեն տալիս ապահովել արոտավայրերի ճիշտ օգտագործման, ինչպես նաև անասնապահությունից ստացվող եկամուտների ավելացմանը նպաստող միջոցառումների իրականացում:

Միևնույն ժամանակ համայնքային և պետական կառույցների թույլ ինստիտուցիոնալ կարողությունները, օրենքի գերակայությունը և պայմանագրերի կիրարկումը ևս լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում արոտավայրերի կայուն կառավարման ապահովման համար:

2. Ներածություն

2.1. Ուսումնասիրության իրականացման նախապատմությունը և հիմնավորումը

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տնտեսության հիմնական ճյուղերից մեկը և տարիներ շարունակ պետական կառավարման մարմինները տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով խթանում են ոլորտի զարգացումը: Այդուհանդերձ, անասնապահության ոլորտն այսօր էլ բազում մարտահրավերներ ունի, որոնցից ամենանշանակալիցը անասնապահական մթերքների արտադրության ծավալների աճի ապահովումն է՝ հիմնվելով ոչ թե անասնազվիսաքանակի ավելացման, այլ՝ արտադրողականության բարձրացման վրա՝ կազմակերպելով արդյունավետ պահվածք և կերապահովում:

Այսօր հանրապետությունում անասնապահության համար կերի հիմնական բազա են հանդիսանում բնական կերհանդակները՝ արոտավայրերը և խոտհարքները, որոնց շնորհիվ ձևավորվում է անասնապահական մթերքների արտադրության տարեկան ծավալի գերակշիռ մասը: Այս տեսանկյունից խիստ կարևոր է ունենալ համապարփակ պետական քաղաքականություն, որը ՀՀ ողջ տարածքում կապահովի բնական կերհանդակների և հատկապես արոտավայրերի ճիշտ կառավարումը՝ ուղղված դրանց ռացիոնալ օգտագործմանը և որպես բնական ռեսուրս, դրանց վերարտադրությանն ու պահպանմանը:

Ներկայումս հանրապետության արոտավայրերը հիմնականում հանդիսանում են պետական և համայնքային սեփականություն և տնօրինվում ու կառավարվում են տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից: Սակայն, ՏԻՄ-երի՝ արոտավայրերի կառավարման ոլորտում ունեցած լիազորություններն և պարտականությունները լիարժեք չեն սահմանված, իսկ արոտավայրերի կառավարում իրականացնելու նրանց հնարավորություններն ու փորձը սահմանափակ են: Մինևույն ժամանակ, ներկայումս գործող օրենսդրական դաշտի պայմաններում, հնարավոր չի հանրապետության տարբեր համայնքներում ապահովել արոտավայրերի կառավարման միասնական մոտեցում:

2018 թվականի մայիսին հանրապետությունում ձևավորվեց «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ», որի հիմնադիրներն են՝ Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ-ն (ՌԶԳ), Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ) և նախկին Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի «Համայնքների

գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ՀԳՌԿՄ) 2-րդ ծրագիրը: Հարթակի ձևավորման հիմնական նպատակներից է հաղթահարել հանրապետությունում արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրները, այդ թվում՝ բարելավել ոլորտին առնչվող և ոլորտի գործառույթները կարգավորող օրենսդրական դաշտը, նպաստավոր պայմաններ ստեղծել անասնապահությամբ զբաղվող տնտեսավարողների գործունեության համար, ինչպես նաև բարձրացնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

Իր գործունեության առաջին տարվա ընթացքում հարթակը նախաձեռնել է ՀՀ-ում արոտավայրերի կառավարման հայեցակարգի մշակում՝ սահմանելով այն հիմնական ուղղություններն ու աշխատանքները, որոնք պետք է տարվեն տվյալ ոլորտի զարգացման համար: Հայեցակարգը կհանդիսանա ոլորտում արդյունավետ քաղաքականության մշակման և հիմնավոր որոշումների կայացման համար համապարփակ փաստաթուղթ:

Հայեցակարգի մշակումը ենթադրում է մի շարք գործընթացներ, այդ թվում՝

- վեր հանել և ուսումնասիրել արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրները և դրանց պատճառահետևանքային կապերը,
- ուսումնասիրել արոտների կառավարման տեղական և միջազգային փորձը, հաջողված լուծումները և համապատասխան գործիքակազմը,
- մշակել արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրների հաղթահարման և ոլորտի կայուն կառավարման հնարավոր լուծումները և գործիքակազմը,
- սահմանել ՀՀ-ում արոտների կառավարման ոլորտի զարգացման համընդհանուր տեսլականը:

Վերոնշյալ գործընթացների հիմնավոր իրականացման համար համակարգման հարթակը նախաձեռնել է սույն հետազոտությունը, որն ուղղված է արոտների արդյունավետ կառավարմանը խոչընդոտող խնդիրների բացահայտմանն ու գույքագրմանը և պետք է տեղեկատվական հիմք հանդիսանա Արոտավայրերի կառավարման հայեցակարգի մշակման համար:

2.2. Ուսումնասիրության խնդիրը և նպատակները

Արոտավայրերը բնական լանդշաֆտի կարևոր մաս են կազմում և ունեն ոչ միայն տնտեսական նշանակություն՝ կերի բազա հանդիսանալով գյուղատնտեսական կենդանիների համար, այլ նաև ունեն բնապահպանական նշանակություն, քանի

որ բնական միջավայր են հանդիսանում տարբեր կենդանիների և մշակաբույսերի համար՝ ապահովելով դրանց գոյությունն ու վերարտադրությունը, պաշտպանում են հողը էրոզիայից, կարգավորում են ջրերի հոսքը և նպաստում են բնական փոշոտմանը: Սրա հետ մեկտեղ արոտավայրերը նաև հանգստի կազմակերպման վայր են հանդիսանում և ունեն գեղագիտական նշանակություն:

Նկատի ունենալով մարդկության առջև ծառացած գլոբալ մարտահրավերները, ինչպիսիք են՝ բնակչության աճը, կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսության վրա դրա բացասական ազդեցությունը, գյուղատնտեսական հողատեսքերի հաշվին աճող քաղաքաշինությունը, բնական պաշարների արագ սպառումը՝ առաջիկա տասնամյակների ընթացքում պարենային անվտանգության ապահովումը համաշխարհային մակարդակում էլ ավելի բարդ խնդիր է դառնալու:

Այժմ էլ ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովումը գերակա խնդիր է, բայց և փորձը ցույց է տալիս, որ հանրապետությունում կիրառվող բնական պաշարների օգտագործման պրակտիկան ոչ միայն ուղղված չէ այս խնդրի լուծմանը, այլև նպաստում է դրա խորացմանը: Մասնավորապես, համաձայն Բնապահպանության նախարարության, հանրապետությունում հողային ռեսուրսների՝ ներառյալ արոտավայրերի իռացիոնալ օգտագործման արդյունքում դրանց շուրջ 80%-ը գտնվում է անապատացման և էրոզիայի վտանգի տակ, նվազել են հողի բերրիությունը և արոտավայրերի արտադրողականությունը: Բնական է, որ այս խնդիրների անտեսումը, և դրանց խորացմանը նպաստող գործելակերպը կանոնակարգող քաղաքականության բացակայությունը կարող են անդառնալի հետևանքներ թողնել ոչ միայն երկրի էկոլոգիայի վրա, այլև հանգեցնել լուրջ տնտեսական, սոցիալական և քաղաքական հետևանքների՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության և դրանցից ստացված եկամուտների կրճատում, աղքատության մակարդակի աճ և երկրի պարենային անվտանգության խոցելիության բարձրացում:

Այս ենթատեքստում բնական կերհանդակների և մասնավորապես արոտավայրերի վրա մարդու գործունեության հնարավոր բացասական ազդեցության մեղմման, ինչպես նաև արոտավայրերի տնտեսական արդյունավետության բարձրացման և պահպանման համար խիստ կարևոր է դրանց կայուն կառավարումը: Կայուն կառավարումն իրենից ենթադրում է այնպիսի համալիր գործողությունների իրականացում, որի արդյունքում ապահովված կլինի բնական էկոհամակարգերի կայուն զարգացումը, կկրճատվի արոտավայրերի կենսաբազմազանության խոցելիությունը, կպահպանվի բուսածածկի կազմը:

Արոտավայրերի կայուն կառավարումը պետք է բխի այս ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունից, որն իր հերթին պետք է միտված լինի արոտավայրերի պահպանման և բնականոն վերարտադրման համար նախադրյալների և երաշխիքների ստեղծմանը: Բացի այդ, կայուն կառավարումը մեծապես կախված է գոյություն ունեցող կայուն կառավարման մեխանիզմները տեղայնացնելու և իրավասու մարմինների կողմից դրանց շարունակական կիրառումը ապահովելու կարողությամբ:

ՀՀ-ում արոտավայրերի կառավարումը հիմնականում իրականացվում է համայնքային մակարդակում, քանի որ բոլոր արոտավայրերը գտնվում են համայնքների վարչական տարածքներում: Այդուհանդերձ, կարևոր է ազգային և մարզային մակարդակներում համապատասխան դերակատարների ակտիվ ներգրավվածությունը այս գործին, քանի որ մի կողմից համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները առայժմ լիարժեք կայացած չեն, իսկ մյուս կողմից համայնքները չեն տիրապետում կայուն կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ նյութական, տեխնիկական և մասնագիտական ռեսուրսներ:

Սույն ուսումնասիրությունը **նպատակ** ունի ուսումնասիրել և դասակարգել Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրները և դրանց պատճառահետևանքային կապերը, ինչը հիմք կհանդիսանա ՀՀ-ում արոտավայրերի կայուն կառավարման համապարփակ հայեցակարգի մշակման համար:

Ուսումնասիրության հիմնական **խնդիրներն** են.

- Ուսումնասիրել և դասակարգել ՀՀ արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրները և դրանց պատճառահետևանքային կապերը:
- Բացահայտել ոլորտում գործող շահագրգիռ կողմերի լիազորությունների ու կարողությունների համապատասխանությունը՝ նրանց կողմից արոտավայրերի կայուն կառավարում իրականացնելու համար:
- Պարզել, թե ինչ օրենսդրական, ընթացակարգային մոտեցումներ են անհրաժեշտ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարման կայունության մակարդակի բարձրացման և ապահովման համար:

3. Մեթոդաբանություն

Հանրապետությունում արոտավայրերի կառավարման վերաբերյալ համակողմանի և լիարժեք պատկեր ստանալու և առկա բոլոր խնդիրները վերհանելու նպատակով հետազոտությունն իրականացվել է ստորև նշված տվյալների հավաքագրման որակական և քանակական մի շարք մեթոդների և գործիքների համադրմամբ, ինչը թույլ է տվել, գոյություն ունեցող օբյեկտիվ սահմանափակումների պայմաններում, առավելագույն արդյունք ապահովել:

Արոտների կառավարման ոլորտում առկա խնդիրները դիտարկվել են տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, որտեղ ըստ թիրախային խմբերի առանձնացվել են շահառու և շահագրգիռ այն բոլոր կողմերը, որոնք ներգրավված են արոտների կառավարման ոլորտում հնարավոր որոշումների կայացման և իրականացման գործընթացներում, ինչպես նաև հանդիսանում են վերոնշյալ որոշումների ազդեցության կրողները: Սույն ուսումնասիրության համար, որպես տեղեկատվության ստացման աղբյուրներ դիտարկվել են՝

1. արոտօգտագործող գյուղացիական տնտեսությունները¹,
2. տեղական ինքնակառավարման մարմինները,
3. պետական կառավարման մարզային և ազգային կառույցները,
4. գիտահետազոտական կառույցները,
5. ՀՀ-ում արոտավայրերին առնչվող ծրագրեր իրականացնող կամ նախկինում իրականացրած տեղական և միջազգային կառույցները:

Որպես տեղեկատվության հավաքագրման հիմնական մեթոդներ՝ ընտրվել են փաստաթղթային ուսումնասիրությունը, ֆոկլուս-խումբ քննարկումները, հարցաթերթիկային հարցումները և փորձագիտական հարցազրույցները:

Փաստաթղթային ուսումնասիրություն

Փաստաթղթային ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ-ում արոտների կառավարման ոլորտին առնչվող օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերը, վիճակագրական հրապարակումները, գիտական հոդվածները և գրականությունը, ինչպես նաև տարբեր տեղական և միջազգային կառույցների կողմից ՀՀ-ում իրականացվող ոլորտին առնչվող ծրագրերի հրապարակված հաշվետվությունները, նյութերը:

¹ Այս խմբում ներառված են նաև Արոտօգտագործողների Միավորում Սպառողական կոոպերատիվների անդամները:

Ֆոկուս-խումբ քննարկումներ

Համայնքային մակարդակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնների կառավարման խնդիրների բացահայտման, դրանց պատճառահետևանքային կապերի պարզաբանման, գործող իրավական դաշտի և ընթացակարգերի նպատակահարմարության, ինչպես նաև արտոնների կառավարման համար լիազոր մարմինների՝ կայուն կառավարում իրականացնելու կարողությունների և դժվարությունների ուսումնասիրման համար կազմակերպվել են ֆոկուս-խումբ քննարկումներ:

Հաշվի առնելով անասնապահության կարևորությունը ՀՀ տարբեր մարզերի գյուղատնտեսության համար՝ ֆոկուս-խումբ քննարկումներ իրականացվել են ՀՀ բոլոր մարզերում՝ բացի Արարատի և Արմավիրի մարզերից, որտեղ գյուղատնտեսության ճյուղերից առավել զարգացած են դաշտավարությունը և այգեգործությունը:

Նպատակ ունենալով ֆոկուս-խումբ քննարկումների ընթացքում ստանալ բազմակողմանի և խորը տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մարզում առանձնացվել են երեք թիրախային խմբեր, որոնց հետ առանձին-առանձին կազմակերպվել են ֆոկուս-խումբ քննարկումներ: Ֆոկուս-խումբ քննարկումների համար առանձնացված թիրախային խմբերն են՝

1. *ՏԲՄ ղեկավար մարմինների խումբը*՝ բաղկացած համայնքապետերից, ավագանու անդամներից, վարչական ներկայացուցիչներից, քարտուղարներից,
2. *արտոգտագործողների խումբը*՝ բաղկացած անասնապահ տնային տնտեսությունների ներկայացուցիչներից,
3. *մասնագետների խումբը*՝ բաղկացած գյուղական համայնքներում գործող գյուղատնտեսներից, հողաշինարարներից, անասնաբույժներից և այլն:

Այսպես, ֆոկուս-խմբերի ձևավորման նպատակով, Սյունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Կոտայքի և Արագածոտնի մարզերի անասնապահ համայնքներից ընտրվել են 1-ից 11 համայնք: Նպատակ ունենալով ապահովել բազմակարծություն և աշխարհագրական տեսանկյունից տարածվածություն՝ համայնքները ընտրվել են հաշվի առնելով մի շարք չափանիշներ, այդ թվում՝ համայնքում անասնազխաքանակի թիվը, արտադրյալ տարածքները, մարզում աշխարհագրական դիրքը, խոշորացված լինելու կամ չլինելու հանգամանքը:

Ընդհանուր իրականացվել է 26 ֆոկլուս-խումբ քննարկում, որոնց մասնակցել են 46 համայնքների 246 ներկայացուցիչ, որոնց կեսից ավելին եղել է արոտագտագործող²: Ֆոկլուս-խումբ քննարկումներին մասնակցած համայնքները և յուրաքանչյուր մարզում ֆոկլուս-խումբ քննարկումներին մասնակցած համապատասխան թիրախային խմբերի ներկայացուցիչների թիվը բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ֆոկլուս-խումբ քննարկումներին մասնակցած թիրախային խմբերի ներկայացուցիչների թիվը և համայնքները՝ ըստ մարզերի

Մարզ	Համայնքների թիվ	Համայնքներ	Ֆոկլուս-խումբ քննարկումների խմբեր		
			ՏԻՄ	մասնագետ	արոտագտագործող
Սյունիք	5	Գորիս, Տաթև, Տեղ, Սիսիան, Գորայք խոշորացված համայնքներ	11	10	14
Վայոց ձոր	5	Չառիթափ, Վայք, Գլաձոր, Արենի, Եղեգիս խոշորացված համայնքներ	7	9	4
Ծիրակ	6	Ամասիա, Արփի, Աշոցք, Սարապատ, Անի խոշորացված համայնքներ և Սարալանջ համայնք	17	7	6
Լոռի	6	Լոռի-Բերդ, Գյուլագարակ, Ստեփանավան, Մարչապետ, Տաշիր, Մեծավան խոշորացված համայնքներ	11	12	14
Տավուշ	1	Բերդ խոշորացված համայնք	4	-	-
Գեղարքունիք	10	Շողակաթ, Ճամբարակ, Վարդենիս խոշորացված և Ծովակ, Լճական, Մեծ Մասրիկ, Ախարաձոր, Տորֆավան, Լուսակունք, Խաչաղբյուր համայնքներ	10	22	24
Արագածոտն	7	Ներքին Բազմաբերդ, Նոր Ամանոս, Ավան, Օշական, Արտաշավան համայնքներ, Ապարան և Ծաղկահովիտ խոշորացված համայնքներ	10	15	8
Կոտայք	6	Սոլակ, Լեռնանիստ, Գեղաշեն համայնքներ և Ակունք, Չարենցավան, Եղվարդ խոշորացված համայնքներ	9	9	13
Ընդամենը ներգրավված համայնքների թիվը՝ 46			79	84	83

Ֆոկլուս-խումբ քննարկման հարցաշարի ստուգման և վերոնշյալ թիրախային խմբերի միավորման նպատակահարմարության ստուգման նպատակով Կոտայքի մարզում կազմակերպվել է երկու ֆոկլուս-խմբում քննարկում, ուր մի խմբում՝ ներառվել են ՏԻՄ ներկայացուցիչները և մասնագետները, իսկ մյուս խմբում՝ արոտագտագործող տնային տնտեսությունների ներկայացուցիչները: Մյուս թիրախային մարզերում, յուրաքանչյուր թիրախային խմբի հետ կազմակերպվել են առանձին հանդիպումներ:

²Որոշ ՏԻՄ ներկայացուցիչներ և մասնագետներ միաժամանակ հանդիսացել են նաև արոտագտագործողներ:

Ֆոկլուս-խումբ քննարկումների իրականացման համար մշակվել է ուղեցույց, որը ներառում է արոտների կառավարման մոտեցումների, ոլորտը կարգավորող իրավական դաշտի, ՏԻՄ-երի աշխատանքի և ֆերմերների՝ ոլորտի վերաբերյալ տեղեկացվածության, կրթվածության վերաբերյալ հարցադրումներ: Հաշվի առնելով առանձնացված երեք թիրախային խմբերի լիազորությունների տարբերությունները՝ մշակվել է ուղեցույցի երկու տարբերակ՝ (1) ՏԻՄ ներկայացուցիչների և մասնագետների համար և (2) ֆերմերների համար: Յուրաքանչյուր ֆոկլուս-խումբ տևել է մինչև 2 ժամ, որին նախորդել է արոտների կայուն կառավարման և դրա կանոնակարգման վերաբերյալ ներածական մաս:

Հարցաթերթիկային հարցումներ

Հարցաթերթիկային հարցումները թույլ տվեցին համայնքային մակարդակում հավաքագրել արոտների վիճակի, կառավարման և արոտօգտագործման պրակտիկայի վերաբերյալ առաջնային տեղեկատվություն: Սակայն պետք է ի նկատի ունենալ, որ հավաքագրված տվյալները վիճակագրորեն ներկայացուցչական չեն ամբողջ հանրապետության համար, քանի որ հանրապետության 502 համայնքներից տվյալներ հավաքագրվել են միայն 68-ից: Այդուհանդերձ, հարցաթերթիկային հարցումների արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս ուրվագծել ընդհանուր միտումները և արտացոլում են հանրապետության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի ավելի քան 56%-ը տնօրինող համայնքներից ստացված տվյալներ:

Հարցաթերթիկային հարցումներն իրականացվել են երկու եղանակով՝ հարցաթերթիկների լրացում տեղում՝ ֆոկլուս-խումբ քննարկումներում ներգրավված համայնքների ներկայացուցիչների կողմից՝ դրանց ավարտին և առցանց հարցաթերթիկների լրացում: Առցանց հարցումների համար առանձնացվել են հանրապետության 10 մարզերի այն համայնքները, որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել ֆոկլուս-խումբ քննարկումներին և որոնք 2018 թվականի հունվարի դրությամբ՝ ըստ Տարածքային Կառավարման և Զարգացման Նախարարության կողմից հրապարակված տվյալների³ ունեցել են մարզի մակարդակով վարձակալության ենթակա արոտների միջինից բարձր ցուցանիշ:

Քանակական հարցումներն իրականացվել են ստանդարտացված հարցաթերթիկների միջոցով: Նկատի ունենալով յուրաքանչյուր թիրախային խմբի համար ուսումնասիրվող խնդիրների առանձնահատկությունները՝ պատրաստվել է ստանդարտացված հարցաթերթիկի երեք տարբերակ՝ (1) ՏԻՄ ղեկավարների


³<http://www.mtad.am/hy/ayl/>

կողմից առցանց լրացնելու համար, (2) ֆոկուս-խումբ քննարկումների ավարտին՝ ՏԻՄ ներկայացուցիչների ու մասնագետների կողմից լրացնելու համար և (3) ֆերմերների կողմից լրացնելու համար:

Հարցաթերթիկային հարցումներին ընդամենը մասնակցել են 225 ֆոկուս-խումբ քննարկումների մասնակիցներ 8 մարզերի 46 համայնքներից, այդ թվում նաև խոշորացված համայնքների մաս կազմող 54 բնակավայրերից:

Հարցաթերթիկները առցանց լրացնելու հարցումներ ընդամենը ուղարկվել են հանրապետության 10 մարզերի 73 համայնքների, որոնցից 24-ի դեպքում⁴ ստացվել են պատասխաններ: Տես՝ *Հավելված 1, Աղյուսակ 14*:

Քանակական հարցումների միջոցով հնարավոր է դարձել տեղեկատվություն ստանալ հանրապետության տարբեր մարզերում վարձակալության ենթակա համայնքային և պետական սեփականության արտադարյերի 13-91%-ը տնօրինող համայնքներից ու համայնքային և պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր արտադարյերի 15-84%-ը տնօրինող համայնքների ներկայացուցիչներից: Տես Պատկեր 1-ը ստորև:




Պատկեր 1. Ըստ մարզերի համայնքների ընդգրկվածությունը ուսումնասիրության մեջ՝ ըստ փաստացի առկա և վարձակալության ենթակա արտադարյերի տարածքների (առ 01.01.2018թ)

Ուսումնասիրության ընթացքում արտադարյերի առավել քիչ տարածք տնօրինող համայնքները եղել են Արմավիրի, Կոտայքի և Արարատի մարզերից, որտեղից հարցմանը մասնակցել են ընդհանուր արտադարյերի համապատասխանաբար՝ 15, 21 և 22 տոկոսը տնօրինող համայնքների ներկայացուցիչները:

⁴ Առցանց հարցաթերթ լրացրած համայնքներից երեքը մասնակցել են նաև ֆոկուս-խումբ քննարկումների և դրանց ներկայացուցիչները հարցաթերթ լրացրել են նաև ֆոկուս-խումբ քննարկումների ավարտին:

Հարկ է նաև նշել, որ հանրապետության գրեթե բոլոր մարզերում վարձակալության ենթակա արոտավայրերի տարածքները ավելի քիչ են մարզերի վարչական տարածքներում ընդգրկված արոտավայրերի ընդհանուր ծավալից: Տես Պատկեր 2: Առավել մեծ են տարբերությունները Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում, ինչը մի կողմից պայմանավորված է նրանով, որ արոտավայրերը սահմանամերձ են և անվտանգ չեն օգտագործման համար, իսկ մյուս կողմից խոսում է մարզերի համայնքներում քիչ անասնազխաքանակի և արոտավայրերի օգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների՝ ուստի նաև արոտավայրերի օգտագործման հարմարությունների բացակայության մասին, ինչի պատճառով արոտավայրերի վարձակալությունը իրատեսական չէ:



Պատկեր 2. Վարձակալության ենթակա և առկա արոտավայրերի հարաբերակցությունը(առ 01.01.2018թ)

Անհատական փորձագիտական հարցազրույցներ

Արոտների կառավարման ոլորտում որդեգրած պետական քաղաքականության կարևորության, դրա իրականացման դժվարությունների, ինչպես նաև ոլորտի զարգացման տեսլականի քննարկման նպատակով ազգային և մարզային մակարդակներում իրականացվել են փորձագիտական հարցազրույցներ: Հարցազրույցներին մասնակցել են ոլորտում ներգրավված մարզային և ազգային պետական կառավարման մարմինների, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ում մասնագիտական գործունեությունը առնչվում է արոտավայրերի և դրանց կառավարման հարցերին:

Բացի այդ, փորձագիտական հարցազրույցները, թույլ տվեցին նաև ազգային և մարզային մակարդակներում քննարկել և պարզաբանել փաստաթղթային ուսումնասիրության, հարցումների և ֆոկլուս-խումբ քննարկումների արդյունքում բաց մնացած հարցերը:

Ուսումնասիրության ընթացքում իրականացվել է 18 փորձագիտական հարցազրույց, որոնց ընթացքում կիրառվել է կիսաստանդարտացված հարցաթերթ: Հարցազրույցների մասնակիցների ցանկը և օգտագործված հարցաթերթը ներկայացված են *Հավելված 2-ում*:

4. Բնական կերհանդակների՝ արոտների և խոտհարքների դերն ու ներկա իրավիճակը

4.1. Բնական կերհանդակները

Հայաստանի հանրապետությունը լեռնային երկիր է: Այն զբաղեցնում է 29,8 հազար քառակուսի կիլոմետր տարածք և ծովի մակերևույթից միջինում գտնվում է 1700մ բարձրության վրա: Հանրապետության տարածքի 9,9%-ը ընկած է ծովի մակերևույթից մինչև 1000մ բարձրության վրա, 76,6%-ը՝ 1000-2500մ բարձրության վրա և 13,5%-ը՝ 2500մ-ից ավել բարձրության վրա:

Համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (ԱԳԿԿ) տվյալների՝ հանրապետության հողային ֆոնդի ավելի քան 68% (2 044 464,8 հա) գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր են, որոնց կեսից ավելին՝ 57%-ը կազմում են բնական կերհանդակները՝ արոտավայրերը և խոտհարքները: Տես Աղյուսակ 2:

Աղյուսակ 2. ՀՀ հողային ֆոնդը և արոտավայրերի ու խոտհարքների բաշխվածությունը ըստ սեփականության, 2018թ

	Ընդամենը, հա	Ընդամենը, %
Ընդ. գյուղատնտեսական նշանակության հողեր	2 044 464,8	100%
Վարելահողեր	445 564,5	22%
Բազմամյա տնկարկներ	35 348,3	2%
Խոտհարքներ, այդ թվում՝	121 040,1	6%
<i>Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող</i>	<i>66 467,2</i>	<i>55%</i>
<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>	<i>54 572,9</i>	<i>45%</i>
Արոտավայրեր, այդ թվում՝	1 051 536,5	51%
<i>Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող</i>	<i>1 020 160,7</i>	<i>97%</i>
<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>	<i>31 375,9</i>	<i>3%</i>
Այլ հողատեսքեր	390 975,3	19%

Աղբյուրը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կոմիտե, 2018թ.


Վերջին 10 տարիների ընթացքում նշված համամասնությունը գրեթե չի փոխվել, սակայն հարկ է նշել, որ 2008-2018թվականների ընթացքում մոտ 76 հազար հեկտարով կրճատվել են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը, իսկ

արոտավայրերը նույն ժամանակահատվածում կրճատվել են 65 հազար հեկտարով:

Ավելացնենք նաև, որ 1998-2005 թվականների ընթացքում հանրապետությունում փաստացի գրանցվել է գյուղատնտեսական նշանակության հողերի ավելացում, ինչը հիմնականում տեղի է ունեցել գյուղատնտեսական հողերի մաս կազմող «այլ հողատեսքերի» ավելացման հաշվին: Այսպես, 2001թ.-ին ընդունված Հողային Օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն, 2005թ.-ին գյուղատնտեսական նշանակության հողերի շարքին են դասվել նաև այլ հողատեսքերը, որոնք նախկինում գյուղատնտեսական հողատեսք չեն համարվել և դասված են եղել պահուստային՝ գյուղատնտեսության մեջ չօգտագործվող այլ անօգտագործելի հողերի շարքին: Բացի այդ 2005-2006 թվականների ընթացքում տեղի է ունեցել մեկ այլ վերափոխում՝ գյուղատնտեսական նշանակության հողատեսք համարվող «այլ հողատեսքերը» պակասել են 238,8 հազար հեկտարով, իսկ արոտները ավելացել են 239,9 հազար հեկտարով:

Վերջինիս հիմնական պատճառն այն է, որ քարքարոտ արոտները, որոնք նախկինում գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի շարքին էին դասված, դասվեցին արոտավայրերի շարքին: Հարկ է նաև նշել, որ հետագա տարիներին ՀՀ հողային ֆոնդում, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ, այդ թվում գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը պակասել են՝ անցել այլ նպատակային նշանակությունների կամ գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքերի շարքը: Ուստի, Աղյուսակ 2-ում ներկայացված արոտավայրերի որոշ մասը օբյեկտիվ պատճառներով օգտագործման համար պիտանի արոտավայր չի կարող հանդիսանալ: Համաձայն, որոշ գնահատականների արոտավայրերի միայն 30%-ն է արդյունավետ կերպով օգտագործվում (ԲՆ, 2014):

Թե արոտավայրերը, թե խոտհարքները հանրապետության տարածքում հավասարաչափ չեն բաշխված և դրանց գերակշիռ մասը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Լոռու և Սյունիքի մարզերին: Այս մարզերին են պատկանում հանրապետության արոտավայրերի 45%-ը (17%, 14% ու 14%-ը համապատասխանաբար) և խոտհարքների՝ 65%-ը (29%, 29% և 7% համապատասխանաբար): Բացի Երևան քաղաքից ամենաքիչ արոտավայրեր առկա են Արմավիրի (2%, 21 536հա) և Տավուշի (6%, 63 064հա) մարզերում, իսկ ամենաքիչ խոտհարքներ առկա են Արմավիրի (0,3% և 322հա) և Արարատի (2% և 2 688հա) մարզերում: Տես Պատկեր 3:




Աղբյուրը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կոմիտե, 2018թ.

Պատկեր 3. Արտոտավայրերի և խոտհարքների բաշխվածությունը ՀՀ մարզերում, 2018

Բնակլիմայական պայմաններից ելնելով՝ հանրապետությունում առանձնացնում են լադաֆտային 7 գոտիներ, որոնք փոխվում են ուղղաձիգ գոտիականությանը զուգընթաց: Տես Պատկեր 4: Նշված լանդշաֆտային գոտիներում արտոտավայրերը հիմնականում գտնվում են լեռնատափաստանային, լեռնանտառային, մերձալպյան և ալպյան գոտիներում և տարածվում են 1400-3500 մետր բարձրությունների վրա:

Արտոտավայրերն ու խոտհարքներն առավելապես օգտագործվում են անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների կողմից և հանդիսանում են կենդանիների կերի ապահովման հիմնական աղբյուր: Ներկայումս տարեկան արտադրված մսի ավելի քան 50%-ը, կաթի մոտ 70%-ը և բրդի գրեթե 100%-ը գոյանում է արտոտային կերի օգտագործման արդյունքում (ԲՆ, 2014):

Հանրապետությունում արտոտային շրջանը հիմնականում սկսվում է ապրիլի կեսերից և տևում է մինչև սեպտեմբեր-նոյեմբեր ամիսները: Նախնական շրջանում օգտագործվում են համայնքամերձ արտոտավայրերը, իսկ այնուհետև՝ եղանակային պայմաններին զուգընթաց սկսում են օգտագործվել հեռագնա արոտները: Շատ են դեպքերը, երբ կուտակված անասնակերի սղության պատճառով հատկապես փոքր անասնազվիաքանակ ունեցող տնտեսությունները շուտ են կենդանիներին հանում արածեցման՝ կենդանիներին տանելով հիմնականում իրենց սեփական վարելահողեր և խոտհարքներ: Նմանատիպ գործելակերպ կիրառվում է նաև աշնանը, երբ դաշտերում բերքահավաքից հետո անասնազվիաքանակը արոտ չի հասնում և արածում է անհատներին պատկանող հողատարածքներում:




Աղբյուրը՝ Հայրապետյան, Է.Մ.2000: Քարտեզը՝ <https://maphub.net/tigranserobyen/hayastani-landshaftayin-gotiner>

Պատկեր 4. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Կախված համայնքում առանձին տնային տնտեսությունների ունեցած անասնազվիաքանակի մեծությունից, տեսակից (կթու և ոչ-կթու), ինչպես նաև արոտավայրերում անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունից՝ հեռագնա և համայնքամերձ արոտավայրերը տարբեր ինտենսիվությամբ են օգտագործվում: Օրինակ, ենթակառուցվածքների առկայության դեպքում՝ մեծ անասնազվիաքանակ ունեցող տնային տնտեսություններին պատկանող անասնազվիաքանակը գրեթե միշտ գնում է հեռագնա արոտավայր, իսկ փոքր անասնազվիաքանակ ունեցող տնային տնտեսություններին պատկանող կթու անասունները հիմնականում հեռագնա արոտավայր չեն գնում կամ գնում են և նույն օրը հետ են վերադառնում: Փոքր անասնազվիաքանակ ունեցող տնային

տնտեսությունների դեպքում, հաճախ հեռագնա արտավայր գնում և այնտեղ մնում է միայն սրանց պատկանող չկթվող անասնազխաքանակը:

Հանրապետության տարածքում տարբեր չափի անասնազխաքանակ ունեցող տնտեսությունների կողմից արտավայրերի օգտագործման առավել տարածված սխեման ներկայացված է Պատկեր 5-ում:



Պատկեր 5. ՀՀ-ում տարածված արոտօգտագործման սխեման տարվա ընթացքում

Բնական կերհանդակների բուսածածկը հիմնականում բաղկացած է վեգետատիվ ձևով վերականգնվող բույսերից և խմբավորվում են չորս տնտեսական-բուսաբանական խմբերում (Թովմասյան, 2015)՝

1. **Դաշտավուկազգիներ**, որոնք բնության մեջ կերային նշանակությամբ ամենատարածված բուսատեսակներն են: Չոր և տափաստանային գետիներում զբաղեցնում են արոտային բուսածածկի ավելի քան 70%-ը:
2. **Բակլազգիներ**, որոնք տարածված են բոլոր բնական գոտիներում և ապահովում են մարգատափաստանային, անտառային, տափաստանային և ենթալպյան գոտիների բուսածածկի 15-20%-ը:
3. **Բոշխեր**, որոնք տարածված են բոլոր բնական գոտիներում՝ կիսաանապատայինից մինչև բարձր լեռնային՝ ալպյան գոտիներ:
4. **Տարախոտեր**, որոնք իրենց տարածվածությամբ և առատությամբ կազմում են բոլոր տիպի բնական կերհանդակների բուսածածկի հիմնական տնտեսական խումբը:

Հանրապետության բնական կերհանդակներում՝ արոտավայրերում և խոտհարքներում տարածված են նաև կերային արժեք չներկայացնող մոլախոտեր, որոնք բացի նրանից, որ իրենց գոյությամբ վատացնում են խոտի և արոտականաչի որակը, նաև կարող են լինել արածող կենդանիների համար վնասակար և թունավոր: (Թովմասյան, 2015)

Ավելի մանրամասն քանակական տվյալներ յուրաքանչյուր տնտեսական-բուսաբանական խմբի տարածվածության և տարեկան միջին բերքատվության վերաբերյալ հասանելի չեն:

Հանրապետության անկախացումից հետո իրականացված հողային բարեփոխումների արդյունքում՝ նախկին կոլեկտիվ և պետական տնտեսություններին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ բացի արոտավայրերից մասնավորեցվեցին և այսօր արոտավայրերի միայն 3%-ն է, որ հանդիսանում է մասնավոր սեփականություն (տես Աղյուսակ 2): Արոտավայրերի 97%-ը պատկանում և տնօրինվում է պետության կամ համայնքների կողմից և իրավական տեսանկյունից արոտավայրերը անասնապահներին հասանելի են վարձակալության և արոտօգտագործման պայմանագրերի միջոցով:

4.2. Բնական կերհանդակների նշանակությունը ՀՀ տնտեսությունում

Ինչպես ցանկացած ռեսուրս՝ բնական կերհանդակներն ևս ունեն իրենց տնտեսական արժեքը, ինչը սակայն քիչ ուսումնասիրված ոլորտ է ՀՀ-ում և մինչ այժմ հստակ գնահատված չէ հանրապետության բնական կերհանդակների՝ արոտավայրերի ու խոտհարքների էկոլոգիա-տնտեսական արժեքը: Բացի այդ, հստակ ուսումնասիրված և ամբողջությամբ գնահատված չէ նաև բնական կերհանդակների էկոլոգիա-տնտեսական վիճակը: Հանրապետությունում բացակայում են ամբողջական տվյալներ տարբեր մարզերի արոտավայրերում առկա ենթակառուցվածքների, դրանց վիճակի, բուսական և կենդանական աշխարհի կազմի և տնտեսական արժեքի վերաբերյալ:

Ավանդաբար հասարակության լայն շերտերի կողմից արոտավայրերն ու խոտհարքները բացառապես ընկալվում են որպես ընտանի կենդանիների համար կերի աղբյուր և անտեսվում է դրանց նշանակությունը տնտեսության այլ ճյուղերի համար: Այդուհանդերձ, բնական կերհանդակների դերը նշանակալից է նաև ՀՀ տնտեսության այլ ճյուղերի համար, ուստի ստորև կքննարկենք դրանցից հիմնականները:

Հայաստանյան արոտավայրերը կարող են ծառայել որպես կենսագազի ստացման աղբյուր՝ արածեցումից հետո այստեղ կուտակվող կենդանական արտանետումները մեթան գազի աղբյուր են, իսկ բնական պայմաններում աճող որոշ բուսատեսակներ (քաղցր սորգո, եղեգ, ծղոտ) շարժիչային վառելիքի խառնուրդ հանդիսացող կենսաէթանոլի⁵ աղբյուր են: Էներգետիկ տեսանկյունից բնական կերհանդակների մեկ այլ՝ ավելի պարզ/պրիմիտիվ նշանակությունը այստեղ աճող կենսագանգվածի՝ տարբեր խոտերի օգտագործումն է այրելու միջոցով տաքություն ստանալու նպատակով: Այդուհանդերձ, հանրապետությունում այս աղբյուրից ստացվող էներգիայի վերաբերյալ ամբողջական քանակական տվյալներ առկա չեն և հնարավոր չէ գնահատել ՀՀ էներգետիկ կառուցվածքում այս աղբյուրի իրական արժեքը և նշանակությունը:

Էական է բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների ներուժը և նշանակությունը հանգստի կազմակերպման և զբոսաշրջության համար: Ունենալով գեղագիտական նշանակություն՝ բնական կերհանդակները գրավիչ զբոսաշրջային միջավայր են ողջ աշխարհում: Ներկայումս Հայաստանում բնական կերհանդակները հանգստի կազմակերպման գրավիչ միջավայր են միայն տեղացի բնակչության համար, ովքեր օգտվում են բնական կերհանդակներից հիմնականում ամռանը կարճատև ժամանակահատվածով, երբ որոշում են մի քանի ժամ անցկացնել բնության գրկում: Այս դեպքում արոտավայրերը հատկապես գրավիչ են, եթե դրանք հեռու են բնակավայրերից, մոտ են բնության կամ պատմամշակութային հուշարձաններին:

Հայաստան այցելող զբոսաշրջիկներին առաջարկվող փաթեթները բավական միատար են և հիմնականում ներառում են այցելություններ տարբեր պատմամշակութային հուշարձաններ, վայրեր: Բնական կերհանդակների և մասնավորապես արոտավայրերի զբոսաշրջային ներուժը դեռևս աննկատ է մնացել զբոսաշրջային ապրանք մշակողների կողմից և չկա զբոսաշրջիկների հոսք դեպի այս վայրեր: Այդուհանդերձ, զբոսաշրջային շուկայի զարգացմանը զուգընթաց անպայման տեղի կունենա նաև առաջարկվող ապրանքների դիվերսիֆիկացում, որտեղ անշուշտ գրավիչ տարբերակներ կլինեն Էկոտուրիզմը և գյուղական տուրիզմը՝ ներառելով ամառային արոտները՝ որպես հանգստի, բնության հետ ներդաշնակ շփման և գյուղական կյանքին մոտիկից ծանոթանալու վայր:

⁵Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, <https://bit.ly/2UIBlkG>

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, բնական կերհանդակներից՝ արոտավայրերից և խոտհարքներից մեծապես կախված է գյուղատնտեսության ոլորտը և հատկապես՝ անասնապահությունը:

Անասնապահությունը հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության հիմնական ճյուղերից մեկը՝ վերջին տաս տարիների ընթացքում ապահովելով համախառն գյուղատնտեսական արտադրանքի մոտ 40%-ը: Ընդ որում, չնայած որ 2012-2017 թվականների ընթացքում գյուղատնտեսության համախառն արտադրանքը բացարձակ թվերով տատանվել է՝ գրանցելով վերելք և անկում, անասնաբուծությունից ստացված համախառն արտադրանքը 2012 թվականից սկսած կայուն աճել է: Սրա հետ մեկտեղ, աճել է նաև անասնաբուծական արտադրանքի կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 2013-2017թթ. ընթացքում 38%-ից հասնելով 48%: Տես Աղյուսակ 3:

Աղյուսակ 3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքն, մլրդ. դրամ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը ՀՀ-ում	634	628	552	637	795	842	919	983	945	879	908
<i>Բուսաբուծություն</i>	430	406	347	393	465	516	573	595	550	487	469
% ՀՀ-ում	68%	65%	63%	62%	59%	61%	62%	61%	58%	55%	52%
<i>Անասնաբուծություն</i>	204	222	205	244	330	326	346	388	395	399	439
% ՀՀ-ում	32%	35%	37%	38%	41%	39%	38%	39%	42%	45%	48%
<i>այդ թվում՝</i>											
<i>% ընտանեկան տնտեսությունների կողմից</i>	91%	92%	92%	92%	93%	91%	93%	93%	94%	94%	94%
<i>% առևտրային կազմակերպությունների կողմից</i>	9%	8%	8%	8%	7%	9%	7%	7%	6%	6%	6%

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ/ԱՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք

Ավելացնենք նաև, որ անասնաբուծությունից ստացված համախառն արտադրանքի 90%-ից ավելին արտադրվում է ընտանեկան գյուղացիական տնտեսությունների կողմից, ում պատկանում է նաև գյուղատնտեսական կենդանիների գերակշիռ մասը: Այսպես, 2019 թվականի հունվարի տվյալներով, բոլոր գյուղատնտեսական կենդանիների գրեթե 99%-ը գտնվում է ընտանեկան գյուղացիական տնտեսություններում: Բացառություն են կազմում խոզերը և թռչունները, որոնց համապատասխանաբար 89,2 և 51,9 տոկոսն են գտնվում ընտանեկան գյուղացիական տնտեսություններում (ԱՎԿ, 2019): Հետաքրքրական է նաև նշել, որ անասնապահությամբ զբաղվում են ավելի քիչ ընտանեկան գյուղացիական տնտեսություններ, քան բուսաբուծությամբ: Ընտանեկան գյուղացիական տնտեսությունների 4%-ը ներգրավված է միայն

անասնապահության մեջ, 54%-ը զբաղվում է թե անասնապահությամբ, թե բուսաբուծությամբ, իսկ 42%-ը զբաղվում է միայն բուսաբուծությամբ:

Սրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ընտանեկան գյուղացիական տնտեսությունները թե իրենց կողմից մշակվող հողատարածքների, թե ունեցած անասնազվաքանակի տեսանկյունից բավական փոքր են և հիմնականում բնամթերային տնտեսություն են վարում: Օրինակ, համաձայն գյուղատնտեսության համատարած հաշվառման տվյալների (ԱՎԾ, 2016)՝ 1-ից 4 կով ունեցող տնտեսությունները կազմում են հանրապետությունում կով ունեցող տնտեսությունների 83%-ը, իսկ 20 և ավել ԽԵԿ ունեցող տնտեսությունները՝ 5%-ը, 50 և ավել ոչխար ունեցող տնտեսությունները՝ 8%-ը:

Աղյուսակ 4. Տնտեսություններին պատկանող որոշ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը

Կենդանի	1-ից 2 հատ	3-4 հատ	5-9 հատ	10-19 հատ	20 և ավել
ԽԵԿ	25%	28%	30%	12%	5%
Կով	61%	22%	12%	4%	1%
Ոչխար	15%		28%	30%	26%
Այծ	59%		25%	11%	4%
Զի	98%		2%	0,3%	0,4%

Աղբյուր՝ ԳՀՀ, ԱՎԾ, 2016

Միևնույն ժամանակ, ըստ ԱՎԿ-ի, խոշոր եղջերավոր կենդանիների 27% գտնվում է մինչև 5 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի ունեցող տնտեսություններում, կովերի 56%-ը՝ մինչև 5 գլուխ կով ունեցող տնտեսություններում, ոչխարների 12%-ը՝ մինչև 10 գլուխ ոչխար ունեցող տնտեսություններում և այծերի 56%-ը՝ մինչև 10 գլուխ այծ ունեցող տնտեսություններում:

Աղյուսակ 5. Որոշ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը ըստ տնտեսությունների չափի

Կենդանի	Տնտեսություններ		
	մինչև 5 գլուխ	մինչև 10 գլուխ	մինչև 20 գլուխ
ԽԵԿ	27%	53%	-
Կով	56%	76%	-
Ոչխար	3%	12%	28%
Այծ	32%	56%	75%

Աղբյուր՝ ԱՎԿ-ի պարզաբանում առ ապրիլ 2019թ

Քսան և ավել ԽԵԿ ունեցող տնտեսությունների գերակշիռ մասը գտնվում են Շիրակի (16,8%), Արագածոտնի (12,3%), Սյունիքի (12,3%) և Գեղարքունիքի (12,2%) մարզերում: 20 և ավել կով ունեցող տնտեսությունների գերակշիռ մասը ևս գտնվում են այս մարզերում՝ կազմելով հանրապետությունում 20 և ավել կով

ունեցող տնտեսությունների 56,1%-ը: Հիշեցնենք նաև, որ այս մարզերում են գտնվում հանրապետության արոտավայրերի 54%-ը: Ոչխարի խոշոր գլխաքանակ (50 և ավել) ունեցող տնտեսությունները կենտրոնացած են Արարատի, Սյունիքի և Արմավիրի մարզերում (ԱՎԾ, 2016):


Նշենք նաև, որ Հայաստանում վարվող անասնապահությունը շատ չի տարբերվում ըստ տարածաշրջանների և բոլոր մարզերը, այդ թվում նաև մայրաքաղաք Երևանը ներգրավված են անասնապահության մեջ: Չկան գյուղատնտեսական կենդանիների տեսակներ, որոնք որևէ մարզում առկա չեն (ԱՎԿ, 2019):

Քանի որ, ինչպես արդեն նշվեց, արոտավայրերից օգտվող բոլոր գյուղատնտեսական կենդանիների գրեթե 99%-ը գտնվում է ընտանեկան գյուղացիական տնտեսություններում, որոնց գերակշիռ մասը բնամթերային տնտեսություն են վարում, այսինքն՝ արտադրում են սեփական սպառման համար, բնականաբար, որպես կաթի և կաթնամթերքի հիմնական աղբյուր տնտեսությունները գերադասում են ունենալ կթու կով: Ուստի բոլոր մարզերում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների գերակշիռ մասը ներգրավված է տավարաբուծության մեջ և համայնքներում առկա հիմնական անասնագլխաքանակը ԽԵԿ-երն են: Մեր կողմից իրականացված հարցմանը մասնակցած համայնքների 89%-ը, որպես իրենց համայնքում անասնաբուծության ամենատարածված ճյուղ՝ 1-ինը նշել են հենց տավարաբուծությունը:

Որպես, անասնաբուծության ամենատարածված 2-րդ ճյուղ համայնքների 67%-ը նշել են ոչխարաբուծությունը: Չնայած ոչխարաբուծության համար հանրապետությունում առկա են նպաստավոր բնակլիմայական պայմաններ և ի դեմս Իրանի Իսլամական հանրապետության և այլ մուսուլմանական երկրների կողմից կա կենդանի ոչխարի և դրա մսի մեծ պահանջարկ, այնուամենայնիվ, անասնաբուծության այս ճյուղը ավելի քիչ է զարգացած: Բացի գոյություն ունեցող տեխնիկական դժվարություններից, այս ճյուղի պակաս զարգացվածության հիմնական պատճառը նաև այն է, որ տավարաբուծության համեմատ, ոչխարաբուծությունը ավելի մեծ ուշադրություն և ավելի շատ ժամանակ է պահանջում տնտեսվարողից:

Կարևորությամբ երրորդ ճյուղը խոզաբուծությունն ու մեղվապահությունն են՝ համայնքների համապատասխանաբար 17 և 12 տոկոսները ներառել են սրանք իրենց համայնքում անասնաբուծության ամենատարածված երեք ճյուղերի մեջ: Այծաբուծությունը շատ թույլ է զարգացած և չնայած հատկապես լեռնային գոտիներում դրահեռանկարային լինելուն, այն հիմնականում զարգացած է միայն Վայոց ձորի մարզում:

Դիտարկելով կենդանիների բաշխվածությունը ըստ մարզերի՝ երևում է մարզերի հստակ մասնագիտացումը (Պատկեր 6): Այսպես, խոշոր եղջերավոր կենդանիների գերակշիռ մասը գտնվում է Գեղարքունիքի մարզում (18%, 2019թ), որին հաջորդում է Շիրակի մարզը (15%, 2019թ): Հանրապետությունում եղած ոչխարների և ձիերի գլխաքանակի մոտ 1/5-րդը գտնվում է Սյունիքի մարզում, իսկ Վայոց ձորում գտնվում են հանրապետության այծերի գլխաքանակի 22%: Զարմանալիորեն, Արմավիրի մարզում, որը ավանդաբար համարվում է բուսաբուծական շրջան, գտնվում են թռչունների, ոչխարների և խոզերի համապատասխանաբար 27, 16 և 13 տոկոսը:



Պատկեր 6. Անասնազրկաքանակի բաշխվածությունը ըստ մարզերի, հունվար 2019 թ., ԱՎԿ

2019 թվականի հունվարի դրությամբ հանրապետությունում հաշվառված են 572 հազար գլուխ ԽԵԿ, որոնցից 254 հազարը՝ կովեր, 638 հազար ոչխարներ և այծեր, 11 հազար ձի (Աղյուսակ 6): Պետք է նշել նաև, որ բարենպաստ շուկայական, արտադրական և կազմակերպչական պայմանների առկայության դեպքում եղած անասնազրկաքանակը հնարավոր է մի քանի անգամ ավելացնել:


Աղյուսակ 6. Անասնագլխաքանակի փոփոխությունը 1985-2018թթ. ընթացքում տարեվերջին, 1000 գլուխ

	1985	1995	2005	2015	2018	2017/1985
ԽԵԿ, հազ գլուխ	860,7	507,5	592,1	701,5	571,8	-34%
այդ թվում կով	319,3	276,8	297,1	318,6	253,9	-20%
Ոչխար և այծ	1 902,8	603,7	591,6	778,1	638,3	-66%

Աղբյուրը՝ ԱՎԾ/ԱՎԿ, Վիճակագրական տարեգրքեր


Հարկ է նաև նշել, որ տարբեր մարզերի ունեցած արոտավայրերի և անասնագլխաքանակի (պայմանական խոշորի) քանակական համեմատությունը վկայում է, որ բոլոր մարզերը, բացի Արմավիրից և Երևան քաղաքից, չեն օգտագործում իրենց արոտավայրերի ողջ պոտենցիալը, այսինքն՝ ունեցած արոտավայրերը տարածքային տեսանկյունից 1,2-ից 4,5 անգամ ավելի շատ են, քան անհրաժեշտ է եղած անասնագլխաքանակի կերապահովման համար (ԱՎԿ, 2019; ԱԳԿԿ, 2018): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս հաշվարկում հաշվի չեն առնված դեգրադացված կամ ենթակառուցվածքներ չունեցող արոտավայրերի տարածքները և դրանց կողմից առաջադրված սահմանափակումները:

Արոտավայրերից օգտվող հիմնական անասնագլխաքանակի փոփոխությունը ժամանակի ընթացքում ներկայացված է Պատկեր 7-ում: 2010-2015թթ. ընթացքում անասնագլխաքանակը, բացի այծերից և ձիերից, շարունակաբար աճել է, սակայն, 2015-2017թթ. ընթացքում բոլոր կենդանիների հաշվով գլխաքանակը նվազել է նախորդ տարվա համեմատ: 2018 թվականին կովերի և ոչխարներ գլխաքանակը շարունակել է նվազել: Հարկ է նշել, որ հաճախ անասնագլխաքանակի փոփոխությունը ուղղակիորեն կախված է ստացվող մթերքի վաճառքի գներից և անասնակերի գներից: Հատկանշական է նաև, որ անասնագլխաքանակի փոփոխությունը համադրելի է ստացված անասնապահական մթերքների ծավալների հետ: Այսինքն, մթերքի ծավալի փոփոխությունը կախված է հենց գլխաքանակի փոփոխությունից:



Պատկեր 7. Արտադրարներից օգտվող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %

Օրինակի համար դիտարկենք կովերի գլխաքանակի փոփոխությունը 2008-2017թթ. ընթացքում՝ համադրելով այն արտադրված կաթի ծավալի և գների հետ: Պատկեր 8-ից երևում է, որ 2008-2016թթ. ընթացքում արտադրված կաթի ծավալի փոփոխությունը ուղղակի կախված է եղել գլխաքանակի փոփոխությունից: Այս միտումը սկսել է բարելավվել 2014 թվականից սկսած, երբ կենդանիների գլխաքանակի քիչ փոփոխությունը բերել է արտադրված կաթի ծավալի համեմատաբար մեծ փոփոխության: Այսինքն, 2014 թվականից սկսած որոշ գլխաքանակ փոխարինվել է ավելի բարձր արտադրողականություն ունեցող գլխաքանակով: Ավելին, 2017 թվականին առաջին անգամ արձանագրվել է բացասական միտում, երբ գլխաքանակի նվազման պայմաններում գրանցվել է արտադրված կաթի ծավալի աճ: Այնուամենայնիվ, նշենք, որ 2017 թվականի ցուցանիշը ԱՎԿ-ի կողմից հրապարակված վերջին ցուցանիշն է և այն կարող է դեռ փոփոխվել:



Պատկեր 8. Կաթի և կովերի գլխաքանակի փոփոխությունը 2008-2017թթ, %-ով նախորդ տարվա նկատմամբ

Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների կերապահովման խնդիրը հիմնականում լուծվում է բնական կերհանդակներում, իսկ սեզոնից դուրս՝ միամյա և բազմամյա խոտերի, համակցված կերերի միջոցով: Որպես անասնակեր օգտագործվող բոլոր տեսակի կերերի տեղական արտադրության և ներմուծման վերաբերյալ ամբողջական տվյալներ հասանելի չեն: Տեղական արտադրության վերաբերյալ ցուցանիշներ առկա են միայն եզիպտացորենի, կերային արմատապտուղների, միամյա և բազմամյա խոտերի և բնական խոտհարքների չոր խոտի տարեկան ծավալների վերաբերյալ (Պատկեր 9): Իսկ անասնակերի ներմուծման վերաբերյալ հասանելի ցուցանիշները (Աղյուսակ 7) թույլ չեն տալիս դասակարգել ներմուծված և արտահանված կերերը ըստ տեսակների և նշանակության:

Այնուամենայնիվ, փորձագիտական գնահատականի համաձայն, Հայաստան ներմուծվում է միայն համակցված կեր, որի տեղական արտադրությունը, ըստ Գյուղատնտեսության նախարարության գնահատականի, տարեկան չի գերազանցում 20 000-30 000 տոննան: Ի դեպ, համակցված կերը միակ անասնակերն է, որն այսօր արտադրվում է մասնագիտացված ընկերությունների և անհատների կողմից: Այլ տեսակների անասնակերի տեղական արտադրությունն իրականացվում է շատ հախուռն և անկազմակերպ՝ տարբեր տնտեսությունների կողմից ըստ իրենց ունեցած հնարավորությունների և պահանջի:

Աղյուսակ 7. Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող ապրանքների ներմուծում ՀՀ, տոննա⁶

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Ներմուծում	6 293	7 565	7 256	8 562	11 553	13 116	12 790	11 780	12 384	12 022	13 379
Արտահանում	10	11	17	19	22	14	15	5	11	45	1
Հաշվեկշիռ	6 283	7 554	7 239	8 543	11 531	13 102	12 775	11 775	12 373	11 977	13 378


Աղբյուրը՝ ICT Trade Map տվյալների շտեմարան

Համաձայն ԱՎԿ-ի տվյալների՝ 2017 թվականին կերային մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 76,3 հա, որտեղ արտադրվել են 5 500տ եզիպտացորեն, 13 700տ կերային արմատապտուղներ և 975,6 հազար տոննա խոտ և կանաչ կեր: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հանրապետությունում առկա են բավականաչափ բնական ռեսուրսներ՝ ընդլայնելու կերային մշակաբույսերի արտադրությունը: Համեմատության կարգով դիտարկենք Պատկեր 9-ը, որտեղ

⁶ Ցուցանիշը ներառում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի 2309 90 ծածկագրի տակ ներառված Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերքը, բացառությամբ՝ մանրածախ վաճառքի համար նախատեսված շների կամ կատուների կերի: Այլ ավելի մանրամասն տվյալներ հասանելի չեն:

բերված է Հայաստանում կերային մշակաբույսերի արտադրման ծավալները 1985 թվականից սկսած:

Ինչպես երևում է՝ ՀՀ անկախացումից և գյուղատնտեսության արտադրության միջոցների մասնավորեցումից հետո զգալի փոփոխություններ են տեղի ունեցել կերային մշակաբույսերի թե արտադրության ծավալում, թե արտադրության կառուցվածքում: Այսպես, եթե մինչև 1990 թվականը, բնական խոտհարքների խոտի հետ մեկտեղ հանրապետությունում արտադրվում էին նաև զգալի քանակի եգիպտացորեն, միամյա և բազմամյա խոտեր, կերային արմատապտուղներ, ապա 1990 թվականից սկսած գերակշռում է բնական խոտհարքների խոտը և բազմամյա խոտերը: Ավելին, 2000 թվականից կերային մշակաբույսերի արտադրության ծավալներում նկատվող աճը տեղի է ունեցել բացառապես բնական խոտհարքների խոտի ավելացման հաշվին, այսինքն անասնակերի կառուցվածքում որակական փոփոխություն տեղի չի ունեցել:



Պատկեր 9. Կերային մշակաբույսերի արտադրությունը ՀՀ ներկա տարածքում 1985-2017թթ ընթացքում, 1000տ

Կենդանիների լիարժեք կերակրում ապահովելու տեսանկյունից կարևոր է ապահովել դրանց կերաբաժնում հյութալի (սիլոս, արմատապտուղներ) և համակցված կերեր, ինչն անմիջական ազդեցություն ունի կենդանիների մթերատվության վրա: Ընդ որում, քանի որ տարբեր կերեր տարբեր կերպ են ազդում մթերատվության վրա, ապա կենդանիների կերակրումը տարվա ընթացքում պետք է լինի տարբեր: Սակայն, ունենալով կերային մշակաբույսերի արտադրության նման կառուցվածք և անասնագլխաքանակի համեմատ անասնակերի ոչ բավարար ներկրումներ, պարզ է դառնում, որ հանրապետությունում անասնագլխաքանակը լիարժեք ապահովված չէ կերով, ինչի հետևանքով ընկնում է կաթնատվությունը և կաթի որակը:

Օրինակի համար, եթե դիտարկենք 1985 և 2017 թվականներին հաշվառված կովերի, ոչխարների և այծերի գլխաքանակը՝ վերածելով այն պայմանական խոշորի և համեմատենք նույն ժամանակաշրջանում արտադրված անասնակերի հետ (առանց համակցված կերերի), ապա կստանանք, որ օրինակ՝ պայմանական 1 խոշորին 2017թ.-ին տարեկան բաժին է ընկել 0,017կգ եգիպտացորեն (0,022 պ.կ.մ.), իսկ 1985թ.-ին՝ 0,803կգ (1,076 պ.կ.մ.): Այսինքն, ներկա պայմաններում 1 պայմանական խոշորին բաժին է ընկնում 47 անգամ ավելի քիչ եգիպտացորեն, քան նախկինում:

Ստորև աղյուսակում ներկայացված է արոտավայրերից հիմնականում օգտվող անասնագլխաքանակի համար (1 պայմանական խոշորի հաշվով) որոշ անասնակերի տեսակների առկայության համեմատությունը 2017 և 1985 թվականներին:

Աղյուսակ 8. Որոշ տեսակի անասնակերի առկայությունը մեկ պայմանական խոշորի հաշվով 1985 և 2017 թվականներին

Թվական	Եգիպտացորեն՝ սիլոսի և կանաչ կերի համար	Կերային արմատապտուղներ	Բազմամյա խոտերի չոր խոտ	Միամյա խոտերի չոր խոտ	Բնական խոտհարքների չոր խոտ
2017	0,017	0,041	1,108	0,061	1,754
1985	0,803	0,251	0,368	0,911	0,798

Աղբյուրը՝ ԱՎԾ, Վիճակագրական տարեգրքեր, սեփական հաշվարկներ

Ինչպես արդեն նշվել էր, հանրապետության ողջ տարածքում անասնաբուծական արտադրանքի գերակշիռ մասը արտադրվում է հենց արոտային շրջանում, ուստի արոտավայրը հանդիսանում է մատչելի կերապահովման միջոց, որի համար գանձվում է (կամ չի գանձվում) արոտավայրի օգտագործման վարձավճար:

Գյուղատնտեսական կենդանիների այլ հիմնական կերերի գները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Գյուղատնտեսական կենդանիների հիմնական կերատեսակների գները, դրամ/կգ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Համակցված կեր	98	84	89	110	127	127	159	131	133	132	123
Միամյա խոտեր	32	29	27	28	28	42	50	54	48	35	45
Բազմամյա խոտեր	34	35	32	36	42	67	70	62	53	40	50

Աղբյուրը՝ ԱՎԾ/ԱՎԿ, Գներ և Սակագներ

4.3. Բնական կերհանդակների բնապահպանական նշանակությունը

Ինչպես արդեն նշվել է, արոտավայրերն ու խոտհարքները յուրահատուկ բնական էկոհամակարգեր են և բացի գյուղատնտեսական նշանակությունից ունեն նաև բնապահպանական նշանակություն, մասնավորապես դրանք՝

- բնական միջավայր են տարբեր կենդանիների, բուսատեսակների և միկրոօրգանիզմների համար. ապահովելով կենսաբազմազանության կայուն զարգացում՝ պահպանում են մշակաբույսերի վայրի ցեղակիցների գենետիկ ռեսուրսները,
- բացառում են հողի էրոզիան, մեղմում են սողանքային երևույթները, հեղեղումները և երաշտը, կարգավորում են միկրոկլիման,
- բնության մեջ ապահովում են սննդարար նյութերի տեղափոխումը,
- ապահովում են փոշոտում այգիների և ցանովի մշակաբույսերի համար, կարգավորում են գյուղատնտեսական վնասատուների տարածումը,
- հանդիսանում են ածխածնի և այլ ջերմոցային գազերի բնական պահեստարան:

Բնական կերհանդակները կենսաբազմազանության անգնահատելի աղբյուր են: Հայաստանյան բնական կերհանդակներում և հատկապես արոտավայրերում աճում են դեղաբույսեր, ուտելի խոտաբույսեր և սնկեր, մեղրատու, էթերայուղային և ներկատու բույսեր, այստեղ են բնակվում նաև բազմաթիվ կենդանիներ՝ թռչուններ, միջատներ (թիթեռներ, մեղուներ), կրծողներ, սողուններ և որդեր: Այս կենսաբազմազանության դերը կարևոր է ոչ միայն արոտավայրի՝ որպես էկոհամակարգ գոյության համար, այլև իր ազդեցությունն է թողնում արոտավայրի հետ ուղղակի կապ չունեցող այլ համակարգերի բնականոն կենսագործունեության վրա:

Ըստ Բնապահպանության նախարարության (2015)՝ ՀՀ տարածքը պատկանում է տարբեր մշակաբույսերի, օրինակ՝ ցորենի, ոլոռի, ոսպի, խաղողի առաջացման Առաջավոր Ասիական կենտրոնին: Այստեղ առկա է մշակաբույսերի վայրի ցեղակիցների հարուստ գենոֆոնդ, որը գենետիկական նյութի աղբյուր է հանդիսանում և օգտագործվում է բուժիչ, երաշտադիմացկուն, ցրտադիմացկուն և հարմարվողականության այլ հատկանիշներով օժտված նոր սորտերի ստացման համար:

Արոտավայրերը նաև կարգավորում են բնության մեջ ջրերի հոսքը և ապահովում են դրանց մաքրությունը: Հողի մակերևույթից ջրերի արագ հոսքը առաջ է բերում բազում խնդիրներ՝ ջրհեղեղ, երաշտ, ինչպես նաև հողերի էրոզիա: Արոտավայրերը, կախված հողի տեսակից (կառուցվածքից), այստեղ աճող

բուսատեսակներից, իրենց մեջ ավելի շատ ջուր են կլանում և պահպանում, քան որևէ այլ տեսակի գյուղատնտեսական հողատեսք: Բացի այդ, ունենալով խիտ արմատային համակարգ՝ արոտավայրերը կանխում են տարբեր աղտոտող նյութերի (ծանր մետաղներ, մեծ քանակի ազոտ, ֆոսֆոր և այլն) ներթափանցումը ստորերկրյա ջրեր և հողից սննդանյութերի հոսքը: (Bengtsson, 2019, ETC/BD, 2011, Jankowska-Huflejt, 2006)

Մեծ է արոտավայրերի նշանակությունը կլիմայի գլոբալ փոփոխության մեղմացման հարցում: Արոտավայրերը, հանդիսանալով ածխածնի բնական պահեստարան, նվազեցնում են մթնոլորտում ածխաթթու գազի մակարդակը: Ընդ որում, ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գնահատականների, ողջ աշխարհում արոտավայրերում կուտակված ածխածինը մոտ 50%-ով ավել է, քան համաշխարհային ածխածնի պաշարը անտառներում (FAO, 2010):

Միևնույն ժամանակ արոտավայրերի՝ ածխածին պահեստավորելու կարողությունը մեծապես կախված է դրա ճիշտ կառավարման աստիճանից: Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ արոտավայրերի կառավարման բարելավման տարբեր միջոցառումների արդյունքում միջինում տարեկան 1 հեկտարի հաշվով կարող է պահեստավորել մոտ 540կգ ածխածին (Conant, 2001):

4.4. Մարդածին գործոնների և կլիմայի փոփոխության ազդեցությունը բնական կերհանդակների էկոլոգիա-տնտեսական վիճակի վրա

Համաձայն ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Հայաստանի 2014 թվականի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանում բնական կերհանդակների կենսաբանական և տնտեսական վիճակը հեռու է բավարար լինելուց: Ըստ իրականացված ուսումնասիրությունների՝ հանրապետության արոտավայրերի շուրջ 57%-ը դեգրադացված են՝ հողատարված, ոտնահարված, կազմալուծված: Ավելին՝ հանրապետությունում առկա են մոտ 150 հազար հեկտար բնական կերհանդակներ, որոնք ենթակա չեն օգտագործման:

Կտրտված ռելիեֆի, թեք լանջերի և այլ բնական պայմաններից ելնելով Հայաստանյան բնական կերհանդակները մշտապես գտնվել են դեգրադացման վտանգի տակ: Այնուամենայնիվ, հանրապետության անկախացումից հետո ստեղծված անկայուն սոցիալ-տնտեսական վիճակը խիստ բացասաբար անդրադարձավ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների վրա, քանի որ վերջիններիս վրա ավելի ինտենսիվ դարձան մարդածին գործոնների

ներագդեցությունը: Կառավարման մարմինների ինստիտուցիոնալ թույլ կարողությունների և երկրում գոյություն ունեցող աղքատության պայմաններում լայն տարածում ստացան բնական ռեսուրսների ապօրինի շահագործումը և գերօգտագործումը, աստիճանաբար քայքայվեցին արոսօգտագործումը սպասարկող ենթակառուցվածքները, որոնք նախատեսված չէին սպասարկել ձևավորված փոքր անհատական տնտեսություններին: Այս ամենին զուգահեռ տեղի ունեցող կլիմայի փոփոխությունը և երկար տարիներ ոլորտի հանդեպ պետական մարմինների հոգածության ոչ պատշաճ մակարդակը (պետական քաղաքականության բացակայությունը) բազում խնդիրներ առաջ քաշեցին, մասնավորապես՝ նվազեց արոտավայրերի և խոտհարքների օգտագործման մակարդակը և ավելացավ դրանց օգտագործման անհամաչափությունը: Այսօր հանրապետության գրեթե ողջ տարածքում գերբեռնված են համայնքամերձ արոտավայրերը, իսկ հեռագնա արոտավայրերը կա՛մ թերբեռնված են, կա՛մ չեն օգտագործվում:

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ թե գերօգտագործման, թե թերօգտագործման արդյունքում արոտավայրերում տեղի են ունենում բացասական փոփոխություններ: Հեռագնա արոտավայրերի թերարածեցման պատճառով տեղի է ունենում էկոհամակարգերի փոփոխություն, մասնավորապես՝ ալպյան գորգերը փոխարինվում են ալպյան մարգագետիններով, իսկ մերձալպյան մոլախոտերը ակտիվ ներխուժում են ալպյան էկոհամակարգեր: Իսկ համայնքամերձ արոտավայրերի գերարածեցման արդյունքում տեղի է ունենում բուսական ծածկույթի փոփոխություն և դեգրադացիա՝ առաջանում են էրոզիայի օջախներ, ինտենսիվանում են սողանքներն ու սելավները, ընդարձակվում են ճահճուտները: Ավելին, գերարածեցման արդյունքում վտանգված են նաև ՀՀ Կարմիր գրքում ներառված որոշ բուսատեսակներ: (ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Հայաստանի 5-րդ ազգային զեկույց, 2014)


Բացի վերոնշյալից, արոտավայրերի էկոլոգիական վիճակի և տնտեսական նշանակության համար ոչ պակաս վտանգավոր են համայնքներում տարածված վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումները: Մրանց հետևանքով ևս արոտավայրերը դեգրադացվում են, նվազում է դրանց արտադրողականությունը, փոխվում և նոսրանում է դրանց բուսականության կազմը՝ կերային բարձր արժեք ունեցող բուսականության հաշվին ավելանում են ոչ ուտելի, փշոտ ու թփուտային բույսերի քանակը:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումները բացի արոտավայրերի կառավարման մեջ ներգրավված կառույցների թույլ ինստիտուցիոնալ կառուցվածքով պայմանավորված լինելուց,

պայմանավորված են նաև անասնապահությամբ զբաղվող բնակչության սոցիալ-տնտեսական վիճակով: Այսինքն այստեղ գործ ունենք ինչ-որ չափով փակ շղթայի հետ, երբ անասնապահությամբ զբաղվող տնտեսությունները, սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով, իրենց անասունների համար չեն կարողանում անհարժեշտ քանակի կեր ապահովել և վաղ գարնանը կամ մինչև ուշ աշուն անասուններին հանում են արածեցման, ինչն իր հերթին նվազեցնում է արոտավայրից նույն անասնատիրոջ ստացված ներկա և ապագա տնտեսական օգուտները և սահմանափակում նրանց կողմից անասնապահության մեջ արվող ներդրումների ծավալը:


Մեր կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակներում հարցաթերթիկային հարցման մասնակիցներին առաջարկվել է գնահատել իրենց համայնքի հեռագնա և համայնքամերձ արոտավայրերի ներկա վիճակը: Այսպես, ըստ մասնակիցների սուբյեկտիվ գնահատականների, հեռագնա արոտավայրերը ավելի լավ վիճակում են գտնվում: Եթե համայնքների 14,8%-ում հեռագնա արոտավայրերը գտնվել են վատ վիճակում, ապա համայնքամերձ արոտավայրերը վատ վիճակում են եղել համայնքների 34,7%-ի մոտ: Տես Պատկեր 10:

Համայնքների 6%-ի դեպքում դրանց ներկայացուցիչները դժվարացել են պատասխանել, թե ինչ վիճակում են գտնվում իրենց հեռագնա արոտավայրերը, ինչն, ըստ երևույթին, նշանակում է, որ այդ արոտավայրերը չեն օգտագործվում: Բացի այդ, պետք է նշել, որ այս հարցում առկա է ՏԻՄ մարմինների կարողությունների խնդիր և հանրապետությունում ներդրված չէ արոտավայրերի մշտադիտարկման որևէ համակարգ:



Պատկեր 10. Համայնքամերձ և հեռագնա արոտավայրերի վիճակը հարցմանը մասնակցած համայնքներում, ըստ ներկայացուցիչների գնահատականների

Համայնքների ներկայացուցիչներին նաև առաջարկվել է գնահատել, թե ինչպես են փոխվել համայնքամերձ և հեռագնա արոտավայրերը վերջին 10-20 տարիների ընթացքում:



Պատկեր 11. Համայնքամերձ և հեռագնա արոտավայրերի վիճակի փոփոխությունը վերջին 10-20 տարիների ընթացքում, ըստ ներկայացուցիչների գնահատականների

Հեռագնա արոտավայրերի պարագայում համայնքների գերակշիռ մասում՝ 47,6%-ում դրանց ներկայացուցիչները համարել են, որ հեռագնա արոտավայրերի վիճակը նույնն է մնացել: Իսկ համայնքամերձ արոտավայրերի դեպքում՝ համայնքների գերակշիռ մասում դրանց վիճակը գնահատվել է որպես *վատացած* և *միանշանակ վատացած*՝ ներկայացված համայնքների համապատասխանաբար 46,3 և 20,0 տոկոսում: Տես Պատկեր 11:

Արոտավայրերի վիճակում դրական տեղաշարժ նկատվել է հարցմանը ներգրավված անհամեմատ ավելի քիչ համայնքներում: Հեռագնա և համայնքամերձ արոտավայրերի վիճակը փոփոխվել է դեպի լավը համայնքների համապատասխանաբար 3,6%-ի և 3,3%-ի դեպքում:

Ակնկալվում է, որ արոտավայրերի վիճակը էլ ավել կվատանա կլիմայի փոփոխության ազդեցության ներքո հատկապես, եթե պահպանվի արոտավայրերի օգտագործման և կառավարման ներկա պրակտիկան: Միևնույն ժամանակ հարկ է հիշել, որ կլիմայի փոփոխությունից ավելի շատ կտուժեն գյուղատնտեսության մեջ ներգրավված խոցելի խմբերը, քանի որ նրանք ավելի պակաս հնարավորություն ունեն ներդրումներ անել կլիմայի փոփոխության բացասական հետևանքները մեղմող հարմարվողականության միջոցառումներում:

Համաձայն «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Հայաստանի Հանրապետության երրորդ ազգային հաղորդագրության (2015)՝

կլիմայի փոփոխության արդյունքում Հայաստանում սպասվում է չորային լանդշաֆտների ընդարձակում, անտառային, մերձալպյան և ալպյան լանդշաֆտների զբաղեցրած տարածքների նվազում և անտառների խոցելիության ավելացում:

Նույն աղբյուրի համաձայն՝ ակնկալվում է, որ մինչև 2100 թվականը Հայաստանում միջին տարեկան ջերմաստիճանը կբարձրանա 3,3-4,7°C-ով: Տարեկան տեղումների մակարդակը կավելանա, սակայն ամռանը տեղումների մակարդակը կարող է նվազել մինչև 13%-ով: Համաձայն կանխատեսումների՝ առաջիկա 80 տարվա ընթացքում տեղի կունենա հիմնական ագրո-կլիմայական գոտիների գոյություն ունեցող սահմանների ուղղահայաց տեղաշարժ. լեռնային լանդշաֆտների նկարագրին համապատասխան՝ դրանք կբարձրանան 200-400 մետրով:

Վերոնշյալը առաջ կբերի էական փոփոխություններ բնական էկոհամակարգերում այդ թվում՝ բույսերի և կենդանիների որոշակի տեսակների ոչնչացում կամ մյուսների զարգացում: Ակնկալվում է, որ էկոհամակարգերի փոփոխությունը զգալի ազդեցություն կունենան բույսերի 238 տեսակների վրա, իսկ 140 տեսակների պայմանները զգալիորեն կբարելավվեն:

Բնական գոտիների տեղաշարժման արդյունքում արածեցման համար առավել արժեքավոր ալպյան և մերձալպյան գոտիների մակերեսը կկրճատվեն համապատասխանաբար 19 և 22 տոկոսով: Մինչդեռ ժամանակ, կիսաանապատային և չոր-տափաստանային գոտիների ավելացման հետևանքով, հանրապետությունում ավելի ցածր արտադրողականություն ունեցող արոտավայրերի ծավալը կավելանա 23%-ով:


Ջերմաստիճանի բարձրացման և տեղումների նվազման հետևանքով կավանդանա գոլորշացումը և 10-30%-ով կնվազի հողի խոնավությունը: Այս ամենի հետևանքով ոչ միայն կկրճատվեն մշակաբույսերի (այդ թվում նաև կերային) արտադրության ծավալները, այլ նաև ավելի ինտենսիվ կդառնա արոտավայրերի դեգրադացիան, կնվազի դրանց արտադրողականությունը: Արոտավայրերի պահպանման համար որոշ տարածքներում անհրաժեշտ կլինի ոռոգում իրականացնել: Արդյունքում, ըստ կանխատեսումների, մինչև 2030 թվականը ՀՀ արոտավայրերի տարածքը կկրճատվի մոտ 9%-ով:

Ավելացնենք նաև, որ ներկա պայմաններում հանրապետության տարածքում արոտավայրերի խնամքի, պահպանման, բարելավման և վերականգնման ուղղությամբ տարվող աշխատանքները էպիզոդիկ բնույթ են կրում և հիմնականում իրականացվում են տարբեր զարգացման ծրագրերի

շրջանակներում: Օրինակ սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացված հարցմանը մասնակցած համայնքներից միայն 3-ի արոտավայրերում են կատարվել ճանապարհների, ջրելատեղերի, մակատեղերի և կացարանների կառուցման կամ վերականգնման աշխատանքներ: Մնացած համայնքներում կատարվել են նշված աշխատանքներից միայն մի քանիսը:

Եթե չդիտարկենք այն համայնքները, որտեղ բացակայել են նշված ենթակառուցվածքները (տես Պատկեր 18, Գլուխ 5.1), ապա հարցմանը ներգրավված համայնքների մոտ 2/3-րդ-ում իրականացվել են ջրելատեղերի կառուցման կամ վերականգնման աշխատանքներ: Մնացած աշխատանքները ինչպիսին են՝ արոտավայրերի բարելավման և վերականգնման միջոցառումները, ճանապարհների կառուցումը կամ վերականգնումը, հովիվների կացարանների կառուցումը կամ վերականգնումը և հեռագնա արոտավայրերում մակատեղերի կառուցումը կամ վերականգնումը իրականացվել է հարցմանը մասնակցած համայնքների մոտ 1/3-րդ-ում: Տես Պատկեր 12-ը ստորև:

Ի դեպ պետք է նկատի ունենալ, որ տվյալ հարցի շրջանակում գնահատվել է միայն տվյալ աշխատանքների երբևէ իրականացված լինելը համայնքում և ստացված տվյալները չեն արտահայտում տվյալ համայնքի արոտավայրերի ողջ տարածքում կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:



Պատկեր 12. Ուսումնասիրված համայնքներում արոտավայրերի կամ դրանց ենթակառուցվածքների վերականգնման կամ բարելավման աշխատանքների իրականացում

Բացի այդ, ավելացնենք, որ հանրապետությունում չի վերահսկվում արոտավայրերի օգտագործումը և օգտագործման արդյունքում՝ դրանցում ժամանակի ընթացքում առաջացած փոփոխությունները: Այս ամենը կլիմայական փոփոխությունների ներկա պայմաններում զգալի բացասական ազդեցություն է

թողնում արոտավայրերի և խոտհարքների վիճակի և դրանց օգտագործման տնտեսական արդյունավետության վրա:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակով պայմանավորված՝ կարող ենք փաստել, որ բնապահպանական հիմնախնդիրները դեռևս գերակա չեն հանրապետությունում և գործնականում դրանք ստորադասվում են սոցիալ-տնտեսական խնդիրներին: Այնուամենայնիվ, հարկ է նաև նշել մի անժխտելի փաստ՝ բնական էկոհամակարգերի թեկուզ մասնակի վերականգնումը ավելի մեծ ծավալի աշխատանք և ներդրումներ է պահանջում, քան դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:

5. Արոտավայրերի կառավարում

5.1. Արոտավայրերի օգտագործման հիմնական մոտեցումները և խնդիրները

Արոտավայրերի արդյունավետ և կայուն օգտագործումը իրենից ենթադրում է դրանց բուսականության բարձր բերքատվության և կերային լավ հատկանիշների (արտադրողականության) մշտական ապահովումը, ինչպես նաև դրանց հետագա բնականոն բարելավման համար պայմանների ստեղծումը: (Թովմասյան, 2017)

Ինչպես արդեն նշվել է, արոտավայրերից օգտվում են անասնաբուծությամբ՝ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, ձիաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային և ոչ առևտրային, մեծ և փոքր տնտեսությունները, ինչպես նաև ժամանցի, ռեկրեացիոն և այլ նպատակներով (որսորդություն, վայրի հավաքչություն) դրանցից օգտվող հասարակության լայն շերտերը:

Այդուհանդերձ, եթե անտեսենք մարդկանց անփութության արդյունքում արոտավայրերում առաջացող հրդեհները, արոտավայրերի արտադրողականության վրա ամենամեծ ազդեցությունն ունեն այստեղ արածող կենդանիները: Նրանք ներագրում են արոտավայրի վրա այն արածելով, տրորելով, սերմեր տարածելով, ինչպես նաև վերամշակելով սննդարար նյութերը (Kyle, 2015): Ուստի, արոտավայրի կայուն կառավարում ասելով, հիմնականում նկատի ունենք արոտավայրում կենդանիների շարժի և արածեցման ճիշտ կազմակերպումը, ինչը խիստ էական է արոտավայրի արտադրողականության և պահպանման համար: Ուսումնասիրության այս բաժնից սկսած արոտավայրի կառավարում կամ օգտագործում արտահայտությունները կդիտարկենք միայն այս տեսանկյունից:

Հանդիսանալով համայնքային և պետական սեփականություն՝ արոտավայրերի կառավարումը և տնօրինումն ընկնում է ՏԻ մարմինների պատասխանատվության ներքո⁷: Ուստի ՏԻՄ-երը, ելնելով համայնքի շահերից, մի շարք գործառույթներ պետք է իրականացնեն՝ ապահովելու համայնքային ռեսուրս հանդիսացող արոտավայրի ճիշտ շահագործումը, պահպանումը և վերականգնումը: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի ելնելով եղանակային պայմաններից ՏԻՄ-երը պետք է՝

- սահմանեն արոտային շրջանի սկիզբը և ավարտը,

⁷ Տես ՀՀ Հողային օրենսգիրքը՝ հոդված 3 և 56; ՏԻՄ մասին օրենքը և ՀՀ Կառավարության N 389-Ն որոշումը:

- կանոնակարգեն համայնքում արոտավայրերի օգտագործման եղանակները (ազատ կամ հերթափոխ-արոտաբաժնային⁸), այդ թվում՝
 - յուրաքանչյուր տարի հաշվեն արոտավայրի թույլատրելի բեռնավորումը և սահմանեն արոտավայրից օգտվող անասնազվաքանակի չափը, իսկ հերթափոխ-արոտաբաժնային եղանակի դեպքում՝ նաև տվյալ արոտաբաժնում արածեցման տևականությունը և տարբեր արոտաբաժինների օգտագործման հերթականությունը,
- արոտավայրի վերականգնման նպատակով դրանց համար հանգստի ժամկետներ սահմանեն,
- վերահսկեն, թե արդյոք արոտօգտագործողները պահպանում են իրենց կողմից սահմանված արոտավայրերի օգտագործման պայմաններն ու կարգը:


Այդուհանդերձ, իրականացված խորքային հարցազրույցների, ֆոկլուր-խումբ քննարկումների, ինչպես նաև թիրախային մարզերում հավաքագրված քանակական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ արոտավայրերի կառավարման ոլորտում ՏԻՄ-երը շատ պասիվ են և հիմնականում գործընթացը կազմակերպված չէ: Արոտավայրերի կառավարումը գործնականում իրականացվում է տարերայնորեն և հաճախ ինքնուրույն՝ տարբեր ներգրավված անձանց կողմից, այդ թվում՝ նախրապանների, անասնատերերի, համայնքի մեծահասակների և այլն:

Հարցման մասնակիցների 30%-ը նշել է, որ իրենց համայնքում ՏԻՄ-երի կողմից արոտօգտագործման գործընթացը չի վերահսկվում: Ընդ որում՝ արոտօգտագործումը իրենց համայնքներում չվերահսկվող են համարել գյուղացիական տնտեսություններ ներկայացնողների 41%-ը և ՏԻՄ ներկայացուցիչների ու մասնագետների 25%-ը: Արոտօգտագործումը ՏԻՄ-երի կողմից ամբողջությամբ վերահսկվող գործընթաց են համարել հարցվածների 11%-ը: Բոլոր խմբերում հարցմանը մասնակցածների գերակշիռ մասը նշել է, որ արոտօգտագործումը մասամբ է վերահսկվում: Մանրամասները տես Պատկեր 13-ում:

Միննույն ժամանակ, միտումը նույնն է, եթե հավաքագրված տվյալները դիտարկենք ըստ համայնքների⁹ և ըստ թիրախային մարզերի: Հարցմանը

⁸ Հերթափոխ-արոտաբաժնային արածեցման էությունը կայանում է նրանում, որ այս դեպքում արոտները բաժանվում են առանձին արոտատեղամասերի և օգտագործվում հերթականորեն որոշակի ժամանակահատվածով և կրկնությամբ (Թովմասյան, 2017)

մասնակցած բոլոր համայնքներում և բոլոր թիրախային մարզերում ՏԻՄ-երի կողմից արոտագտագործման գործընթացը ամբողջությամբ վերահսկվող են համարել հարցվածների նվազագույն քանակը:



Պատկեր 13. Արոտագտագործման վերահսկումը ՏԻՄ-երի կողմից

Քանակական հարցումների մեկ այլ հարց ևս վերաբերում էր ՏԻՄ-երի կողմից արոտագտագործման գործընթացի և արոտավայրի կառավարմանը. մասնակիցներին առաջարկվել է գնահատել, թե արոտավայրերի կառավարման ոլորտում ինչպիսի մասնագիտական ուղղորդում են ապահովում ՏԻ մարմիններն արոտագտագործող տնտեսություններին: Արդյունքում՝ հարցման մասնակիցների 39%-ը նշել է որ ՏԻՄ-երը ուղղորդում չեն ապահովում (Աղյուսակ 10): Արոտավայրերի կառավարման տեսանկյունից իրականացվող մասնագիտական ուղղորդման ամենից շատ նշված (47%) գործառույթը հանդիսացել է արոտային շրջանի սկիզբ և ավարտ սահմանելը:

Աղյուսակ 10. Արոտագտագործող տնտեսություններին ՏԻՄ-երի կողմից ապահովվող մասնագիտական ուղղորդում

Տարբերակներ	% ընդ.	% ուղղորդում
Ուղղորդում չեն ապահովում	39,3%	-
Սահմանում են արոտային շրջանի սկիզբը և ավարտը	29,4%	47,0%
Սահմանում են, թե որ ուղղությամբ պետք է տանել կենդանիների հոտը և նախիրը	14,2%	22,7%

⁹ Հետայսու, երբ վերլուծությունը արվում է ըստ համայնքների, ապա հաշվի է առնվում առցանց հարցման արդյունքում ստացված տվյալները և ՖԽԲ-ի ավարտին հավաքված տվյալները, ընդ որում, եթե համայնքի ներկայացուցիչների պատասխանների մեջ եղել է անհամապատասխանություն, ապա որպես պատասխան ընտրվել է ամենից դրական պատասխանը, իսկ երբ հնարավոր է եղել ունենալ մի քանի պատասխան, ապա գումարվել են բոլոր պատասխանները:

Սահմանում են արոտների օգտագործման տևականությունը՝ թե որ արոտում քանի օր է պետք արածեցնել	4,7%	7,6%
Սահմանում են տարբեր արոտների օգտագործման հերթականությունը	6,2%	9,8%
Մշակում են արոտների օգտագործման օրացուցային գրաֆիկ	0,9%	1,5%
Կազմում են արոտների օգտագործման քարտեզներ և արոտաշրջանառության սխեմաներ	7,1%	11,4%

Արոտավայրերի կայուն կառավարման էլեմենտներ հանդիսացող գործառույթները, ինչպիսիք են՝ արոտաշրջանառության կազմակերպումը, արոտների օգտագործման գրաֆիկների կազմումը և այլն ավելի քիչ չափով են իրականացվում համայնքներում, և դրանց իրականացման ծավալը խիստ տարբեր է համայնքից համայնք: Համայնքներում սրանց ներդրումն ու կիրառումը մի կողմից պայմանավորված է ՏԻՄ-երի՝ համայնքում իրենց ունեցած դերի, պարտականությունների ընկալմամբ, արոտավայրերի կառավարման ոլորտում մասնագիտական ունակությունների մակարդակով, իսկ մյուս կողմից՝ համայնքի բյուջեում ֆինանսական միջոցների առկայությամբ՝ կայուն կառավարում իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական միջոցառումների կազմակերպման համար:

Ավելացնենք, որ այս հարցում կարևոր է նաև համայնքում արոտավայրերի կայուն կառավարման ներդրմանը աջակցող կառույցների ներկայությունը, որոնք մասնագիտական աջակցություն են ապահովում և զարգացնում են ՏԻՄ-երի՝ արոտավայրերի կայուն կառավարում իրականացնելու կարողությունները: Այս դեպքում բարելավվում է ՏԻՄ-ի արոտավայրերի կառավարման ոլորտում մասնագիտական ունակությունները, ավելանում է կայուն կառավարում իրականացնելու անհրաժեշտության գիտակցումը: Բացի այդ, եթե աջակցող կառույցը համայնքում նախաձեռնում է արոտավայրերի ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ, ապա սովորաբար համայնքը իր ներդրումն է ունենում, ինչն իր հերթին ավելացնում է համայնքի և ՏԻՄ-երի հոգածության աստիճանը արոտավայրի պահպանման հարցում:

Ինչ վերաբերում է արոտավայրերի վիճակի վերահսկմանը, առաջացած փոփոխությունների արձանագրմանը, ապա այս գործառույթի իրականացումը ևս կանոնակարգված չէ ՏԻՄ-երի կողմից: Փաստացի արոտավայրի վերահսկում չի իրականացվում կամ իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ վարձակալության պայմանագիր կնքելիս և այլն: Եթե համայնքում կա գյուղատնտես-մասնագետ, ապա արոտավայրի վիճակի վերահսկումը իրականացվում է նրա կողմից, գյուղատնտես-մասնագետի բացակայության պարագայում՝ համայնքապետի, վարչական ներկայացուցչի կողմից: Ավելացնենք նաև, որ կանոնակարգման և մասնագիտական կադրերի ապահովման

անհրաժեշտությունից բացի արոտավայրերի վիճակի վերահսկման համար խոչընդոտ են նաև համայնքներում առկա տեխնիկական և ֆինանսական դժվարությունները, երբ օրինակ ճանապարհների վատ վիճակը կամ բացակայությունը, ՏԻՄ-երում տրանսպորտային միջոցի բացակայությունը խոչընդոտում են եղած արոտավայրերի ամբողջ ծավալի վիճակի վերահսկումը:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ ՏԻՄ-երը գիտակցում են արոտավայրերի կառավարման անհրաժեշտությունը և տեսականորեն պատկերացնում են, թե ինչ է դա ենթադրում և ինչ գործառույթներ է ներառում:

2015 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀՀ) աջակցությամբ մշակվել են «Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ. Հայաստան» և «Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց» ձեռնարկները, որոնք հիմնավոր տեղեկատվություն են պարունակում ՀՀ պայմաններում բնական կերհանդակների արդյունավետության բարձրացման, պահպանման և վերականգնման վերաբերյալ: Ձեռնարկների ստեղծման հիմնական նպատակը եղել է օժանդակել ՀՀ կառավարությանը, մասնավորապես՝ Տարածքային Կառավարման և Զարգացման¹⁰ (ՏԿԶ) նախարարությանը բնական կերհանդակների կառավարման ոլորտում: ՏԿԶ-ի կողմից ձեռնարկները փոխանցվել են համայնքներին՝ աջակցելու նրանց կազմակերպել արոտավայրերի կառավարման գործընթացը: Այդուհանդերձ, նախարարությունում չկան քանակական գնահատականներ, թե որքանով են ՏԻՄ-երը կյանքի կոչել ձեռնարկների պարունակությունը իրենց համայնքներում:

Միննույն ժամանակ, ՏԻՄ-երի կողմից արոտավայրերի կառավարումը իրավական տեսանկյունից պարտադիր է ՀՀ Կառավարության 2011 թվականին ընդունված՝ ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին¹¹ (2011) որոշման շրջանակում, որը սակայն տարածվում է միայն պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վրա: Այս որոշման մեջ ներառված կարգը սահմանում է արոտավայրերի կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները, որոնք, ըստ էության, իրենցից ներկայացնում են արոտավայրերի կառավարման պլանի մշակման շրջանակը: Օրինակ՝ կարգը նախատեսում է *արոտաշրջանառության իրականացում*, ինչպես նաև նախքան արոտավայրերի օգտագործումը, հաշվի առնելով արածեցվող

¹⁰ 2015 թվականին նախարարությունը կոչվել է Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

¹¹ ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67394>

կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը՝ *արոտավայրերի օգտագործման պլանի կազմում*՝ ինչը, փաստորեն, իր բնույթով նույնն է, ինչ արոտավայրերի կառավարման պլանը:

ՏԻՄ-երի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարումը անուղղակի կերպով ներառված է ՏԻՄ մասին օրենքով (կքննարկվի Գլուխ 6.2-ում) սահմանված՝ հող օգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների շրջանակում: Օրենքի համաձայն՝ համայնքի ղեկավարը պետք է մշակի և կազմի համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրեր:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ոչ բոլոր համայնքներն ունեն արոտավայրերի կառավարման պլան և ոչ բոլոր համայնքների հնգամյա զարգացման ծրագրերն են պարունակում համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրեր: Ըստ հարցվողների գնահատականների՝ հարցմանը մասնակցած համայնքների և բնակավայրերի միայն 31%-ում է եղել արոտավայրի կառավարման պլան:

Բացի այդ, իրականացված փաստաթղթային ուսումնասիրությունը ցույց է տվել, որ որոշ համայնքներ ավագանու որոշմամբ ընդունել են իրենց համայնքների արոտավայրերի օգտագործման կարգ, որը սակայն մեծ մասամբ հադիսանում է Կառավարության վերոնշյալ որոշման մեջ սահմանված կարգի արտատպումը¹²: Համայնքների կողմից ընդունված արոտավայրերի օգտագործման կարգերն իրենց բնույթով վերացական փաստաթղթեր են, քանի որ այդ կարգի ներդրման և պահպանման ուղղությամբ չեն սահմանում գործնական ընթացակարգեր, լիազորություններ և պարտականություններ:

¹² Սյունիքի մարզի Տաթև համայնքի արոտավայրերի օգտագործման կարգը ընդունված 2017թ-ի փետրվարի 10-ին Ավագանու N 06-Ն որոշմամբ՝

<http://tatevhamaynq.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=9bd0e5b6-656d-4211-8cb4-6892c54cfc6d>,

Արագածոտնի մարզի Ապարան համայնքի արոտավայրերի օգտագործման կարգը ընդունված 2018թ-ի մարտի 7-ին Ավագանու N 16-Ա որոշմամբ՝

<http://aparan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=66bcd481-24d8-4d69-b9d1-39e624f55b3e>, Վայոց


Ձորի մարզի Եղեգիս համայնքի արոտավայրերի օգտագործման կարգը ընդունված 2018թ-ի

հունիսի 5-ին Ավագանու N 47-Ն որոշմամբ՝ http://vdzor.mtad.am/files/comm_docs/10/777/67678.pdf,

Տավուշի մարզի Բերդ համայնքի արոտավայրերի օգտագործման կարգը ընդունված 2018թ-ի

փետրվարի 28-ին Ավագանու N 21-Ա որոշմամբ՝

<http://www.berdcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=cf16f6b5-2529-424e-8935-46bae099cedb>,



Պատկեր 14. Արտավայրի կառավարման պլանի առկայությունը հարցմանը մասնակցած համայնքներում՝ ըստ ներկայացուցիչների գնահատականների (ըստ համայնքի)

Այս առումով հանրապետության համայնքերի շարքում առանձնանում են նրանք, որտեղ իրականացվել են բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, կառավարմանը կամ անասնապահության զարգացմանը ուղղված որևէ ծրագիր: Հաճախ վերջին տաս տարիների ընթացքում իրականացված նմանատիպ ծրագրերի մաս են կազմել համայնքում արտավայրի կառավարման պլանի մշակումը և ներդրումը: Մինչ 2019 թվականի հունվար, տարբեր կազմակերպությունների աջակցությամբ նմանատիպ պլաններ մշակվել են հանրապետության 231 համայնքների/բնակավայրերի համար¹³:

Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ արտավայրի կառավարման պլան մշակելիս հաշվին են առնվում տվյալ համայնքի արտավայրերում առկա ենթակառուցվածքները, բուսածածկը, եղած անասնազվիսաքանակը և մի շարք այլ պայմաններ, որոնք ժամանակի մեջ հաստատուն չեն և ուստի մշակված կառավարման պլաններն ենթադրում են պարբերաբար վերանայում ու թարմացում, ինչը սակայն ոչ միշտ է պատշաճ կերպով իրականացվում համայնքների կողմից:

Այն համայնքների ՏԻՄ ներկայացուցիչները, ովքեր մասնակցել են ֆոկլուս-խումբ քննարկումներին և որտեղ առկա է եղել արտավայրի կառավարման պլան, նշել են, որ եթե կառավարման պլանը թարմացնում են, ապա դա անում են բանավոր,

¹³ Առ 2019թ հունվար՝ «Համայնքային գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն» (ՀԳՌԿՄ) երկու ծրագրերի շրջանակում 174 համայնքի/բնակավայրերի համար մշակվել են Արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ, ՌԶԳ ՀԿ-ի կողմից արտավայրի կառավարման պլան մշակվել է 92 համայնքների/բնակավայրերի համար, ՄԱԶԾ-ի կողմից իրականացված ծրագրերի շրջանակում կառավարման պլան մշակվել է 5 համայնքների/բնակավայրերի համար: ՌԶԳ-ի և ՀԳՌԿՄ-ի կողմից իրականացված ծրագրերի ընթացքում շուրջ 40 գյուղական համայնքներ/բնակավայրեր կրկնվել են, ինչի պարագայում մեկի կամ մյուսի կողմից լրամշակվել են արդեն կազմված կառավարման պլանները:


այսինքն՝ եղած պլանը տեսողական դիտարկումների հիման վրա հարմարեցնում են տվյալ տարվա պայմաններին: Կառավարման պլանը, որպես փաստաթուղթ, հիմնականում չի թարմացվում մասնագիտական և կադրային կարողությունների բացակայության պատճառով:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ կառավարման պլանի առկայությունը չի ենթադրում դրա իրականացումը և շատ համայնքների ներկայացուցիչներ դրանց իրականացումը խնդրահարույց, դժվար, իսկ երբեմն՝ անհնար են համարում:

Կենդանիների արածեցման գործընթացը համայնքից համայնք տարբեր կերպ է իրականացվում և սա ոչ այնքան կապված է ավանդույթների կամ տարածաշրջանային առանձնահատկությունների հետ, այլ պայմանավորված է համայնքում նախրապան ունենալու և անասնատերերի՝ անասնաբուծության մեջ մասնագիտացած լինելու հանգամանքներով:

Իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ գրեթե համատարած համայնքներում իրար գուգահեռ կիրառվում են արածեցման մի քանի մոտեցումներ: Այնուամենայնիվ, հարցմանը մասնակցած համայնքների գերակշիռ մասում կենդանիների արածեցումն իրականացվում է նախրապանի կողմից՝ ըստ իր ունեցած գիտելիքների մակարդակի՝ տես Պատկեր 15: Արածեցման հաջորդ ամենատարածված եղանակը անասնապահների կողմից հերթով արածեցումն է, երբ մի քանի անասնատերեր միացնում են իրենց անասնազվիսաքանակը և ըստ կենդանիների թվի իրենց միջև սահմանում են հերթ՝ թե ով, քանի օր և երբ պետք է կենդանիներին տանի արածեցման: Հարցման մասնակիցների 41%-ը նշել է, որ իրենց համայնքում կենդանիների արածեցումը կազմակերպվում է հենց այս եղանակով: Եթե նշված ցուցանիշը ամփոփենք ըստ համայնքների, ապա կստանանք 54%: Այսինքն հարցմանը մասնակցած համայնքների կեսում կիրառվում է «հերթով» արածեցման եղանակ:

Արածեցման երրորդ ամենատարածված եղանակը թե ըստ հարցման մասնակիցների, թե ըստ համայնքների՝ անասնապահների կողմից ազատ, անկանոն արածեցումն է: Այս եղանակով արածեցումն ենթադրում է կենդանիների արածեցման վայրի հանդեպ վերահսկողության բացակայություն կամ նվազագույն աստիճան: Նման եղանակով արածեցում կիրառվում է հարցմանը մասնակցած համայնքների շուրջ 50%-ի դեպքում:



Պատկեր 15. Համայնքներում կիրառվող արածեցման եղանակները ըստ հարցման մասնակիցների գնահատականների՝ անհատապես և ըստ համայնքի

Այսպիսով, ի նկատի ունենալով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ հանրապետության արոտավայրերում հիմնականում կիրառվում է արոտավայրերի օգտագործման ազատ եղանակը, իսկ հերթափոխ-արոտաբաժնային եղանակով արածեցում շատ քիչ դեպքերում է կատարվում: Հերթափոխ-արոտաբաժնային եղանակով արածեցումը ի թիվս այլ պայմանների ենթադրում է ՏԻՄ-ի կողմից հաստատված գրաֆիկով արածեցում, ինչը կիրառվում է հարցմանը մասնակցած համայնքների 35,8%-ում: Սակայն, ինչպես նշվել էր, համայնքներում հաճախ իրար զուգահեռ կիրառվում են արածեցման մի քանի եղանակ: Այսպես, համայնքներում, որտեղ ՏԻՄ-ի կողմից հաստատված գրաֆիկով արածեցում է կազմակերպվում, դրան զուգահեռ համայնքների 55%-ի դեպքում նաև նշվել է, որ արածեցում իրականացվում է հովվի կողմից ըստ իր ունեցած գիտելիքների մակարդակի, իսկ համայնքների 48%-ի դեպքում նաև կազմակերպվում է կենդանիների ազատ, անկանոն արածեցում:

Ի դեպ հարկ է նշել, որ հերթափոխ-արոտաբաժնային եղանակով արածեցումների կազմակերպումը ազատ արածեցման համեմատ ապահովում է արոտավայրի բարձր արդյունավետություն և բուսածածկի լավ վիճակ: Այն իրենից ենթադրում է արոտավայրերի բաժանում առանձին արոտատեղամասերի և որոշակի կրկնությամբ որոշակի ժամանակահատվածի ընթացքում դրանց հերթականորեն օգտագործում (Թովմասյան, 2017) և համաշխարհային մակարդակում այս եղանակը համարվում է արոտավայրի կառավարման լավագույն եղանակ (MacPhail, Kyle, 2012):

Ինչպես արդեն նշվել է, համայնքների տիրապետման տակ գտնվող արոտավայրերը տարբեր աստիճանով են օգտագործվում և դրանց հասանելիությունը երբեմն խնդրահարույց է: Իրականացված դաշտային աշխատանքի արդյունքները ևս հաստատում են վերոնշյալ խնդիրները: Այսպես, եթե հարցմանը մասնակցած համայնքներից 80 և ավել տոկոսում օգտագործվում են համայնքամերձ արոտավայրերի տարածքի 50%-ից ավելին, ապա նույն համայնքների ավելի քան 82%-ում օգտագործվում են հեռագնա արոտավայրերի 50%-ից պակասը: Տես Աղյուսակ 11:


Աղյուսակ 11. Հեռագնա և համայնքամերձ արոտավայրերի հասանելիության և օգտագործման աստիճանի գնահատականը ըստ համայնքների

	Համայնքամերձ արոտավայր	Հեռագնա արոտավայր
Օգտագործման աստիճանը		
Մինչև 30%	5,4%	56,2%
31-50%	9,7%	26,0%
51-80%	47,3%	13,7%
81% և ավել	37,6%	4,1%
Հասանելիության աստիճանը		
Այո հասանելի են	38,3%	13,2%
Մասամբ են հասանելի	38,3%	75,5%
Ոչ հասանելի չեն	23,3%	11,3%
Բացակայում են	-	12,5%

Հարցմանը մասնակից արոտօգտագործող գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներին առաջարկվել է նաև գնահատել իրենց համայնքում արոտավայրերի հասանելիությունը տեխնիկա-տնտեսական չափանիշների տեսանկյունից: Արդյունքում՝ հեռագնա արոտավայրերն ամբողջությամբ հասանելի են համարվել համայնքների 13%-ի, իսկ համայնքամերձ արոտավայրերը՝ 38%-ի մոտ: Հարցմանը մասնակցած համայնքների ներկայացուցիչների գնահատմամբ իրենց կողմից ներկայացվող համայնքների 12,5%-ը հեռագնա արոտավայր չունի:


Համայնքամերձ արոտավայրերի հասանելիությունը սահմանափակող հիմնական պատճառներ ըստ համայնքների համարվել են՝ նախիրների և հոտերի համար խմելաջրի պակասը կամ բացակայությունը՝ համայնքների 73,9%-ի դեպքում, արոտ տանող ճանապարհների քայքայված և դժվար անցանելի լինելը՝ 69,6%-ի դեպքում և արոտավայրերի ռելիեֆային լինելը՝ 43,5%-ի դեպքում: Դեգրադացման պատճառով համայնքամերձ արոտավայրի հասանելիությունը վտանգված է համարվել հարցմանը մասնակցած համայնքների 29,6%-ի դեպքում: Այս հարցին հնարավոր է եղել տալ մեկից ավել պատասխան, ուստի դիտարկվել է նաև բոլոր

պատասխանների մեջ յուրաքանչյուր տարբերակի տեսակարար կշիռը, ինչը համապատասխանել է վերը նշված խոչընդոտների կարևորության աստիճանին՝ տես Պատկեր 16-ը:



Պատկեր 16. Համայնքամերձ արոտավայրի հասանելիությունը սահմանափակող հանգամանքները ըստ համամասնության (ըստ համայնքների)


Ըստ հարցման մասնակիցների գնահատականների՝ իրենց համայնքներում հեռագնա արոտավայրերի հասանելիությունը սահմանափակող ամենատարածված պատճառը արոտ տանող ճանապարհների քայքայված և դժվար անցանելի լինելն է՝ համայնքների 74,5%-ի դեպքում, ինչը կազմում է բոլոր հնչեցված պատասխանների 21,8%-ը (տես Պատկեր 17): Հեռագնա արոտավայրերի հասանելիությունը սահմանափակող հաջորդ կարևոր պատճառներից են՝ հեռագնա պահվածք կազմակերպելու համար անհրաժեշտ ճամբարային ենթակառուցվածքների քայքայված վիճակը կամ բացակայությունը՝ ինչպես օրինակ՝ մակատեղերը, հովվի կացարանները, ջրելատեղերը (66,0%) և կիթ իրականացնելու, կաթը վերամշակելու կամ համայնք տեղափոխելու հնարավորությունների պակասն ու դժվարությունները (67,0%):



Պատկեր 17. Հեռագնա արոտավայրի հասանելիությունը սահմանափակող հանգամանքները ըստ համամասնության (ըստ համայնքների)

Համայնքից մեծ հեռավորության վրա գտնվելը և առանձին տնային տնտեսությունների ունեցած կենդանիների փոքր թվով պայմանավորված՝ հեռագնա արոտավայրում կենդանիների արածեցման տնտեսական առումով արդարացված չլինելը խնդիր են եղել համայնքների համապատասխանաբար 56,6 և 49,1 տոկոսի համար:

Արոտագտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների վիճակը ևս տարբեր են համայնքից համայնք, սակայն կարող ենք փաստել, որ հարցման արդյունքում չեն հանդիպել համայնքներ, որտեղ խնդիրներ չեն եղել: Հարցման մասնակիցներին առաջարկվել է գնահատել, թե ինչ վիճակում են գտնվում իրենց արոտավայրերում առկա արոտագտագործման ենթակառուցվածքները: Տես Պատկեր 18:




Պատկեր 18. Արոտագտագործման հիմնական ենթակառուցվածքների վիճակը հարցմանը մասնակցած համայնքներում

Ինչպես երևում է, քիչ թե շատ լավ վիճակում են գտնվում ջրելատողները և ճանապարհները, իսկ մակետողների և հովվի կացարանների վիճակը վատ է կամ բացակայում է հարցմանը մասնակցած համայնքների համապատասխանաբար՝ 83,3 և 82,7 տոկոսի մոտ: Միևնույն ժամանակ, եթե վերլուծությունից բացառենք բացակա ենթակառուցվածքների մասնաբաժինը, ապա նշված ենթակառուցվածքներից ամենից վատ վիճակում են գտնվում եղած կացարանները (67%) և ճանապարհները (66%):

Բացի վերոնշյալից, որոշ համայնքներ նաև առանձին-առանձին մանրամասնել են, թե ինչ վիճակում են հեռագնա և համայնքամերձ արոտավայրերի ջրելատողներն ու ճանապարհները: Մասնավորապես, կարող ենք փաստել, որ համայնքամերձ արոտավայրերի ճանապարհները և ջրելատողները ավելի լավ վիճակում են, քան հեռագնա արոտավայրերինը: Օրինակ՝ համայնքամերձ արոտավայրերի ճանապարհները վատ վիճակում են հարցին պատասխանած համայնքների 58%-ի դեպքում, իսկ հեռագնա արոտավայրերի ճանապարհները՝ 77%-ի դեպքում: Համայնքամերձ արոտավայրերի ջրելատողները լավ կամ բավարար վիճակում են համայնքների 47%-ի դեպքում, իսկ հեռագնա արոտավայրերինը՝ 35%-ի դեպքում:

Ուսումնասիրության ընթացքում քննարկվել է նաև համայնքում եղած անասնազվաքանակի համապատասխանությունը արոտավայրերին: Այսպես, ուսումնասիրության մեջ ընդգրկված համայնքների 52%-ում, ըստ իրենց ներկայացուցիչների գնահատականների, արոտավայրերը բավարարում են համայնքում հաշվառված անասնազվաքանակին, իսկ 18%-ում՝ չեն բավարարում (տես Պատկեր 19): Ընդ որում, սրանցից մոտ 20%-ի դեպքում չկա հնարավորություն օգտվել այլ համայնքների արոտավայրերից:



Պատկեր 19. Արոտավայրերի և եղած անասնազվաքանակի համապատասխանությունը ըստ մասնակիցների գնահատականների

Հարցման մեջ ընդգրկված համայնքների 30%-ի դեպքում, չնայած որ արոտավայրերի տարածքը բավարար է համայնքում առկա անասնազվաքանակին, դրանք վատ վիճակում են գտնվում և այս համայնքների 70%-ի դեպքում անասնատերերը օգտվում են այլ համայնքների արոտավայրերից, իսկ 30%-ի դեպքում նման հնարավորություն չկա:

Հետաքրքիր էր նաև պարզել արոտավայրերի կառավարման ոլորտում ներգրավված կողմերի՝ արոտավայրերի վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքների կարիքները: Հարցվողներին առաջարկվել է ընտրել, թե նշված թեմաներից որոնց վերաբերյալ ունեն լրացուցիչ գիտելիքների կարիք: Արդյունքում առաջարկված բոլոր թեմաների վերաբերյալ հարցվածների 50-53%-ը գիտելիքի կարիք են զգացել: Առաջարկվող թեմաները ներկայացված են Աղյուսակ 12-ում ստորև:

Աղյուսակ 12. Հարցման մասնակիցների գնահատականները արոտավայրերին և անասնապահությանը առնչվող որոշ թեմաների վերաբերյալ գիտելիքների կարիք ունենալ կամ չունենալու վերաբերյալ

	Այո	Ոչ	դ/պ
• Արոտավայրի կայուն օգտագործում			
Գյուղացիական տնտեսություն	38,5%	50,0%	11,5%
ՏԻՄ/Մասնագետ	57,5%	24,5%	17,9%
Ընդամենը	51,3%	32,9%	15,8%
• Արոտավայրի կառավարման պլանի մշակում			
Գյուղացիական տնտեսություն	37,5%	50,0%	12,5%
ՏԻՄ/Մասնագետ	57,1%	19,4%	23,5%
Ընդամենը	50,7%	29,5%	19,9%

	Այո	Ոչ	դ/պ
Մտուրային պահվածքի արդյունավետ կազմակերպում և կերապահովման խնդրի լուծում			
Գյուղացիական տնտեսություն	42,6%	57,4%	0,0%
ՏԻՄ/Մասնագետ	58,0%	28,0%	14,0%
Ընդամենը	53,1%	37,4%	9,5%
Կենդանիների արդյունավետ արածեցման կազմակերպում			
Գյուղացիական տնտեսություն	42,9%	57,1%	0,0%
ՏԻՄ/Մասնագետ	53,9%	27,5%	18,6%
Ընդամենը	50,3%	37,1%	12,6%

Հետաքրքիր է, որ ընտանեկան գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների համեմատ, հարցմանը մասնակցած ՏԻՄ ներկայացուցիչների և մասնագետների ավելի մեծ մասն է համարել, որ նշված բոլոր թեմաների վերաբերյալ գիտելիքի կարիք ունի: Սա մի կողմից ընդգծում է ոլորտի վերաբերյալ դրա կառավարման մեջ ներգրավված կողմերի գիտելիքների բարձրացման անհրաժեշտությունը և վերջիններիս կողմից նոր գիտելիքներ ստանալու պատրաստակամությունը, իսկ մյուս կողմից շեշտում է այն, որ գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչները ավելի քիչ են պատրաստակամ փոխել իրենց գործելաոճը, քանի որ գտնում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները արոտավայրերի կայուն շահագործման և կենդանիների պահվածքի վերաբերյալ:

5.2. Արոտավայրերի կառավարման ներկա իրավիճակը և խնդիրները

Արոտավայրերի կայուն կառավարման նպատակն է կազմակերպել արոտավայրերի օգտագործումն այնպես, որպեսզի հնարավոր լինի առավելագույնի հասցնել տնտեսությունների կողմից ձեռք բերված օգուտները, միևնույն ժամանակ ապահովելով արոտավայրերի բարձր արտադրողականություն և վերարտադրում, որպես բնական էկոհամակարգ:

Ինչպես արդեն նշվեց, հանրապետությունում արոտավայրերի կառավարման գործընթացը կազմակերպված չէ անհրաժեշտ մակարդակով: ՏԻՄ-երը, ում ուղղակի պարտականությունն է սահմանել, կազմակերպել և իրականացնել արոտավայրերի կառավարումը, լիարժեք չեն կատարում իրենց այս պարտականությունները: ՏԻՄ-երի ներգրավվածությունը արոտավայրերի կառավարման գործում հիմնականում սահմանափակվում է արոտավայրերի վարձակալության պայմանագրեր կնքելով և արոտային շրջանի սկզբի և ավարտի մասին հանրությանը տեղեկացնելով: Արոտավայրերի կայուն օգտագործում

ենթադրող այլ տիպի միջոցառումներում ՏԻՄ-երի ներգրավվածությունը շատ ավելի քիչ է՝ տես Աղյուսակ 10 (Գլուխ 5.1):

Այդուհանդերձ, արոտավայրերի կառավարման գործընթացի ներդրումը հանրապետությունում չի կարելի կապել միայն ՏԻՄ-երի հետ, այլ պետք է դիտարկել համապարփակ՝ հաշվի առնելով գոյություն ունեցող միջավայրի սահմանափակումները:

Այս տեսանկյունից հանրապետությունում արոտավայրերի կառավարման գործընթացը ներդնել խանգարող գործոնները կարելի է դասակարգել որպես՝

1. **Կառուցվածքային խնդիրներ**, որոնք պայմանավորված են տնտեսությունների փոքր չափերով, մասնագիտացման ցածր մակարդակով:
2. **Կազմակերպչական խնդիրներ**, որոնք պայմանավորված են միմյանց հետ համագործակցելու ցածր մակարդակով:
3. **Տնտեսական և սոցիալական խնդիրներ**, սրանց մեջ կարող ենք ներառել ՏԻՄ-երի ֆինանսական վիճակը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, անասնապահության եկամտաբերությունը:
4. **Բնական և տեխնիկական սահմանափակումներ**, ինչպիսիք են՝ արոտավայրերի աշխարհագրական դիրքը, արածեցման համար նպաստավոր պայմանների առկայությունը, բնակլիմայական պայմանները:
5. **Ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ**, ինչպիսիք են՝ մարդկային ռեսուրսների բացակայությունը, արոտավայրերի վերաբերյալ գիտելիք, տեղեկատվություն ստանալու սահմանափակ հնարավորությունները:
6. **Ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ**, ինչպիսիք են՝ ճանապարհների, մակատեղերի, ջրելատեղերի կամ ճամբարային ենթակառուցվածքների հետ կապված խնդիրները:
7. **Իրավական գործոններ**՝ օրենքների, ընթացակարգերի առկայությունը և դրանց կիրարկումը, պայմանագրային հարաբերությունները և դրանց արժեքը:
8. **Քաղաքական և ինստիտուցիոնալ խնդիրներ**, սրանց շարքին են դասվում ՏԻՄ-երի և պետական կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները, ինչպես նաև գյուղական համայնքներում պետության քաղաքականությունը:

Նախքան դրանցից յուրաքանչյուրին անդրադառնալը հարկ ենք համարում նշել, որ դրանց միջև գոյություն ունի ոչ միայն հստակ արտահայտված պատճառահետևանքային կապ, այլև առկա են փակ շղթայական կապ, երբ

գոյություն ունեցող մի խնդիրը բերում է երկրորդին, որն իր հերթին խորացնում է իրեն ծնած խնդիրը:

Ստորև կքննարկենք վերոնշյալ խնդիրներից յուրաքանչյուրը առանձին-առանձին:

Կառուցվածքային և կազմակերպչական խնդիրներ

Հանրապետությունում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների գերակշիռ մասը փոքր անասնատերեր են (Տես Աղյուսակ 4 և 5, Գլուխ 4.2), ում համար անասնապահությունը հիմնական զբաղմունք չի հանդիսանում: Գյուղական բնակավայրում ապրող մարդու համար բնական է համարվում ԽԵԿ կամ ՄԵԿ ունենալը, քանի որ այն ընտանիքի կարիքների համար մատչելի և որակյալ սնունդ ապահովելու միջոց է, իսկ որոշ դեպքերում նաև լրացուցիչ եկամտի աղբյուր:

Անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների շրջանում ցածր է նաև մասնագիտացման մակարդակը: Համաձայն ԱՎԿ-ի՝ հանրապետության ընտանեկան գյուղացիական տնտեսությունների միայն 4%-ն է, որ զբաղվում է միայն անասնապահությամբ, իսկ 54%-ը այն համատեղում է բուսաբուծության հետ:

Փոքր անասնազվիսաքանակը և մասնագիտացման ցածր մակարդակը ծնում են մի իրավիճակ, երբ անասնատիրոջ համար պակաս կարևոր է լինում անասնապահությունից ստացված եկամուտների ավելացումը, դրանց ավելացման համար ներդրումներ անելը կամ էլ լրացուցիչ աշխատանք կատարելը: Նրանց համար անասնապահությունը ոչ թե եկամտի աղբյուր է, այլ ապրուստի միջոց:

«Մեր ժողովուրդը՝ 90%-ը, անասնապահությունից ոչ մի եկամտի ակնկալիք չունի: Ուղղակի են հին թվից, որ եկել ա աղաթով, որ տունը կաթ լինի, մածուն լինի, պահում ա դրա համար:» Կոտայք

Արդյունքում, հանրապետության բոլոր համայնքներում առկա են արոտավայրերի կառավարման գրեթե միանման խնդիրներ՝ գերծանրաբեռնված են համայնքամերձ արոտավայրերը և թերարածեցված են հեռագնա արոտավայրերը: Համայնքի անասնազվիսաքանակի մեծ մասը պատկանում է փոքր անասնատերերին, ովքեր գերադասում են օգտվել համայնքամերձ արոտավայրերից և նպատակահարմար չեն համարում հեռագնա արոտավայրից օգտվելը:

«Մանր ֆերմերները շատ քիչ դեպքերում են միավորվում ու որոշ տարիքային անասուններին հեռագնա արոտներ տանում: Հիմնականում արածեցվում է բնակավայրի մոտակա տարածքները, որոնք որ շատ շուտ դեգրադացվում են:» Միսիան

Այս մոտեցումն ունի իր արդարացումը՝ 1-2 գլուխ ԽԵԿ ունեցող տնտեսության համար տեխնիկական և տնտեսական առումով արդարացված չէ իր անասունին տանել հեռագնա արոտավայր, քանի որ անասնատերը կտրվում է իր ընտանիքից, այլ աշխատանքից, ժամանակ և ֆինանսական միջոցներ է ծախսում, ինչը 1-2 կենդանու պարագայում ֆինանսապես իրեն չի արդարացնում հատկապես, եթե անասնապահությունը հիմնական զբաղմունք չէ և տվյալ անասունից ստացված մթերքը իր ընտանիքի ամենօրյա սննդակարգի մի մասն է։ Հիշեցնենք, որ հարցման մասնակիցների 40,8%-ը հեռագնա արոտավայրում կենդանիների արածեցումը տնտեսական առումով արդարացված չի համարել՝ առանձին տնային տնտեսությունների ունեցած կենդանիների փոքր թվով պայմանավորված։

Խնդիրը կարելի է լուծել կազմակերպչական մեխանիզմների ներդրմամբ և փոքր անասնատերերի շրջանում համագործակցության տարբեր մեխանիզմների ստեղծմամբ, օրինակ ոչ ֆորմալ խմբեր կամ կոոպերատիվներ, որոնք կսահմանեն խմբի անդամների համար համագործակցության արդարացի պայմաններ և անասնատիրոջը հնարավորություն կտան ավելի քիչ ժամանակ, աշխատանք կամ ֆինանսական միջոցներ ներդնելով կազմակերպել կենդանու պահվածքը հեռագնա արոտավայրում և ստանալ լրացուցիչ եկամուտ ավելացած մթերատվության հաշվին։

Նման համագործակցության ոչ ֆորմալ մեխանիզմներ այժմ համայնքներում գործում է միայն ոչ կթու անասունների պարագայում, երբ համայնքի ամբողջ գլխաքանակը նախրապանը տեղափոխում է հեռագնա արոտավայր։ Սակայն, կթու անասուններին նույն կերպ հեռագնա արոտավայր ուղարկելը համայնքներում առայժմ բարդ խնդիր է հանդիսանում և սա պայմանավորված է ոչ միայն կազմակերպչական հարցերով, այլ նաև անասնատերերի միջև և անասնատերերի ու գործընթացում ներգրավված անձանց միջև փոխվստահության պակասով։ Լավ խնամքի ապահովման, կիթ իրականացնելու, յուրաքանչյուր կովից ստացված կաթի ճիշտ քանակը գրանցելու և յուրաքանչյուր անասնատիրոջը ճիշտ քանակի կաթ կամ վերամշակված մթերք տրամադրելու հարցերում անասնատերերի շրջանում չկա վստահություն։

*« - Ապարատով կթեց մեկը, ստացավ մի տոննա կաթ, բերեց ցույց տվեց 600 կիլո
կամ որ փող եղավ մեջը՝ սկզբում ձեռով կկթի, նոր կտա ապառատին։*

*-Լավէտի, կթեց, ապառատը հաշվեց։ Դու ի՞նչ գիտես քո ոչխարը երկու գառ բերեց,
երեք թե մեկ, հորթը էլ չեմ ասում։ Այսինքն էլի մեկին պետք ա վարձենք, որ
ստուգի։*

- Մեր գիտակցականը դրան չի հասել, որ մենք կարանանք։»Վարդենիս

Կառուցվածքային խնդիրներից են նաև հանրապետությունում սեփականաշնորհված գյուղատնտեսական հողերի փոքր չափերը և մասնատվածությունը, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում տնտեսությունների կողմից կերարտադրության կազմակերպման և հետևաբար անասունների կերապահովման խնդրի լուծման վրա:

Տնտեսական և սոցիալական խնդիրներ

Համայնքում արոտօգտագործման կառավարմանը խոչընդոտող տնտեսական և սոցիալական խնդիրները հիմնականում վերաբերում են ՏԻՄ-երի և որոշ չափով՝ անասնապահների շրջանում ֆինանսական ռեսուրսների սղությանը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրեթե միշտ ՏԻՄ-երն ունեն ֆինանսական միջոցների սղության խնդիր և սա է պատճառներից մեկը, թե ինչու համայնքներում չեն իրականացվում արոտավայրերի կայուն կառավարման իրականացման համար անհրաժեշտ վերականգնման, բարելավման կամ ենթակառուցվածքների կառուցման աշխատանքներ: Ինչպես արդեն նշվել է, ուսումնասիրության մեջ ընդգրկված այն բոլոր համայնքներում, որտեղ իրականացվել են նման աշխատանքներ, ՏԻՄ-երը հանդես են եկել բացառապես որպես համաֆինանսավորողներ և անհրաժեշտ ծախսերի մեծ մասը ներդրել են այլ կառույցները:

«Համայնքն այնքան ներուժ չունի, որ կարողանա ինքնուրույն իրականացնել ենթակառուցվածքների պատրաստման աշխատանքներ, սակայն որոշակի աշխատանք արվում է, ջրախողովակներ են անցկացվում խմոցներին ջուր հասցնելու համար:» Միսիան

*«- Համայնքապետին ո՞ւր ա գումար
- Համայնքապետարանը փող չունի՝ աշխատող պահի
- Համայնքապետը դաշտամիջյան ճանապարհները չեն տարին մի անգամ գոնե գրեյդեր անում*

- Պետությունն ա իրանց դոտացիա տալիս, էդ էլ չլինի, էս մեր մարզի համայնքներից, էն խոշոր համայնքները կարան մենակ գոյատևեն, էն փոքրները ոչ մեկն էլ չեն կարա» Աշտարակ

Համայնքային բյուջեների սղությամբ է պայմանավորված նաև արոտավայրերի կառավարման աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ անձնակազմի և մասնագետների բացակայությունը: Ի դեպ այս մոտեցումը կիսում են, թե ՏԻՄ ներկայացուցիչները, թե գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչները:

ՏԻՄ մասին օրենքի համաձայն՝ ՏԻՄ-երի բյուջեն ձևավորվում է համայնքից հավաքագրված հարկերի, տուրքերի, այլ եկամուտների, այդ թվում՝ համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի (ներառյալ նաև արոտավայրերի) վարձակալության դիմաց գանձվող վարձավճարների, պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումների (դոտացիաներ, սուբվենցիաներ) և այլ մուտքերի հաշվին:

Միննույն ժամանակ ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի համաձայն՝ ՏԻՄ բյուջեներում իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար առկա են հստակ սահմանված ծախսային ուղղություններ, որոնցում արոտավայրերին վերաբերող առանձին ուղղություն չկա: Սակայն, նման ծախսերը կարող են ներառվել՝ *գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն* տողի մեջ:

Աղյուսակ 13-ում ներկայացված են 2018 թվականին հանրապետությունում արոտագտագործման դիմաց համայնքային բյուջե մուտքագրված վարձավճարների հարաբերությունը համայնքների բյուջեների ընդհանուր մուտքերին՝ ըստ մարզերի և նույն ժամանակահատվածում, ըստ մարզերի, համայնքային բյուջեներից *«գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության»* ծախսային տողով կատարված ելքերի հարաբերությունը բյուջեների ընդհանուր ելքերին:

Այսպես, չնայած արոտավայրերի օգտագործումից ստացված եկամուտները հիմնականում համայնքային բյուջեյի փոքր մասն են կազմում և միջինում հանրապետությունում մարզի մակարդակով դրանք չեն գերազանցում համայնքային բյուջեների 4,6%-ը՝ նույն բյուջեից *«գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության»* համար կատարված ընդհանուր ծախսերը միջինում մարզերում կազմում են համայնքների բոլոր ծախսերի ընդամենը 1,4%-ը:

Աղյուսակ 13. Արոտավայրերից ստացված և դրանց ուղղված ծախսերի մասնաբաժինը ՀՀ համայնքների բյուջեների մուտքերում և ելքերում, 2018թ

Մարզ	% հողերի վարձավճարներ/ ընդ. եկամուտին	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն/ընդ. ծախսերին
Արագածոտն	2,6%	0,9%
Արարատ	2,1%	0,6%
Արմավիր	1,8%	0,8%
Գեղարքունիք	4,0%	3,4%
Լոռի	3,4%	0,6%


Մարզ	% հողերի վարձավճարներ/ ընդ. եկամտին	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն/ընդ. ծախսերին
Կոտայք	2,2%	0,7%
Ծիրակ	3,7%	1,2%
Սյունիք	6,8%	1,0%
Վայոց ձոր	17,0%	3,1%
Տավուշ	2,2%	1,2%
Միջինում՝	4,6%	1,4%

Աղբյուրը՝ ՏԿԶՆ, ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր և եկամուտներ, 2019

Արոտագտագործումից ստացված եկամուտների մասով հանրապետությունում առաջատարը Վայոց ձորի և Սյունիքի մարզերն են, որտեղ Զառիթափ, Ջերմուկ և Գորայք համայնքների 2018 թվականի փաստացի բյուջեների համապատասխանաբար 46, 40 և 75 տոկոսը (ընդհանուր մոտ 452 մլն. դրամ) գոյացել է համայնքային և համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականության հողերի վարձավճարներից: Նշանակում է՝ բնական պայմանների առկայության պարագայում և ՏԻՄ մարմինների կողմից վարած ճիշտ քաղաքականության արդյունքում հնարավոր է զգալի միջոցներ ստեղծել, որոնք կարող են ուղղվել արոտավայրերի կառավարմանը և վերականգնմանը: Ի դեպ նշված երեք համայնքում միասին նույն ժամանակահատվածում «գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության» տողով կատարվել է 41 միլիոն դրամի ծախս:

Բացառելով այլ աղբյուրներից ստացված եկամուտները՝ արոտագտագործողների տնտեսական հնարավորությունները հիմնականում կախված են անասնապահությունից ստացված եկամուտներից, այն է՝ հիմնականում կաթի և մսի գներից: ԱՎԿ-ի հրապարակումների¹⁴ համաձայն 2007-2017թթ ընթացքում, արտադրողի կողմից իրացվող թե կաթի, թե մսի գները բարձրացել են: 2017 թվականին արտադրողի կողմից իրացված կաթի միջին տարեկան գինը կազմել է 145 դրամ/լիտր, տավարի մսինը՝ 2 157 դրամ/կգ, իսկ ոչխարինը՝ 2 309 դրամ/կգ: Այդուհանդերձ, ուսումնասիրության մեջ ներգրավված անասնապահները դժգոհ էին իրացման գներից և փաստում էին, որ գործող գների պարագայում անասնապահությունը եկամտաբեր չէ:

¹⁴Գները և գների ինդեքսները ՀՀ-ում



Պատկեր 20. Արտադրողի կողմից տավարի մսի և կաթի իրացման միջին տարեկան գինը

Անասնապահության ցածր եկամտաբերությունը ծնում է հիասթափություն և նվազեցնում է լուրսի և դրա գոյությունը ապահովող արտադարյի հանդեպ հոգածության աստիճանը: Ոլորտի հանդեպ հիասթափությունը նաև բերում է դրան սպասարկող ռեսուրսների անխնա վատնման և դրանց համար չվճարելու միտում է ձևավորվում:

«Յուրաքանչյուրն էթե զգաց, որ եկամուտ կա, ինքը սաղից լավ կկառավարի, սաղից շատ էլ եկամուտ կստանա... էթե ես էսօր ֆերմեր եմ, ունեմ շատ անասուն, ուզում եմ սրանից եկամուտ ունենամ, խնդրելով լինի, թե համոզելով լինի. կխնդրեմ Տարոն ջան մի փչացրու, սրանից ինձ եկամուտ կա: Բեր կեսը դու կերցրու, կեսը ես կերցնեմ, օրինակ: Էսօր սա ինձ չի հետաքրքրում, սրանից ինձ ոչ օգուտ է, ոչ վնաս, ով ուզում ա թող կերցնի: Ես անիմաստ խի գնամ ասեմ, մի հատ էլ վատամարդ լինեմ: Երկու կով ա, ոնց ասես կարածի:» Վարդենիս

Սակայն, հանուն արդարության, պետք է նշել, որ անասնապահության ցածր եկամտաբերությունը ոչ միայն կախված է իրացման գների ցածր լինելուց, այլ նաև անասունների ցածր մթերատվությունից, ինչն իր հերթին սխալ պահվածքի և կերապահովման կազմակերպման, իսկ որոշ դեպքերում նաև՝ անասունների ցեղային հատկանիշների կորստի հետևանք է:

Ինչպես նշվել էր վերևում՝ համայնքներում զգալի թիվ են կազմում փոքր անասնազվաքանակ ունեցողները, ովքեր անասնապահությամբ են զբաղվում ոչ թե դրամական եկամուտ ստանալու, այլ բացառապես իրենց ընտանիքին բնամթերքով ապահովելու համար: Այս խմբի արտոգտագործման մոտեցումները հաճախ կործանարար են լինում արտադարյերի էկոլոգիա-տնտեսական վիճակի վրա, քանի որ հիմնականում այս խմբի արտոգտագործողներն են, որ հրաժարվում են կենդանիներին հեռագնա արտադարյ տեղափոխել,

կենդանիներին ազատ և անկանոն բաց են թողնում համայնքի տարածքում, արոտի օգտագործման համար պայմանագրեր չեն կնքում, դրանց համար չեն վճարում և այլն:

Մյուս կողմից ՏԻՄ-երի կողմից այս խմբի արոտօգտագործման մոտեցումների կանոնակարգումը ենթադրում է համայնքում սոցիալական խնդիրների խորացում, ինչը գյուղական բնակչության շրջանում առկա արտագաղթի և 26,8% աղքատության պայմաններում խիստ ցանկալի չէ:

«Ոչ որ իրավունք չունի գյուղացուն ասի էսօր փողը չես տվել ու էլ չթողես: Ըտենց բան ո՞նց կլինի:» Նոր գյուղ

«Համայնքը չի կարա էդ բնակչին ասի կտաք կթողնեմ արածեցնենք, չէ՛ չէ... Չունի, ասում ա կտամ, հո չի ասում չեմ տա, ասում ա թող էդ անասունը արածի կտամ ձեռիս փող եղավ:» Աշտարակ

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ արոտավայրերի կառավարման ընթացքում փոքր և մեծ անասնատերերի հանդեպ համայնքներում գործող այս երկակի մոտեցումը հատկապես վարձավճարների գանձման հարցում որոշ համայնքներում բարդություններ է առաջ բերում, քանի որ արդեն խոշոր անասնատերերն են սկսում հրաժարվել վճարելուց: Պատճառաբանությունը շատ պարզ է՝

«Ես ունեմ 70 հատ կով, ես վեկալել եմ 50հա վարձակալել եմ: Ժամը 6-ին սարում ես դուռը բացում եմ, իմ անասունը գնում ա որտեղ ուզում ա արածում ա, իրիկունը՝ գալիս մտնում ա ավալի մեջը նստում ա: Էն գյուղացի մեկը հելավ եկավ սար՝ գյուղից 150 հատ անասուն հավաքեց բերեց: Նույն ձևի էլ ինքը դուռը բացեց հելան խառնվան իմ անասուններին, ով որտեղ արածեց ջուրը խման, իրիկունն եկան, իրանը գնաց իրանը, իմը իմ գոմը: 3 տարի վարձակալեցի, հետո հասկացա, որ տարեկան էս 25000 դրամը, որ պիտի տանեմ վարձ մուծեմ, խի մուծեմ, հենա թող իմ երեխեն ուտի էտի» Նոր գյուղ

Այդուհանդերձ, չի կարելի փաստել, որ փոքր անասնազվաքանակ ունեցող անասնատերերը ընդհանրապես չեն վճարում արոտների օգտագործման համար:

Բնական և տեխնիկական սահմանափակումներ

Արոտավայրերի կառավարման կազմակերպման վրա մեծապես ազդում են նաև բնական միջավայրի կողմից առաջադրված, ինչպես նաև տարբեր տեխնիկական պայմաններով առաջադրված սահմանափակումները:

Հանրապետությունում շատ են արոտավայրերը, որոնք գտնվում են պետական սահմանի հարևանությամբ և եթե որոշ դեպքերում արոտավայրերի

հասանելիությունը սահմանափակված է, քանի որ սահմանապահները վարժանքներ կամ այլ աշխատանքներ են իրականացնում տեղանքում, ապա մյուս դեպքերում արոտավայրից օգտվելը ուղղակի վտանգավոր է, քանի որ գտնվում է թշնամու կրակի տակ:

Որոշ համայնքներում արոտավայրերի հասանելիությունը խնդիր է նաև արոտավայր տանող ճանապարհների բացակայության պատճառով, օրինակ երբ արոտավայր տանող ճանապարհը անցում է անտառով, արգելոցով վարելահողերի միջով կամ նույնիսկ քաղաքային բնակավայրի, զբոսաշրջային կենտրոնի միջով: Բացի սրանից, արոտավայրերի զգալի տարածքներ հասանելի չեն դրանց խիստ ռելիեֆայնության պատճառով:

Բնական պայմանների հետ կապված սահմանափակումներից են նաև արոտավայրերում ջրի աղբյուրների բացակայությունը կամ դրանց սակավաջրությունը կամ անկանոն հոսքը, ինչը թույլ չի տալիս արդյունավետ պլանավորել արոտավայրի օգտագործումը:

*«- Չենք կարող անասունը նենց տանել դաշտ, որ իրենց տարածքով չանցնի: Հետ բերենք, էլի իրանց տարածքով չանցնի: Մեր մոտ խոնցներն էլ չի աշխատում, որովհետև մեզ մոտ ջուր չկա, որ սարերում խոնցներ դնենք, մենք ծովում ենք ստիպված ջուր տալիս:
- Այսինքն, աղբյուր էլ չկա՞, որ էդտեղ ջրախոնց դրվի:
-Չէ, մարդկանց խմելու համար էլ աղբյուր չկա. մենք ստիպված ծով ենք տանում, որ ջուր խմի: Էլի, երբ ցանկանան, կարան գան տուգանեն:» **Ճամբարակ***

Որոշ բարձր լեռնային հեռագնա արոտավայրերի հասանելիությունը սահմանափակ է, քանի որ նման բարձրության վրա երկար ժամանակ անցկացնելը վնաս է հասցնում մարդու առողջությանը և անասնատերերը կամ նախրապանները գերադասում այդ արոտավայրերից չօգտվել:

Կան արոտավայրեր, որտեղ կլիման շատ չորային է և հերթափոխ-արոտաբաժնային եղանակով արոտօգտագործման կամարոտաշրջանառության կազմակերպման դեպքում «հանգիստ» մնացած արոտավայրերում հրդեհ է բռնկվում: Բացի այդ կան արոտավայրեր, որտեղ անձրևների բացակայության պարագայում բուսականություն շատ քիչ է ձևավորվում և հնարավոր չի լինում արոտօգտագործում կազմակերպել ըստ պլանավորածի:

Ռեսուրսների և ենթակառուցվածքների բացակայությամբ պայմանավորված խնդիրներ

Արոտավայրերում մտահոգության խիստ առիթ են հանդիսանում ենթակառուցվածքները, թե առկայության, թե քանակության և թե շահագործման համար պիտանի լինել-չլինելու աստիճանի տեսանկյունից:

Ինչպես քննարկվել է վերևում, ուսումնասիրված բոլոր համայնքներում առկա են ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ (տես Պատկեր 16 և 17): Առաջնային են՝ ջրելատեղերի, ճանապարհների, հեռագնա արոտավայրերում ճամբարային ենթակառուցվածքների, կիթ իրականացնելու, կաթը պահպանելու և վերամշակելու հետ կապված խնդիրները:

Ճանապարհների բացակայությունը, դրանց անբարեկարգ վիճակը մի կողմից բերում է նրան, որ կենդանիները երկար ժամանակ և շատ էներգիա են ծախսում արոտավայր հասնելու և վերադառնալու համար, իսկ մյուս կողմից՝ բարդանում է կուտակված կաթի տեղափոխումը, նախրապանի հետ հաղորդակցումը, արտակարգ իրավիճակներում սահմանափակ են արագ արձագանքելու հնարավորությունները և այլն:

Արոտավայրում ջրելատեղերի բացակայությունը անհնար է դարձնում ամռան ամիսներին կենդանիների պահվածքը արոտավայրում: Սրա հետ մեկտեղ արոտավայրի տարածքի համեմատ ջրելատեղերի սակավությունը բերում է ջրելատեղերին մոտիկ արոտավայրերի տարածքի դեգրադացման, քանի որ այդ հատվածում է կուտակվում հիմնական անասնազվաքանակը:

Ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է արոտների կայուն կառավարումը, համայնքների տիրապետման տակ գտնվող արոտները դարձնում օգտագործման համար փաստացի ոչ պիտանի տարածք և սահմանափակում է անասնապահության ոլորտի զարգացման հնարավորությունները համայնքներում:

Ավելացնենք նաև, որ ենթակառուցվածքների բացակայությունը և դրանց արդյունքում արոտավայրերից ստացվող տնտեսական արդյունքի նվազումը ուղղակի ազդում է արոտավայրերի համար վարձավճարների գանձման գործընթացի վրա, քանի որ անասնատերերը, չստանալով ակնկալվող արդյունք, հրաժարվում են վճարել արոտի օգտագործման դիմաց:

«Եթե գնում ա, սոված գալիս ա, ես տանը հավելյալ իրան կեր եմ տալիս, այսինքն ես օգուտ չունեմ դաշտից, էլ խի՞ (գումար) տամ:» Վարդենիս

Արոտավայրերի կառավարման համար ոչ պակաս կարևոր են նաև մարդկային ռեսուրսների առկայությունն ու գիտակցական մակարդակը: Ինչպես արդեն նշվել

է, ՏԻՄ-երում չկան բավարար քանակի անհարժեշտ մասնագետներ և հաստիքներ արոտավայրերի կառավարման պլանավորման, իրականացման և վերահսկման համար:

ՏԻՄ աշխատակազմում պարտադիր չէ ունենալ ագրոնոմի, հողաշինարարի կամ արոտների օգտագործման և կառավարման հետ առնչություն ունեցող որևէ այլ մասնագետի հաստիք: Ուստի, եթե համայնքում կա նման հաստիք, ապա լավագույն դեպքում այն զբաղեցնում է մասնագիտական կրթություն ստացած գյուղատնտես, ով սակայն չի կարող միայնակ ապահովել արոտավայրի կայուն կառավարումը, քանի որ գործընթացի ներդրումը անընդհատ վերահսկում է պահանջում, հատկապես սկզբնական շրջանում: Որոշ համայնքներում առկա է հանդապահ, ում խնդիրը հիմնականում կանխելն է այլ համայնքի անասնագիտաքանակի մուտքը համայնքի վարչական տարածք, կամ համայնքի անասնագիտաքանակի մուտքը բնակիչների սեփականաշնորհված հողեր:

Համայնքներում մարդկային ռեսուրսների հետ կապված մեկ այլ խնդիր է նաև նախրապանի բացակայությունը, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ՝ նախրապանի աշխատանքը պատասխանատու, վտանգավոր և ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող աշխատանք է և վարձատրությունը երբեմն չի համապատասխանում կատարված աշխատանքին: Ապա՝ արոտավայրերում բացակայում են պայմանները, որոնք հովվի համար գրավիչ կլինեն. չկան կացարան, էլեկտրաէներգիա, հեռահաղորդակցման հնարավորություններ: Բացի այս, առկա է նաև հոգեբանական խնդիր, սոցիալական պայմաններից ելնելով, մարդիկ ունեն «ծառա չլինելու» բարդույթ, երբ չեն ցանկանում աշխատել իրենց համագյուղացու մոտ:

Հովիվների մեծ պահանջարկը բերում է դրանց դիրքի բարձրացմանը և չարաշահմանը, ինչը շատ ժամանակ խոչընդոտում է արոտի կառավարումը, քանի որ ցանկացած ուղղորդման պարագայում, որը չի բխում հովվի շահերից (հարմարությունից), առաջանում է կոնֆլիկտ և նախրապանը հրաժարվում է հոտը պահելուց:

«Այդ 3 հոգուն մի կերպ ճարում ենք, համոզում ենք, որ նախիրը հանեն ու արի դրանց ասա արոտը հերթափոխով արածացրու:» Գյումրի

«10օր կարածեցնե, էն երկրորդ օրը, որ ոտը մի տեղ բռնեց, կսե չիբուխը դու գնա, կխոսիս վրեն, դու ում վրա կխոսիս, չեմ երթա» Գյումրի

Կան նաև դեպքեր, երբ համայնքներում նախրապան չեն պահում, քանի որ անասնապահները չեն ցանկանում ավելորդ գումար ծախսել և նախընտրում են

ընտանիքից որևէ մեկին «ուղարկել հերթի»: Վերջին տարբերակը հիմնականում գործում է քիչ անասնազվաքանակ ունեցող տնտեսությունների դեպքում, երբ անասունը պահվում է գուտ ընտանիքի կարիքների բավարարման համար և ավելորդ գումար նախընտրում են չծախսել, երբ հատկապես, տան ոչ բոլոր անդամներն են զբաղված:

«Մենք ինչի՞ հովիվ չենք պահում՝ որտեղ մարդը ասում ա ես աշունը չեմ կարա 15 000 տամ հովիվին: Ստիպված մարդը իրա ընտանիքից մեկին հերթի համար ուղարկում ա:» Նոր Գյուղ

Հարկ է նաև նշել, որ նախրապանի հետ հարաբերությունները հիմնականում ոչ-ֆորմալ բնույթ են կրում և աշխատանքային հարաբերությունները կառուցվում են բարոյական պարտավորությունների շրջանակում:

Կայուն կառավարման ապահովման համար երրորդ կարևոր ռեսուրսը գիտելիքն է: Թե արոտագտագործողները, թե նախրապանները և թե ՏԻՄ ներկայացուցիչները ունեն արոտավայրերի կառավարման, դրա անհրաժեշտության, տնտեսական արդարացվածության, ինչպես նաև պրակտիկայում դրա իրականացման և խնդիրների առաջացման դեպքում դրանց լուծման մեխանիզմների վերաբերյալ հմտությունների, գիտելիքների և կրթության կարիք:

Այսօր անասնապահության ցածր եկամտաբերության հիմնական պատճառը հենց գիտելիքի և մասնագիտական ունակությունների պակասն է: Եվ սա են հենց փաստում ուսումնասիրության մասնակիցները՝

«Զովունիում անասուն՝ կով պահող եզդի կա, էտի տարել են, մեր գյուղի ժողովուրդը գնացել ա իրանց մոտը անասուն ա պահում: Էնտեղ ավելի շատ եկամուտ են ստանում, քան թե մեր գյուղում: Չենք կարում կազմակերպենք:» Աշտարակ

Արոտների կառավարման վերաբերյալ ցածր գիտակցական մակարդակի պարագայում անհնար է դառնում կառավարման իրականացումը, քանի որ արոտագտագործողները չեն գիտակցում, թե հանուն ինչի են «գոհողությունները»:

Մյուս կողմից, նոր գիտելիքի կարիք ունենալը խիստ տարբեր է արտահայտված արոտագտագործողների շրջանում, ոմանք կարծում են, որ մասնագիտական ուղղորդման կարիք բացարձակ չկա: Տես Աղյուսակ 12, գլուխ 5.1:

Իրավական գործոններ

Արոտավայրերի կառավարման խոչընդոտներից հաջորդը անկատար իրավական դաշտն է:

Հանրապետությունում փաստացի գործում է արոտների օգտագործման իրար զուգահեռ երկու տեսակ իրավահարաբերություններ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ, որոնց շրջանակում արոտօգտագործողները օգտվում են միևնույն հնարավորություններից, բայց ունեն տարբեր իրավական և ֆինանսական պատասխանատվության աստիճան: Միևնույն ժամանակ, արոտօգտագործման այս անհավասար պայմանները վտանգում են ոլորտում ֆորմալ հարաբերությունների ընդհանրապես գոյությունը:


Մի կողմից համայնքի վարչական տարածքներում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի օգտագործման և դրանցից օգտվելու համար կան սահմանված իրավական նորմեր և պահանջներ, իսկ մյուս կողմից՝ համայնքի սեփականության արոտավայրերի համար սրանք բացակայում են:

Արդյունքում՝ համայնքի վարչական տարածքներում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի օգտագործման համար պարտադիր իրավական հիմք է հանդիսանում արոտօգտագործման (կամ վարձակալության) պայմանագիրը և դրա բացակայության պարագայում արոտօգտագործողը կարող է պատասխանատվության ենթարկվել: Բայց միևնույն ժամանակ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերը օգտագործման կամ վարձակալության հանձնելու համար իրավական պարտավորվածություն չկա սահմանված: Այսպիսով, հանդիպում են դեպքեր, երբ համայնքի ավագանին կայացնում է որոշում համայնքամերձ արոտավայրերի համար վարձավճար չգանձել և բնակիչների անասնազվիսաքանակի համար ազատ արածեցում թույլատրել:

Արոտավայրերի օգտագործման հանդեպնման երկակի մոտեցումը, անշուշտ խոչընդոտում է արոտավայրերի միասնական կառավարման մեխանիզմի կիրառումը և բացասաբար է անդրադառնում արոտավայրերի էկոլոգիատնտեսական վիճակի վրա: Արոտավայրի՝ առանց պայմանագրի (կամ պայմանավորվածության) օգտագործումը թույլ չի տալիս կանոնակարգել արոտավայրում անասունների քանակը, շարժը, ինչը մեծացնում է արոտավայրերի գերծանրաբեռնման վտանգը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արոտների օգտագործման պայմանագրեր հիմնականում կնքվում են հեռագնա արոտավայրերի համար, այն էլ համայնքի մակարդակով խոշոր անասնատեր համարվող տնտեսությունների և այլ համայնքներից տվյալ համայնքի արոտավայրից օգտվող անասնապահների հետ: Ուսումնասիրության մեջ

ներգրավված համայնքների 51%-ում արոտագործման պայմանագրեր չեն կնքվում:



Պատկեր 21. Արոտավայրի օգտագործման/վարձակալության պայմանագրի առկայությունը և դրանց ժամկետը ուսումնասիրված համայնքներում

Արոտագործման պայմանագրերը հիմնականում կնքվում են «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու» մասին որոշման մեջ ներառված օրինակելի ձևին համապատասխան, որի դրույթները հիմնականում ընդունելի են կողմերի համար: Սակայն, հարկ է նշել, որ պայմանագրի դրույթների պահպանման վերահսկում գործնականում չի կատարվում:

Ինչ վերաբերում է սահմանված վարձավճարների չափերին, ապա դրանք ևս հիմնականում ընդունելի են արոտագործողների կողմից և դրանց չափը որոշիչ դեր չի խաղում վճարում անել-չանելու հարցում: Նշենք նաև, որ կան համայնքներ, որտեղ պետական արոտավայրերի համար սահմանված դրույքաչափերը չեն համապատասխանում արոտավայրի որակական հատկանիշներին:

Ավելացնենք նաև որ արոտագործման համար պայմանագրերի կնքումը և վարձավճարների հավաքագրման աշխատանքների հաջողությունները խիստ կապված են ՏԻՄ-երի կայացվածության և համայնքում նրանց կողմից տարվող աշխատանքի հետ: Կան համայնքներ, որտեղ չնայած հանդիպում են վերը նշված սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային խնդիրները, բայց արոտագործման համար վճարումները բարեխղճորեն արվում են:

Ոլորտում առկա իրավական խնդիրներից են նաև տարբեր բնակավայրերի միջև անասնազվիսաքանակի տեղափոխման գործընթացի կանոնակարգման իրավական

հիմքերի բացակայությունը: Սահմանված ընթացակարգերի, չափանիշների բացակայության պարագայում, ներկայումս գործընթացը կազմակերպվում է ըստ անասնագիտաբանակը տեղափոխողի հայեցողության, ինչի արդյունքում մեծ քանակի անասնագիտաբանակի համայնքից համայնք տեղափոխումը խիստ բացասաբար է անդրադառնում դրանց ճանապարհին ընկած արոտավայրերի և արոտային ենթակառուցվածքների վրա, ինչպես նաև տարբեր հիվանդությունների տարածման վտանգ է ստեղծում:

Քաղաքական և ինստիտուցիոնալ խնդիրներ

Ինչպես բազմիցս արդեն նշվել է ՏԻՄ-երը չեն իրականացնում արոտավայրերի կառավարման իրենց պարտականությունները և դրանցից բխող գործառույթները անհրաժեշտ ծավալով և պատասխանատվությամբ:

Սրա հիմնական պատճառներից մեկն է ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ կայացվածության ցածր մակարդակը, որի պարագայում ՏԻՄ-ը չի գիտակցում իր վրա դրված պարտականությունները և դրանց իրականացման համար միջոցառումներ չի ձեռնարկում՝ ակնկալելով, որ օրինակ արոտավայրի կառավարումը, կամ արոտավայրում խմոցի վերականգնումը անասնատիրոջ կամ պետության պարտականությունն է և ինքը ոչինչ անել չի կարող:

Բացի այս, որպես ընտրովի ինքնակառավարման մարմին, ՏԻՄ ներկայացուցիչները ունեն վերընտրվելու խնդիր: Ուստի, հաշվի առնելով հանրապետության գյուղական համայնքների գերակշիռ մասում առկա բազում հիմնախնդիրները, օրինակ՝ խմելու ջրի բացակայությունը կամ որակը, քայքայված և անանցանելի ճանապարհները, հասարակական տրանսպորտի, համայնքային աղբահանության, լուսավորության բացակայությունը և նմանատիպ այլ խնդիրներ, որոնք ծառայում են համայնքի ողջ բնակչությանը, արոտավայրերի կառավարման, պահպանման կամ վերականգնման խնդիրները առաջնային չեն ՏԻՄ-երի համար:

Արդյունքում՝ ՏԻՄ-երը հետևողական չեն և թերանում են արոտային շրջանի կազմակերպման և կայուն արոտագտագործման կարգերի հաստատման և վերահսկման գործառույթներում:

Մյուս կողմից ՏԻՄ-երը չունեն անհրաժեշտ տեխնիկական, մասնագիտական և ֆինանսական միջոցներ և հնարավորություններ համայնքին լավ որակի ծառայություններ առաջարկելու, այդ թվում՝ արոտավայրերի կառավարումը կազմակերպելու և իրականացնելու համար: Արոտագտագործման համար անհրաժեշտ մասնագետների հաստիքներ ՏԻՄ-երում գրեթե չկան, այնինչ՝

գյուղատնտեսի, հողաշինարարի, հանդապահի առկայությունը խիստ կարևոր է արոտավայրերի կայուն կառավարման ապահովման համար: Ուսումնասիրված համայնքների մեծ մասում արոտավայրի կառավարումը իրականացնելու և արոտավայրերի օգտագործումը վերահսկելու համար չկան սահմանված պատասխանատուներ, մասնագետներ: Նման դեպքում ի պաշտոնե արոտավայրի կառավարման կազմակերպման, իրականացման և վերահսկման միակ պատասխանատուն համարվում է համայնքի ղեկավարը կամ նրա տեղակալը, ինչը գործնականում անհնար է դարձնում արոտավայրի կառավարումը:

Վերջին տարիներին հանրապետությունում տեղի ունեցող համայնքների խոշորացման գործընթացը հնարավորություն ունի բարձրացնելու արոտավայրերի հասանելիությունը օգտագործողների համար: Խոշորացված համայնքների բնակավայրերի արոտավայրերի միավորումը թույլ կտա ավելի օպտիմալ կազմակերպել արոտավայրի ընդհանուր օգտագործումը, ինչպես նաև խոշորացված համայնքների ավելի մեծ բյուջեները հնարավորություն կտան մասնագետներ ներգրավվել և համեմատաբար ավելի մեծ աշխատանքներ տանել արոտավայրերի բարելավման ուղղությամբ:

Այդուհանդերձ, արոտավայրերի օգտագործման հետ կապված խոշորացումը դեռևս ամբողջությամբ չի ընկալվել խոշորացված համայնքների բնակիչների կողմից և շատ դեպքերում գործնականում պահպանվում են նախկին համայնքների արոտավայրերի նախկին սահմանները: Սա հատկապես շատ է հանդիպում համայնքամերձ արոտավայրերում, երբ մի բնակավայրի բնակիչները թույլ չեն տալիս այլ բնակավայրի անասնազվաքանակի մուտքը «իրենց» արոտավայր: Սա ևս խոսում է ՏԻՄ-երի ինստիտուցիոնալ թույլ կարողությունների և նրանց կողմից տարվող աշխատանքների ոչ պատշաճ մակարդակի մասին:

«Ամեն մի գյուղը, ամեն համայնքը ունի իրա տարածքը: Ճիշտ ա էնտեղ ասենք գյուղապետարանները իրանց տեղերը շատ քչացրել են, բայց էլի գյուղը գոյություն ունի, համայնքը իրա արոտավայրերը ունի, որ երբեք չի թողնի: Մեր ջրի հարցը Արագած համայնքի տերիտորիայով պիտի բերեին Քուչակ, 2 տարի ձգվեց, չէին թողում, էդ միավորված ժամանակ էր: Չէ, էսի մերն ա ու վերջ: Ու ճիշտ են ասում, բա ինչ անեն:» Աշտարակ

Ինստիտուցիոնալ տեսանկյունից նշենք նաև համայնքերի միջև արոտավայրերի համատեղ օգտագործման և կառավարման տեսանկյունից համագործակցության պակասը: Կան համայնքներ, որտեղ արոտավայրերը շատ ավելի շատ են քան առկա անասնազվաքանակը և նրանք, որտեղ արոտավայրերը շատ քիչ են: Ուստի, այս ոլորտում միջհամայնքային համագործակցությունը խիստ կարևոր և նպատակահարմար է թե համայնքների համար, քանի որ ապահովում են իրենց

արոտավայրի օպտիմալ օգտագործում, թե համայնքի անասնատերերի համար, ովքեր մի դեպքում հնարավորություն են ունենում օգտվել արոտավայրից, իսկ մյուս դեպքում ապահովում են համայնքային արոտավայրի արտադրողականությունը:

Ուսումնասիրության մասնակիցները նշում են, որ այլ խնդիրներից բացի առկա է նաև հանրապետությունում վարձակալության ենթակա արոտավայրերի վերաբերյալ տեղեկատվության պակաս: Արոտօգտագործողները տեղյակ չեն թե ինչ աղբյուրներից կարող են օգտվել նման տեղեկատվություն ստանալու համար: Ուստի՝ միջհամայնքային համագործակցությունը զգալիորեն կնվազեցնի նաև արոտօգտագործողների գործարքային ծախսերը:

Պակաս կարևոր չէ նաև ՏԻՄ-երի կողմից տարվող աշխատանքը արոտօգտագործողների՝ արոտների օգտագործման և կայուն կառավարման վերաբերյալ կրթական և տեղեկացվածության մակարդակի բարձրացման տեսանկյունից: Ուսումնասիրված համայնքներից միայն մեկում է նշվել, որ նախատեսում են ուսուցողական աշխատանքներ կազմակերպել արոտօգտագործողների համար:

Պետական կամ տարածքային կառավարման մարզային կառույցները արոտօգտագործման հետ առնչվում են միայն որոշ վերահսկման գործառույթներ իրականացնելիս (Տես Գլուխ 6.2), որոնք հիմնականում կրում են վարչական բնույթ:

Պետական կառավարման ինստիտուցիոնալ խնդիրներից է նաև այն, որ մինչ օրս հանրապետությունում գույքագրված չեն արոտավայրերը: Հայտնի չէ, թե հանրապետությունում, որպես արոտավայր հաշվառված 1 051 536,5 հեկտար հողատեսքերի որ մասն է օգտագործման համար պիտանի արոտավայր, որ մասն են կազմում դեգրադացված, քարքարոտ, կտրատված ռելիեֆով տարածքները, որ համայնքում ինչ թեքությունների վրա են գտնվում արոտավայրերը և ինչ ենթակառուցվածքներ կան, ինչ վիճակում են դրանք գտնվում:

6. Արոտների կառավարմանն ուղղված պետական ներկա քաղաքականությունը և իրավական դաշտը

6.1. Պետության կողմից իրականացվող քաղաքականությունը և ծրագրերը

Բնական կերհանդակներին վերաբերող առանձին պետական քաղաքականություն ՀՀ-ում չկա: Այդուհանդերձ առկա են մի շարք ոլորտային ռազմավարական փաստաթղթեր, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են բնական կերհանդակներին՝ արոտավայրերին և խոտհարքներին: Սրանց թվին են դասվում ՀՀ Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը, ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագիրն ու ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարությունը:

ՀՀ Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը (ԳԳԿԶՌ) հանդիսանում է ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականությունը ուրվագծող հիմնական ռազմավարական փաստաթուղթը: Այստեղ արոտավայրերը հիմնականում դիտարկվում են հանրապետությունում անասնապահության զարգացման, հողօգտագործման արդյունավետության բարձրացման և հողային հարաբերությունների կատարելագործման շրջանակներում:

Մասնավորապես հողօգտագործման արդյունավետության բարելավման և հողային հարաբերությունների կատարելագործման ենթատեքստում ԳԳԿԶՌ-ն նախատեսում է՝

- բնական կերհանդակների (արոտներ, խոտհարքներ), դաշտային կերարտադրության վիճակի համակողմանի ուսումնասիրության իրականացում և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակում,
- լեռնային և բարձր լեռնային համայնքներում հեռագնա, համայնքամերձ արոտավայրերի և խոտհարքների երկարաժամկետ կառավարման, օգտագործման ծրագրերի մշակում և մասնակցային սկզբունքով՝ դրանց իրականացում,
- արոտավայրերի երկարաժամկետ վարձակալության խրախուսում,
- պետության և դոնոր համայնքի աջակցությամբ արոտավայրերի բարելավման ու ջրաբերիացման ծրագրերի իրականացում:

Անասնաբուծության զարգացման համատեքստում ԳԳԿԶՌ-ն նախատեսում է՝

- խրախուսել արոտավայրերի երկարաժամկետ վարձակալությունը և մասնավորեցումը,
- ներդնել հեռագնա արոտների արդյունավետ օգտագործմանը նպաստող մեխանիզմներ,
- տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն ապահովել արոտավայրերի վարձակալների և սեփականատերերի կողմից արոտների բարելավմանն ուղղված միջոցառումներին,
- կիրառել բարձրադիր գոտու արոտների արդյունավետ օգտագործման մեխանիզմներ՝ հասնելու անասնակերի սեփական արտադրության հնարավորությունների լիարժեք օգտագործման,
- գնահատել լեռնային արոտավայրերի դեգրադացման աստիճանը և մշակել դրանց բարելավման միջոցառումներ:

ԳԳԿԶՌ-ն կարևորում է նաև ալպիական և ենթալպյան գոտու արոտավայրերի առկայությունը հանրապետությունում անասնաբուծական ծագման օրգանական սննդամթերքի արտադրության համար, ինչպես նաև շեշտում է ալպիական արոտավայրերի բարելավման պարագայում շվեյցարական պանիրների արտադրության և արտահանման ծավալների ավելացման հնարավորությունները:

ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարությունը և գործողությունների պետական ծրագիրը մշակվել են Բնապահպանության նախարարության կողմից 2015 թվականին և բնականաբար այստեղ արոտավայրերը դիտարկվում են կենսաբազմազանության ապահովման տեսանկյունից:

Ռազմավարությունը շեշտում է արոտավայրերի խոցելիությունը՝ ներկայումս հանրապետությունում կիրառվող գյուղատնտեսական գործունեության ազդեցության նկատմամբ, մասնավորապես՝ արոտավայրային ծանրաբեռնվածության անհավասարաչափ բաշխման ազդեցությունն արոտավայրերի էկոհամակարգերի վրա, ինչի արդյունքում գերօգտագործվում են կենսաառեսուրսները և փոխվում է բնական միջավայրը:

Ի դեպ ծրագրի գործողությունների պլանում նախատեսվում է ներառել կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների գնային արժեքը արոտավայրերի և խոտհարքների կառավարման պլաններում: Սակայն, մինչ հիմա այս ուղղությամբ իրականացված որևէ գործնական քայլեր (միջոցառումներ) մեր կողմից չեն բացահայտվել:

ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարությունը (ՀԶՌ) ևս շեշտում է, որ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների համակարգված և նպատակային օգտագործման ուղղությամբ հանրապետությունում խնդիրներ կան:

Արոտավայրերի և խոտհարքների նպատակային և արդյունավետ օգտագործման խնդրի լուծման ուղղությամբ ՀԶՌ-ն առանձնացնում է հետևյալ գործողությունները՝

- բնական կերհանդակների օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի շարունակում,
- արոտների և խոտհարքների համակարգված և արդյունավետ օգտագործման սխեմաների ներդրում,
- արոտների ջրարբիացման, անցանելիության ապահովման պետական աջակցությամբ ծրագրերի իրականացում,
- արոտօգտագործողների կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեության աջակցություն:

2019 թվականին ընդունված ՀՀ Կառավարության ծրագիրը, որը նախատեսված է առաջիկա հինգ տարիների համար, արոտավայրերին կամ անասնաբուծությանը վերաբերող կոնկրետ միջոցառումներ չի նախատեսում: Բայցևայնպես, հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը, որպես առաջնահերթություն ներառված են ծրագրի շրջակա միջավայրին առնչվող գործողություններն ամփոփող բաժնում:

Մեկ այլ ռազմավարական փաստաթուղթ, որն անուղղակի կերպով անդրադառնում է արոտավայրերին՝ ՀՀ Անապատացման դեմ պայքարի ռազմավարությունն (2015) է, որտեղ շեշտադրվում է մարդածին գործոնների՝ այդ թվում արոտավայրերի գերշահագործման ազդեցությունը հանրապետությունում անապատացման երևույթների խորացման հարցում:

Բացի պետական ռազմավարական փաստաթղթերից հարկ է նաև նշել, որ Հայաստանը մաս է կազմում մի շարք միջազգային կոնվենցիաների և պայմանագրերի, որոնց շրջանակներում պարտավորվածություն է ստանձնել իրականացնել միջոցառումներ՝ այդ թվում ուղղված արոտավայրերի բարելավմանը:

Այսպես, 2015 թվականին, հանդիսանալով Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) անդամ, ՀՀ-ը հանձն է առել մինչև 2030 թվականը

նպաստել ՄԱԿ-ի կողմից սահմանված Կայուն Ձարգացման Նպատակների (ԿԶՆ) իրագործմանը: ԿԶՆ-ի 15-րդ նպատակը սահմանում է՝ *պահպանել, վերականգնել և խթանել ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործումը, ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը*: Այս նպատակը ներառում է 14 գլոբալ ցուցանիշ, որոնցից մի քանիսը ուղղակիորեն կապված են արոտավայրերի հետ, օրինակ՝

- 15.3.1-ը՝ Վատթարացած հողի համամասնությունը ընդհանուր հողային տարածքների նկատմամբ,
- 15.4.2-ը՝ Լեռների կանաչ ծածկույթի համաթիվ (ինդեքս),
- 15.ա.1-ը և 15.բ.1-ը՝ Ձարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն և հանրային ծախսեր կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանման և կայուն օգտագործման համար:

Նշված ցուցանիշներից Հայաստանը հաշվետվություն է ներկայացնում միայն 15.3.1-ի համար:

Հայաստանն անդամակցում է նաև Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիային (2000), որի 5-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիայի յուրաքանչյուր կողմ պետք է հաստատի և ապահովի լանդշաֆտային քաղաքականություն, որն ուղղված է լանդշաֆտների պահպանությանը, կառավարմանն ու պլանավորմանը: Ենթադրվում է, որ արոտավայրերը, հանդիսանալով լանդշաֆտի մի մաս, պետք է ունենան իրենց առանձին քաղաքականությունը՝ ուղղված դրանց պահպանությանը, կառավարմանն ու պլանավորմանը:

Բացի վերոնշյալից՝ Հայաստանն անդամակցում է «Կենսաբազմազանության մասին» (1993) կոնվենցիային, որին համապատասխան մշակել է վերոնշյալ՝ ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարությունը և գործողությունների պետական ծրագիրը, ինչպես նաև՝ «Անապատացման դեմ պայքարի» (1996) կոնվենցիային, որի որոշ դրույթներ արտացոլված են ՀՀ Անապատացման դեմ պայքարի ռազմավարության մեջ և ՀՀ Կառավարության վերոնշյալ ծրագրում:

6.2. Արոտների կառավարմանն առնչվող օրենսդրական և իրավական դաշտը

Հանրապետությունում արոտավայրերին առնչվող հարցերը կարգավորվում են մի շարք իրավական ակտերով և չկա արոտավայրերի հետ կապված

հարաբերությունները ուղղակիորեն կարգավորող ամբողջական իրավական փաստաթուղթ:

Բացառապես արոտավայրերին վերաբերող իրավական փաստաթղթեր են հանդիսանում 2010 և 2011 թվականներին ՀՀ Կառավարության կողմից ընդունված երկու որոշումները՝ «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու» մասին (2010) և «ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու» մասին (2011):

«Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու» մասին որոշման շնորհիվ 2010 թվականից սկսած պարզեցվեց պետական սեփականության արոտավայրերից օգտվելու գործընթացը: Մինչ այդ պետական սեփականության արոտավայրերից օգտվելու համար պայմանագրի կնքումը ենթադրում էր այցելությունն նոտարական գրասենյակ և լրացուցիչ ծախսեր: Սակայն, որոշման ուժի մեջ մտնելուց հետո, պետական սեփականության արոտավայրերից կարելի է օգտվել մինչև 3 տարի ժամկետով պայմանագիր կնքելու միջոցով՝ առանց նոտարական վավերացումների: Որոշման մեջ առկա է պայմանագրի օրինակելի ձև, որը պետք է օգտագործվի նման պայմանագրեր կնքելիս:

Որոշման համաձայն պետական սեփականության արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանվում է տվյալ արոտավայրի տակ գտնվող հողի հարկի դրույքաչափին համապատասխան: Սա գործնականում խնդիր է առաջացնում, քանի որ սահմանափակում է ՏԻՄ-երի հնարավորությունները վճարի չափի ավելացման կամ պակասեցման միջոցով կարգավորել արոտավայրից օգտվել ցանկացողների թվաքանակը: Բացի այդ արոտավայրերի տակ գտնվող հողերի կադաստրային արժեքները վերջին անգամ փոփոխվել են 2007 թվականին¹⁵ և լինում են դեպքեր, երբ հողի հարկի դրույքաչափին համապատասխան սահմանված վճարները չեն համապատասխանում արոտավայրի փաստացի վիճակով պայմանավորված իրական արժեքին:

Ինչպես հուշում է անվանումը՝ «ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու» մասին որոշումը, սահմանում է արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը, բայց տարածվում է միայն պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վրա:

¹⁵ ՀՀ Կառավարության ՀՀ Հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության հողերի 2019 թվականի կադաստրային գները հաստատելու մասին 2019թ ապրիլի 11-ի N 403-Ն որոշումը: Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=129771>

Որոշման մեջ ներառված կարգը սահմանում է արտավայրերի կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները: Այն նախատեսում է արտաշրջանառության իրականացում, նախքան արտավայրերի օգտագործումը, դրանց օգտագործման պլանի կազմում, արտային շրջանի մեկնարկի և ավարտի սահմանում, ինչպես նաև սահմանում է արտավայրերի կառավարման և օգտագործման կազմակերպման համար ընդհանուր՝ կոդմնորոշող չափանիշներ:

Համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի օգտագործման կամ կառավարման վերաբերյալ ուղղակի ընթացակարգեր, իրավական կարգավորումներ կամ նորմեր սահմանված չեն: Հաջորդիվ կդիտարկենք տարբեր ոլորտային օրենքներ և որոշումներ, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են արտավայրերի կառավարման հարցերին:

«Տեղական Ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքում չկա կոնկրետ անդրադարձ արտավայրերին, սակայն օրենքի 43-րդ հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները հողօգտագործման բնագավառում: Այս հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ համայնքի ղեկավարը հող օգտագործման բնագավառում *մշակում և կազմում է **համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:***

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն համայնքի ղեկավարը՝ *օրենքով սահմանված կարգով, վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի **նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ*** (սեփական լիազորություն):

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները: Իսկ 6-րդ ենթակետի համաձայն՝ իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ:

Հարկ է նշել, որ նշված լիազորությունները հանդիսանում են համայնքի ղեկավարի սեփական լիազորություններ, որոնք ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը: Ընդ որում, ՏԻՄ-երը օրենքով սահմանված կարգով պարտավոր են առաջնահերթությամբ ապահովել համայնքի պարտադիր

ինդիքների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների կատարումը:

Արոտավայրերին որոշ չափով անդրադառնում է նաև ՀՀ Հողային օրենսգիրքը:

Հողային օրենսգրքի Հոդված 9-ի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, այդ թվում նաև արոտավայրերի օգտագործման կարգը որոշում են հողամասի սեփականատերերը: Ուստի, յուրաքանչյուր համայնք ինքը պետք է որոշի համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի օգտագործման կարգը:

Բացի այդ Օրենսգրքի 60-րդ հոդվածը (10-րդ կետը) արգելում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք **զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս ընդհանուր օգտագործման արոտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով:**

Սակայն, այստեղ հարկ է նշել, որ 2005 թվականի ՀՀ Կառավարության N 1873-Ն «ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու մասին ծրագրի հայեցակարգը հաստատելու» մասին որոշմամբ հանրապետությունում մեկնարկեց պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքների վարչական տարածքներում ընդգրկելու գործընթացը: Աշխատանքներն ավարտվեցին 2015 թվականին և այլևս հանրապետությունում համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող հողեր չկան և Հողային օրենսգրքի վերոնշյալ սահմանումը հնացած է և փաստացի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը կարող են սեփականության իրավունքով փոխանցվել ՀՀ քաղաքացիներին, իրավաբանական անձանց, ինչպես նաև կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

2008 թվականին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության» մասին օրենքի համաձայն՝ հանրապետությունում առկա բոլոր հողերի պահպանության և օգտագործման նկատմամբ իրենց իրավասությունների շրջանակներում վերահսկողություն իրականացվում է երեք մակարդակում՝

- 1) «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված՝ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինը, այն է՝ ՀՀ

քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը¹⁶

- 2) մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) և
- 3) համայնքների ղեկավարները:

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը վերահսկում է իրականացնում հողային ֆոնդի նպատակային օգտագործման նկատմամբ, հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, մարզպետների՝ հողային հարաբերությունների բնագավառում իրականացնող գործունեության նկատմամբ և այլն: Բացահայտված անհամապատասխանությունների, օրինակ՝ առանց արոտօգտագործման պայմանագրի արոտավայրի օգտագործման բացահայտման պարագայում տեսչական մարմինը իրավունք ունի վարչական տույժ դուրս գրել:

Մարզպետները համայնքներում արոտավայրերի օգտագործման վերահսկման գործում անուղղակի են ներգրավված և գործում են ՀՀ Փոխվարչապետ, Տարածքային Կառավարման Նախարարի և ՀՀ Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի Նախագահի 2014 թվականի համատեղ հրամանի համաձայն¹⁷, ըստ որի մարզպետները հողօգտագործման բնագավառում իրականացնում են վարչական վերահսկողություն: Վարչական վերահսկողությունն իրենից ենթադրում է հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի կողմից իրականացված գործունեության գնահատում ըստ սահմանված հարցաշարի¹⁸:

Որպես բուսապատ տարածքներ, արոտավայրերին վերաբերում է նաև «Բուսական աշխարհի պահպանության» մասին 1999թ-ի ՀՀ օրենքը (ՀՕ-22): Ըստ այս օրենքի՝ բուսական աշխարհի օբյեկտ օգտագործողը պարտավոր է՝ ապահովել բուսական աշխարհի՝ իրեն հատկացված օբյեկտների պահպանությունը, չխախտել բնական բուսական համակեցությունների ամբողջականությունը, իրականացնել

¹⁶ ՀՀ վարչապետի որոշումը ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=124381>

¹⁷ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 5-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի N 9-Ն համատեղ հրամանը հողօգտագործման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարի հաստատելու մասին: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88823>

¹⁸ ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 13-ի N 87-

ն հրամանը հողօգտագործման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների մեթոդական ուղեցույցի հաստատելու մասին:

անհրաժեշտ միջոցառումներ՝ բուսական աշխարհի օբյեկտների վերարտադրության և պաշտպանության նպատակով և այլն: Բացի այդ, օրենքը սահմանում է նաև բուսական աշխարհի պետական հաշվառման իրականացման և կադաստրի վարման անհրաժեշտությունը՝ բացահայտելու բուսական տեսակների ու համակեցությունների, դրանց աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունները: Օրենքի համաձայն՝ բուսական աշխարհի պետական հաշվառումն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան տասը տարին մեկ անգամ:

6.3. Ոլորտում շահագրգիռ կառույցների և կողմերի կողմից իրականացվող ծրագրերը

Արտավայրերի կառավարմանը առնչվող ծրագրեր հանրապետությունում իրականացվել են սահմանափակ թվով կառույցների կողմից: Ստորև կներկայացնենք ոլորտում հիմնական դերակատարների կողմից իրականացվող և իրականացված ծրագրերը:

ՀՀ Կառավարություն՝ ի դեմս Գյուղատնտեսության նախարարության

Մինչ օրս ՀՀ-ում պետության կողմից իրականացված արտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը և կառավարմանը ուղղված ծրագրերից հիշատակման են արժանի երկուսը՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ՀԳՌԿՄ) առաջին և երկրորդ ծրագրերը: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 64 միլիոն ԱՄՆ դոլար, որից 48,67 միլիոն ԱՄՆ դոլարը ՀԲ-ի և դրա մաս կազմող ֆինանսական կառույցների կողմից տրամադրված վարկային միջոցներ են:

ՀԳՌԿՄ առաջին ծրագիրն իրականացվել է 2011-2016 թվականներին և նպատակ է ունեցել բարելավել ՀՀ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերի 55 համայնքների արտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը:

Ծրագրի արդյունքում նշված մարզերի 90 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ ու «Համայնքի արտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, համայնքներից 83-ի համար մշակվել են «Համայնքի արտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլաններ, ջրաբեկացվել է նախկինում չօգտագործվող կամ թերի օգտագործվող շուրջ 115 000 հա արտավայր, ինչպես նաև իրականացվել է 79 համայնքի

համայնքամերձ դեգրադացված արոտավայրերի վիճակի գնահատում և մշակվել են դրանց վերականգնմանն ուղղված միջոցառումներ:

Հիմնվելով առաջին ծրագրի գրանցած հաջողությունների վրա 2014 թվականին մեկնարկեց ՀԳՌԿՄ երկրորդ ծրագիրը, որը նպատակ ունի (ա) բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը նպատակային համայնքներում և (բ) ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեզրթանների շուկայահանվող արտադրանքը:

ՀԲ-ի կայքում հրապարակված ծրագրի վերջին հաշվետվության համաձայն՝ 2017թ.-ի նոյեմբեր 1-ի դրությամբ 109 լրացուցիչ «Համայնքի արոտագտագործողների միավորում» կոոպերատիվներում իրականացնում են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» պլաններ:

Ռազմավարական Զարգացման Գործակալություն (ՌԶԳ) ՀԿ (ներկա ծրագրեր)

Արոտների կառավարման ոլորտում ՌԶԳ-ն աշխատում է 2008 թվականից սկսած՝ իրականացնելով տարբեր ծրագրեր:

2017թ.-ից սկսած ՌԶԳ-ն իրականացնում է «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ - հյուսիս» ծրագիրը, որը ֆինանսավորվում է Ավստրիայի Զարգացման Գործակալության և Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության կողմից: Ծրագրի երեք նպատակներից մեկն է՝ բնական ռեսուրսների կայուն կառավարման արդյունքում բարելավել Հայաստանի հյուսիսային մարզերում անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների եկամուտները: Այս նպատակով ծրագրի թիրախային բնակավայրերում կազմակերպվում են արոտավայրերի արդյունավետ կառավարման թեմայով դասընթացներ, բարելավվում են համայնքներին կարողությունները արոտավայրերի կառավարման պլանների մշակման հարցում, իրականացվում են արոտային ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ:

Ծրագրի թիրախում են Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի 85 000 ընդհանուր բնակչությամբ 88 գյուղական բնակավայրերը:

Ոլորտին առնչվող ՌԶԳ ՀԿ-ի կողմից իրականացվող մեկ այլ ընթացիկ ծրագիր է «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում»-ը (2014–2020): Ծրագրի նպատակն է ընդլայնել ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի 100 գյուղական

համայնքներում անասնապահության ոլորտում ներգրավված տնտեսությունների եկամուտները և դրանց տնտեսական հնարավորությունները:

Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվում թիրախ համայնքներում կերարտադրության խթանման նպատակով, վերականգնվում են օգտագործման համար ոչ պիտանի դարձած արոտավայրեր, կառուցվում են արոտօգտագործման ենթակառուցվածքներ, համայնքների մասնակցությամբ կազմվում են արոտների կառավարման պլաններ, ինչպես նաև իրականացվում են արոտավայրերի մշտադիտարկման, արդյունավետ օգտագործման և կայուն կառավարման կարգերի կիրառման վերաբերյալ թեմատիկ դասընթացներ: Մի շարք բնակավայրերում նախատեսվում է հիմնել անասնաբուժական կետեր:

Ծրագիրը ֆինանսավորվում «Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության» (ՇՀՀԳ) կողմից:

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր (ՄԱԶԾ) (նախկին և ներկա ծրագրեր)

2013-2017 թվականներին Եվրամիության ֆինանսավորմամբ և ՄԱԶԾ-ի աջակցությամբ՝ Հայաստանում իրականացվել է Կլիմա Իստ պիլոտային ծրագիրը, որը աշխատանքներ է ծավալել դեգրադացված լեռնային արոտավայրերի և անտառների վերականգնման, ինչպես նաև շահառու համայնքներում հողերի կայուն կառավարման միջոցով տնտեսական օգուտների խթանման ուղղությամբ:

Մասնավորապես, թիրախ համայնքներում վերականգնվել են համայնքների հեռագնա արոտավայրերի ենթակառուցվածքները և համայնքամերձ դեգրադացված արոտավայրերում կատարվել են բարելավման աշխատանքներ, հինգ համայնքների համար մշակվել են հերթափոխ-արոտաբաժնային արածեցման պլաններ և անցկացվել են այդ պլանների իրականացման վերաբերյալ դասընթացներ: Մշակված պլանները ծառայում են 7 500 հա արոտավայրերի կառավարման բարելավմանը:

Ծրագիրն իրականացվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Ծովակ, Լճավան և Ծափաթաղ, Մաքենիս, Փամբակ և Դարանակ համայնքներում (այժմ բնակավայրեր):

ՄԱԶԾ-ի կողմից ներկայումս իրականացվող մեկ այլ ծրագիր է «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հայաստանի հյուսիս-արևելյան լեռնային լանդշափտներում»-ը, որը մեկնարկել է 2016 թվականին և նպատակ ունի մեղմել անտառամերձ համայնքների կախվածությունը անտառներից:

Ծրագիրն իրականացվում է Տավուշի և Լոռու մարզերում և արոտավայրերին առնչվող գործողությունների մասով նախատեսվում է իրականացնել մոտ 90 հա արոտավայրի վերականգնում և մոտ 140 հեկտարի վրա կերային մշակաբույսերի ցանք, ինչը կբարելավի թիրախ համայնքներում կենդանիների կերապահովումը և կնվազեցնի վաղ գարնանը՝ մինչև բուսածածկի բավարար չափի վերաճելը արոտավայրերի վրա ճնշումը: Ծրագրի շրջանակներում նաև ուսուցողական դասընթացներ են կազմակերպվում:

Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ) (նախկին և ներկա ծրագրեր)

ՀՀ հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում 2015 թվականից սկսած (մինչև 2019թ. նոյեմբեր) ԳՄՀԸ-ն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում իրականացնում է «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարվային Կովկասում» (ԿԻԿ) տարածաշրջանային ծրագիրը:

Ծրագիրը նպաստում է կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների ինտեգրված և միջոլորտային կառավարմանը և գործունեություն է ծավալում հետևյալ չորս ուղղություններով՝

- տեղական մակարդակում կայուն կառավարմանն ուղղված պիլոտային միջոցառումների օժանդակում և գործընթացների համակարգում,
- տեղական և ազգային մակարդակում պետական կառավարման մարմինների կարողությունների հզորացում և հանրային իրազեկման ավելացում,
- կենսաբազմազանության կառավարման և էկոհամակարգային ծառայությունների կարևորության վերաբերյալ հանրության իրազեկում, և
- կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների բնագավառում ունեցած մասնագիտական փորձի փոխանակման և համագործակցության խթանում միջազգային մակարդակում:

ԿԻԿ ծրագիրն իր գործընկերների հետ համատեղ իրականացնում է նաև հետևյալը՝

- աջակցում է կենսաբազմազանության կայուն կառավարմանը և էկոհամակարգային ծառայություններին ուղղված ռազմավարության, միջոլորտային քաղաքականության և օրենքների մշակմանը,
- նպաստում է կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների համար մոնիտորինգային համակարգի մշակմանը և միջնախարարական երկխոսության դյուրացմանը:

ԿԻԿ ծրագրին նախորդել է (2009-2015) ԳՄԸՀ-ի Կենսաբազմազանության Կայուն Կառավարում (ԿԿԿ) ծրագիրը, որի շրջանակներում մշակվել են վերոնշյալ՝ «Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկ. Հայաստան» և «Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց» ձեռնարկները, ինչպես նաև 2013-2015թթ. ընթացքում՝

- 24 համայնքներ վերապատրաստվել են արոտների մշտադիտարկման և կառավարման պլանների մշակման ու իրականացման ոլորտներում,
- 24 համայնքներում իրականացվել է արոտների մշտադիտարկում, և
- 19 համայնքներում մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ:

7. Եզրակացություններ և առաջարկություններ

7.1. Եզրակացություններ

Հանրապետության արոտավայրերում կայուն կառավարման ներդրման բարդությունները պայմանավորված են տարբեր հանգամանքներով, որոնց լուծումները գտնվում են տարբեր մակարդակներում:

Արոտավայրերի կայուն կառավարման համար բավարար պայմաններ են հանդիսանում՝ արոտավայրում ենթակառուցվածքների առկայությունը, արոտավայրի արտադրողականության ճիշտ գնահատումը, դրան համապատասխան բեռնավորման և անասունների շարժի պլանավորումը, պլանի իրականացման գործում արոտագտագործողների ներգրավումը և պլանի իրականացման վերահսկումը: Բացի այս՝ գոյություն ունեն նաև անհրաժեշտ պայմաններ՝ օրինակ արոտների կառավարման պլանին համաձայն պահվածք իրականացնելու տնտեսական նպատակահարմարությունը կամ համայնքի արոտավայրերից օգտվող բոլոր անասնատերերի ներգրավումը պլանի իրականացման մեջ, բացառելով պլանին անհամապատասխան արոտագտագործման որևէ դեպք:

Այսպիսով, կայուն կառավարում իրականացնելու համար կարևոր է ոչ միայն կառավարման գործառույթների ճիշտ և հետևողական իրականացումը այլ նաև արտաքին միջավայրը, որի վրա ՏԻՄ-ը (կառավարողը) ունի սահմանափակ ազդեցություն կամ չունի: Սրանց շարքին են դասվում՝ օրենսդրական դաշտը և օրենքի գերակայությունը, քաղաքական և տնտեսական իրավիճակը, սոցիալական խնդիրները, գոյություն ունեցող կառույցների ինստիտուցիոնալ կայացվածությունը, անհրաժեշտ որակի և քանակի մարդկային ռեսուրսների առկայությունը, ենթակառուցվածքների վիճակը, բնակչության կրթվածությունը և սոցիալ-մշակութային ընկալումները, շրջակա միջավայրը և բնական պայմանները, արոտավայրերի հանդեպ պահանջարկը (աճող կամ նվազող անասնապահության հետ կապված):

Առանձնացված խնդիրներից ոմանք, ինչպիսիք են բնական պայմանները հնարավոր չէ լուծել, ոմանց կարելի է լուծում տալ բարելավելով գործող իրավական դաշտը, մյուսները՝ կախված են մարդկանց ընկալումների և գիտակցության մակարդակի հետ, ուստի երկարատև և լայնամասշտաբ աշխատանք է պահանջվում: Որոշ խնդիրներ պետական հոգածություն և հովանավորություն են պահանջում ոչ միայն իրավական և օրենսդրական դաշտում, այլև ֆինանսական ներդրումներ՝ կապված արոտավայրերի էկոլոգիա-տնտեսական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության


հավաքագրման և տարածման, ենթակառուցվածքների ստեղծման, պահպանման և արոտավայրերի վերականգնման հարցերում:

Արոտավայրերը հանդիսանալով երկրի էկոլոգիայի և տնտեսության համար կարևորագույն ռեսուրս, այսօր պետական հոգածությունից դուրս են մնացել: Դրանց կառավարումը և տնօրինումը մնացել է ՏԻ մարմինների ուսերին, որոնք սակայն չունեն ոչ անհրաժեշտ ֆինանսական, ոչ տեխնիկական, ոչ էլ մարդկային ռեսուրսներ արոտավայրերի մինիմալ կառավարում ապահովելու համար:

Միննույն ժամանակ արոտավայրերի կառավարման համակարգում անտեսված է արոտօգտագործողների դերը, ովքեր հանդես են գալիս միայն որպես սպառողներ, ինչը պայմանավորված է վերջիններիս կողմից ոլորտի հանդեպ ցածր հետաքրքրվածությամբ, իրավագիտակցման և տեղեկացվածության ցածր մակարդակով: Որպես հետևանք՝ արոտօգտագործողները չեն գիտակցում կայացված որոշումների պատճառներն ու արդարացի լինելը և դրանց կատարման հանդեպ պատասխանատվություն չեն զգում:

Արոտօգտագործողների շրջանում շատ ցածր մակարդակի վրա է համագործակցությունը, ինչը դրսևորվում է ոչ միայն հեռագնա արոտավայրերում կաթնատու անասունների համատեղ պահվածքի կազմակերպման դժվարություններով, այլ նաև ապագա արոտօգտագործողների (սերունդների) եկամուտների հաշվին այսօր արոտավայրը ոչ ճիշտ շահագործելով:

ՀՀ-ում արոտավայրերի կառավարման ոլորտում առկա խնդիրների պատճառահետևանքային կապը կարելի է ներկայացնել հետևյալ դիագրամի միջոցով (Պատկեր 22), որտեղ ինչպես տեսնում ենք արոտօգտագործման լիարժեք կառավարման առաջնային խնդիրը հանդիսանում է անասնապահության ոչ եկամտաբեր լինելը, ինչը միննույն ժամանակ հանդիսանում է արոտավայրերի թերի կառավարման և ոչ ճիշտ օգտագործման հետևանք: Միննույն ժամանակ, արոտավայրերի կայուն կառավարման ապահովման համար նշանակալից է արոտավայրերի օգտագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայությունը: Թերի ենթակառուցվածքները, ՏԻՄ-երի (կառավարողների) մասնագիտական և ֆինանսական սահմանափակ ռեսուրսները նպաստում են արոտավայրերի դեգրադացմանը, նվազեցնում են անասնապահության եկամտաբերությունը և արոտօգտագործողների շրջանում թույլ չեն տալիս ապահովել արոտավայրերի ճիշտ օգտագործման, դրանց կառավարման անհրաժեշտության, ինչպես նաև անասնապահությունից ստացվող եկամուտների ավելացմանը նպաստող միջոցառումների իրականացում:



Պատկեր 22. Արտավայրերի կառավարման խնդիրների պատճառահետևանքային կապը

Միննույն ժամանակ համայնքային և պետական կառույցների թույլ ինստիտուցիոնալ կարողությունները, օրենքի գերակայությունը և պայմանագրերի կիրարկումը ևս լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում արտավայրերի կայուն կառավարման ապահովման համար:

Վերջին տարիներին հանրապետությունում թափ ստացած խոշորացման գործընթացը ևս իր ազդեցությունն է թողնում արտավայրերի կառավարման արդյունավետության վրա: Այն դեռևս ամբողջությամբ չի ընկալվել խոշորացված համայնքների գյուղական բնակավայրերի բնակիչների կողմից և գործնականում շատ դեպքերում պահպանվում են նախկին համայնքների արտավայրերի նախկին սահմանները: Բացի այդ, եթե մի դեպքում խոշորացման արդյունքում հնարավորություն է ստեղծվել ներդրումներ իրականացնել արտային տարածքների վերկանգնման, բարելավման, հասանելիության ապահովման և արդյունավետ օգտագործման աշխատանքներում, ապա մյուս դեպքում նման հնարավորությունները պակասել են, կամ ըստ առաջնահերթությունների ուղղվել են այլ ոլորտների բարելավմանն ու զարգացմանը:

Ստորև կքննարկենք արոտավայրերի կառավարման տեսական հիմքերը և դրանց ներդրման նպատակահարմարությունը ՀՀ-ում:

Արոտավայրերի կառավարման տեսական հիմքերը և ՀՀ փորձը
Բնօգտագործման էկոնամիկայի տեսության մեջ մեծ տարածում ունի «ընդհանուրի ողբերգություն»¹⁹ (tragedy of commons) հասկացությունը, որի համաձայն իրարից անկախ և իրենց անձնական շահերի շրջանակում գործող առանձին օգտագործողների համատեղ գործունեության արդյունքում, այնպիսի վարքագիծ է դրսևորվում, որը հակասում է բոլոր օգտագործողների շահերին և բերում է հանրային ռեսուրսի գերօգտագործմանը կամ վերացմանը: Նկարագրված իրավիճակը խիստ նման է նրան ինչ մենք դիտարկում ենք ՀՀ տարածքում արոտավայրերի հետ կապված: Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերը ընկալվում են համայնքի բնակչության կողմից որպես հանրային սեփականություն, երբ արոտը բոլորին է և միևնույն ժամանակ ոչ մեկինը և արոտները օգտագործելիս ելնում են միայն սեփական շահերից: Նման երևույթների օրինակներ են արոտավայրի թույլատրելի բեռնավորումից ավելի շատ անասնազվաքանակ արածեցնելը, հեռագնա արոտավայրերի համեմատ համայնքամերձ արոտավայրերի գերադասելը, որակյալ կենսազանգված ունեցող արոտավայրերի գերաբաժեցումը և այլն: «Ընդհանուրի ողբերգությունը» մարդկանց չհամագործակցելու հետևանք է, երբ անձնականը ընդհանուրի շահից ավելի բարձր է դասվում: «Ընդհանուրի ողբերգությունը», երկար տարիներ համարվել է բնօգտագործման հիմնարար հասկացություններից մեկը, որի կանխման համար կա երկու հավանական տարբերակ (1) պետական միջամտությամբ ռեսուրսի օգտագործման կանոնակարգում, այդ թվում՝ արտաքին ազդեցության ինտերնալիզացիա և (2) ռեսուրսի սեփականաշնորհումը: ՀՀ-ում այս երկու մոտեցումն էլ կիրառվում են: ՀՀ գործող օրենսդրությունը չի արգելում արոտավայրերի սեփականաշնորհումը և գոյություն ունեցող որոշումների շրջանակում փորձում է կանոնակարգել արոտավայրերի օգտագործումը: Բացի այդ՝ արոտավայրերի օգտագործման համար սահմանված վարձավճարների միջոցով ինտերնալիզացվում են արոտօգտագործման արտաքին ազդեցությունները: Սակայն, ինչպես տեսնում ենք, որդեգրած մոտեցումը արդյունք չի ապահովում և ՀՀ ողջ տարածքում առկա են դեգրադացված արոտավայրեր: Վերջին քսանամյակում համաշխարհային տարածում է գտել մեկ այլ մոտեցում, որը ժխտում է «ընդհանուրի ողբերգության» կարգավորման եղանակները: Մոտեցման հեղինակը 2009 թվականի Նոբելյան մրցանակակիր Էլինոր Օստրոմն է, ում տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ հասարակության անդամները այնքան համագործակցող են դառնում, որ դառնում են միասնական մարմին, որը արդեն սկսում է գործել հասարակության շահերից: Օստրոմի տեսության համաձայն՝ խմբերը ի վիճակի են խուսափել «ընդհանուրի ողբերգությունից» առանց պետության օրենսդրական կարգավորումների, եթե պահպանված են որոշ պայմաններ, դրանք են՝ 1. Հստակ սահմաններ – հստակ սահմանված են ռեսուրսի սահմանները և համայնքում ընդհանուր ռեսուրսից օգտվելու իրավունք ունեցողները: Քանի դեռ սահմանները հստակեցված չեն, հայտնի չէ ինչն ենք կառավարում և հանուն ում: 2. Համապատասխանություն – ռեսուրսների կառավարման կանոնները պետք է համապատասխանեն տեղի պայմաններին և նորմերին: 3. Կոլեկտիվ ընտրության մեխանիզմներ – ապահովված են մեխանիզմներ, որպեսզի բոլոր նրանք ում վրա ազդում են սահմանված կանոնները կարողանան մասնակցել այդ կանոնների փոփոխմանը: 4. Մոնիտորինգ – ապահովվել ռեսուրսի վիճակի և դրա օգտագործման մշտադիտարկում: Ընդ որում մոնիտորինգ իրականացնողները պետք է լինեն հենց ռեսուրս

¹⁹Վիլյամ Ֆոսթեր Լյոյդ, 1833: Garrett Hardin, 1968, The Tragedy of Commons, Science.162:1243-1248.

օգտագործողները կամ ենթարկվեն օգտագործողներին:

5. **Սանկցիաներ** – Մոնիտորինգի արդյունքում բացահայտված խախտումները, այսինքն՝ օգտագործողների կողմից սահմանված կանոններ չպահպանելը պետք է պատժվի օգտագործողների կողմից, կամ նրանց կողմից ընտրված պաշտոնատար անձանց կողմից կամ երկուսի կողմից՝ կախված խախտման ծանրությունից:
6. **Կոնֆլիկտների արագ և արդար լուծում** – ենթադրում է, որ օգտագործողների միջև կամ օգտագործողների և պաշտոնատար անձանց միջև ծագած վեճերի լուծման համար առկա են էժան և արագ լուծման մեխանիզմներ:
7. **Տեղական ինքնավարություն** – օգտագործողների խմբի անդամների կողմից սահմանվող կանոնները ընդունվում են պաշտոնյաների կողմից և վերջիններս դրանց վրա չեն ազդում:
8. **Բազմաստիճան կառավարում** – ռեսուրսի կառավարումը իրականացվում է կառավարման իրար փոխկապակցված մի քանի աստիճաններում՝ համայնքային, շրջանային, մարզային և այլն:

Ինչպես տեսնում ենք, Օստրումի մոտեցման մեջ հիմնական անհրաժեշտ պայմանը ռեսուրսը օգտագործողների միջև համագործակցության առկայությունն է:

7.2. Առաջարկություններ

ՀՀ համայնքներում արոտավայրերի կառավարում ներդնելու գործընթացը խթանելու և ներդրված կառավարման պլանների իրականացմանը աջակցելու նպատակով առաջարկվում է իրականացնել մի շարք միջոցառումներ: Միջոցառումները նախատեսված են ՀՀ Կառավարության, ՏԻՄ-երի և Հայաստանում աշխատող տեղական և միջազգային շահագրգռված տարբեր կառույցների կողմից իրականացման համար:

Առաջարկվող միջոցառումներն են՝

- Աջակցել ՀՀ տարածքում անասնապահության զարգացմանը՝ ի նկատի ունենալով տարբեր տարածաշրջանների մասնագիտացումը, արոտավայրերի առկայությունը և վիճակը: Իրականացնող՝ *ՀՀ կառավարություն և շահագրգռված կառույցներ:*
- Խթանել արոտօգտագործողների միջև և արոտօգտագործողների ու ՏԻՄ-երի միջև համագործակցությունը՝ արոտօգտագործողներին ներառելով արոտավայրերի կառավարման կազմակերպման աշխատանքներում, քննարկումներում: Աջակցել համայնքներում համագործակցային հենքով իրականացվող ցանկացած նախաձեռնություններին (ֆորմալ և ոչ ֆորմալ): Իրականացնող՝ *ՏԻՄ-եր:*
- Ստեղծել արոտավայրերի տվյալների շտեմարան, որտեղ համայնքային, մարզային և ազգային մակարդակներում ամփոփված կլինեն առկա արոտավայրերի տարածքները, բուսապատվածության աստիճանը, կենսաբազմազանությունը, ճանապարհների, բնական աղբյուրների,

ջրելատեղերի և այլ արոտային ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն և շահագրգռված կառույցներ:

- Անասնապահության խթանման նպատակով բարելավել մրցակցային դաշտը: Մասնավորապես ապահովել կաթի փոշի պարունակող մթերքների ճիշտ մակնշումը, ինչպես նաև տնտեսավարողներին խրախուսել կաթի տուփերի վրա նշել թե ինչպիսի պահվածքի կենդանուց է ստացվել կաթը՝ արոտային, թե մսուրային: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն:
- Բարելավել և վերականգնել արոտօգտագործման ենթակառուցվածքները՝ առաջնահերթություն սահմանելով համայնքներում առկա անասնազվիսաքանակը, տարածքում անասնապահության զարգացման նպատակահարմարությունը, և արոտավայրերից եկամուտ գեներացնելու հնարավորությունները: Ենթակառուցվածքների ստեղծումը, ոչ միայն կբարձրացնի անասնապահությունից ստացվող եկամուտները, այլ նաև կխթանի ոլորտում երիտասարդների և կանանց ներգրավվածությանը: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն, ՏԻՄ-եր և շահագրգռված կառույցներ:
- Ստեղծել համայնքների միջև արոտավայրերի համատեղ օգտագործման խթանման հարթակ, որը թույլ կտա նվազեցնել առանձին արոտօգտագործողների գործարքային ծախսերը և նվազեցնելով որոշ համայնքներում արոտավայրերի թերօգտագործումը՝ բարձրացնել արոտավայրերի օպտիմալ օգտագործման աստիճանը: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն, ՏԻՄ-եր և շահագրգռված կառույցներ:
- ՏԻՄ ներկայացուցիչների, նախապանների և արոտօգտագործող տնտեսությունների ներկայացուցիչների համար կազմակերպել արոտավայրերի կառավարման և դրա տնտեսական նշանակության և բնապահպանական ազդեցության վերաբերյալ ուսուցողական դասընթացներ, միջոցառումներ: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն և շահագրգռված կառույցներ:
- ՏԻՄ բյուջեում ավելացնել առանձին տող արոտավայրերի վերականգնման, բարելավման և կառավարման միջոցառումների իրականացման (այդ թվում՝ մասնագետների ապահովման) համար: Արոտի օգտագործման և վարձակալության դիմաց ՏԻՄ բյուջե մուտք եղած գումարների համար սահմանել նվազագույն չափ (օրինակ 50%), որը պետք է ուղղվի ծախսային այս նոր տողով նախատեսված աշխատանքների կատարմանը: Արոտօգտագործման համար հավաքված վարձավճարների նպատակային օգտագործումը կխթանի վարձավճարների հավաքագրման գործընթացը և

դրական ազդեցություն կունենա հանրապետության արոտավայրերի պահպանման գործում: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն:

- Հանրապետության մակարդակով արոտավայրերի նշանակալից ծավալ (օրինակ՝ միջինից բարձր ցուցանիշ) ունեցող համայնքների ՏԻՄ աշխատակազմում՝ արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, պարտադիր սահմանել գյուղատնտեսների հաստիքներ, ում պարտականություններում կներառվի արոտավայրերի կառավարումը: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն:
- Համայնքային և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի կառավարման համար սահմանել միասնական իրավական շրջանակ, որտեղ մի կողմից կպաշտպանվեն փոքր և մեծ անասնազլխաքանակ ունեցող տնտեսությունների տնտեսական և սոցիալական շահերը, իսկ մյուս կողմից՝ նախադրյալներ և երաշխիքներ կստեղծվեն արոտավայրերի պահպանման և բնականոն վերարտադրման հնարավորությունների ձևավորման համար, ինչպես նաև արոտավայրերի կայուն կառավարման գործառույթների ներդնման համար: Իրականացնող՝ ՀՀ կառավարություն:

Հղումներ

1. ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի կոմիտե (ԱԳԿԿ), 2018թ., ՀՀ Հողային Հաշվեկշիռ:
https://www.cadastre.am/storage/files/pages/pg_4062968307_22.pdf
2. Հայրապետյան, Է.Մ. 2000: Հողագիտություն:
<https://library.anau.am/images/stories/grqer/Gyughatntesutyun/Hogh.pdf>
3. Թովմասյան, Գ. 2015: Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույց:
4. ՀՀ բնապահպանության նախարարություն (ԲՆ), 1999, Կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, <https://www.cbd.int/doc/world/am/am-nr-01-en.pdf>[անգլերեն]
5. ՀՀ բնապահպանության նախարարություն (ԲՆ), 2014, Կենսաբազմազանության հինգերորդ ազգային զեկույց, http://aarhus.am/publications/5_kensab_zekujc-ARM.pdf
6. Թերզյան, 2018, «Հայաստանում էներգիայի հիմնական աղբյուրը պետք է լինեն արևը, քամին և ջուրը. Պետրոս Թերզյան», <https://bit.ly/2KJwdr7> [21.03.2019]
7. ԱՎԿ, 2019, Անասնազլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարները 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ:
8. ԱՎԾ, 2016, Գյուղատնտեսության համատարած հաշվառում
9. ICT Trade Map տվյալների շտեմարան,
https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c230990%7c%7c%7c6%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c2%7c1
10. ԷԵԲՊՆ, 2018, ՀՀ Էներգետիկ Հաշվեկշիռ 2017, <http://www.minenergy.am/page/554>
11. Սարգսյան Ռ., Զիթյան Տ., Հովհաննիսյան Ա., 2012, Տավարաբուծություն, Երևան, ՀՊԱՀ: <https://library.anau.am/images/stories/grqer/Anasabutsutyun/Tavarabucutyun.pdf>
12. Peeters, A., 2015, Environmental impacts and future challenges of grasslands and grassland-based livestock production systems in Europe.
https://www.researchgate.net/publication/287489163_Environmental_impacts_and_future_challenges_of_grasslands_and_grassland-based_livestock_production_systems_in_Europe
13. Թամոյան, Ս. Ջ., 2018: Շրջակա միջավայրի պահպանություն և ագրոէկոլոգիա: Թամոյան Ս. Շրջակա միջավայրի պահպանություն և ագրոէկոլոգիա: Ուսումնական ձեռնարկ/ Ս.Թամոյան. -Եր.: ՀԱԱՀ, 2018.-150 էջ:
<https://library.anau.am/images/stories/grqer/Gyughatntesutyun/tamoyan.pdf>
14. ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի Հայաստանի 5-րդ ազգային զեկույց, 2014
15. Armenia's Third National Communication on Climate Change Yerevan (2015), "Lusabats" Publishing House, 165 p
16. Conant, R. T., Paustian, K. & Elliott, E. T. Grassland management and conversion into grassland: effects on soil carbon. Ecol. Appl. 11, 343–355 (2001)
17. Բնապահպանության նախարարություն, 2015, ՀՀ Կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության

- նագմավարություն և գործողությունների պետական ծրագիր:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103638>
18. Թովմասյան, 2017, Արոտամարգագետնային և Դաշտավարական Կերարտադրության Վարում, Շրջակա Միջավայրի Պահպանություն: Ուսուցողական ձեռնարկ:
<http://www.sgp.am/res/Publications/LD/Grassland%20and%20fodder%20crops%20management.pdf>
 19. MacPhail, V., Kyle, J., 2012, Rotational Grazing in Extensive Pastures. Ontario Ministry of Agriculture, Food and Rural Affairs. http://www.ontariosoilcrop.org/wp-content/uploads/2015/08/rotational_grazing_in_extensive_pastures.sm_.pdf
 20. Kyle, J., 2015, Pasture Production. Ontario Ministry of Agriculture, Food and Rural Affairs. <http://www.omafra.gov.on.ca/english/crops/pub19/Publication19.pdf>
 21. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 5-ի և ՀՀ Կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի N 9-Ն համատեղ հրամանը Հոգստագործման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88823>
 22. ՀՀ կառավարությանն առնթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի ապրիլի 13-ի N 87-ն հրամանը Հոգստագործման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչների մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97391>
 23. ՀՀ օրենքը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին, ՀՀ Ազգային ժողով, 8 ապրիլի 2008:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=43908>
 24. ՀՀ Հողային Օրենսգիրք, ՀՀ Ազգային ժողով, 2 մայիսի, 2001 թվական:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126320>
 25. ՀՀ Կառավարության 27 հոկտեմբերի 2005 թվականի N 1873-Ն որոշումը ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ տարբեր կատեգորիաների հողերը համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու մասին ծրագրի հայեցակարգը հաստատելու մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21330>
 26. ՀՀ Կառավարության 28 հոկտեմբերի 2010 թվականի N 1477-Ն որոշումը Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63123>
 27. ՀՀ Կառավարության 14 ապրիլի 2011 թվականի N 389-Ն որոշումը ՀՀ-ում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=67394>
 28. Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա, Եվրոպայի Խորհուրդ, 2000:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24404>,
<https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/0900001680080621>

29. ՀՀ Գյուղիկ և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն: http://minagro.am/public/uploads/2014/02/agstrategy_arm3.pdf
30. ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագիր: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103638>
31. ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարություն: <http://www.gov.am/files/docs/1322.pdf>
32. Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր, 2015: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98730>
33. ՀՀ համայնքների բյուջետային ծախսեր և եկամուտներ <http://www.mtad.am/hy/budgetary-expenditure/>
34. ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենք, 24.06.1997, ՀՕ-137, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121480>
35. Wilson D. S., “The Tragedy of the Commons: How Elinor Ostrom Solved One of Life’s Greatest Dilemmas”, <http://evonomics.com/tragedy-of-the-commons-elinor-ostrom/>
36. Ostrom Elinor, 1990, “Governing the commons. The evolution of institutions for collective action,” Cambridge University Press.
37. Garrett Hardin, 1968, “The Tragedy of Commons,” Science. 162:1243-1248.
38. FAO, 2010, Challenges and opportunities for carbon sequestration in grassland systems A technical report on grassland management and climate change mitigation. Integrated Crop Management Vol.9-2010.http://www.fao.org/fileadmin/templates/agphome/documents/climate/AGPC_grassland_webversion_19.pdf
39. Jankowska-Huflejt, H., 2006, The function of permanent grasslands in water resources protection, Journal of Water and Land Development 10. https://www.researchgate.net/publication/250165869_The_function_of_permanent_grasslands_in_water_resources_protection
40. ETC/BD (The European Topic Centre on Biological Diversity), 2011, Survey on grassland ecosystem services in the Czech Republic and literature review. https://bd.eionet.europa.eu/Reports/ETCBDTechnicalWorkingpapers/PDF/Survey_on_grassland_ecosystem_services_CZ.pdf
41. Bengtsson, J. et.al, 2019, Grasslands—more important for ecosystem services than you might think, Ecosphere 10(2). <https://esajournals.onlinelibrary.wiley.com/doi/full/10.1002/ecs2.2582>

Հավելվածներ

Հավելված 1

Աղյուսակ 14. Առցանց հարցման համար ընտրված համայնքներ

Մարզ	Մարզի միջին ցուցանիշ	Համայնքներ
Արագածոտն	1 140 հա	Արտաշավան, Ուշի, Բյուրական, Լեռնարոտ, Ավան*, Վ. Սասունիկ, Տեղեր, Օրգով, Ալագյազ**, Ծաղկահովիտ*, Ապարան*, Արագածավան, Թաթուլ, Վերին Բազմաբերդ, Ջովասար, Իրինդ**, Դաշտադեն**
Արարատ	655 հա	Դաշտաքար, Զանգակատուն**, Պ. Սևակ, Լուսաշող, Ուրցաձոր, գ. Արարատ, Երասխ, Վերին Դվին, Նարեկ**, Նորաշեն, Գետազատ, Դվին**, Քաղցրաշեն
Արմավիր	175 հա	Մայիսյան**, գ. Արշալույս, Հայթադ, Նորակերտ, Արգինա, Բազարան**, Երվանդաշատ**, Լեռնագոգ, Կողբավան, Վանանդ, Քարակերտ
Գեղարքունիք	738 հա	Գավառ**, Արծվանիստ, Վ. Գետաշեն, Ծովասար**, Լիճք, Ճամբարակ*, Շողակաթ*, Վարդենիս***, Գեղամասար**, Ակունք
Լոռի	890 հա	Բազում, Հալավար, Ստեփանավան*, Գյուլագարակ*, Լոռի Բերդ*, Ալավերդի**, Թումանյան**, Օձուն, Տաշիր*, Մեծավան*, Սարչապետ*, Սպիտակ, Արևաշող**, Լեռնավան**, Կաթնաջուր**, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ**, Սարահարթ
Կոտայք	740 հա	Սոլակ*, Քաղսի, Գառնի, Ակունք*, Մեղրաձոր, Զարենցավան*, Եղվարդ*, Գողթ
Շիրակ	2 665 հա	Ախուրյան, Մարմաշեն, Հառիճ, Մեծ Մանթաշ, Անի*, Աշոցք*, Սարապատ*, Ամասիա*, Արփի*
Սյունիք	5 115 հա	Կապան**, Քաջարան, Սիսիան***
Վայոց ձոր	11 383 հա	Զառիթավ*, Եղեգիս**, Արենի*, Ջերմուկ
Տավուշ	131 հա	Դիլիջան**, Նոյեմբերյան**

* - Մասնակցել են Ֆոկուս-խումբ քննարկումներին և հարցաթերթը լրացրել են տեղում:

** - Ստացվել են պատասխաններ:

Աղյուսակ 15. Ֆոկուս-խումբ քննարկումների համայնքային խմբերը

Խմբեր	Խմբում ներառված համայնքներ
խումբ 1	Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Տեղ խոշորացված համայնքներ
խումբ 2	Սյունիքի և Վայոց ձորի մարզերի Սիսիան, Գորայք, Զառիթավի խոշորացված համայնքներ

խումբ 3	Վայոց ձորի մարզի Վայք, Գլաձոր, Արենի խոշորացված համայնքներ
խումբ 4	Շիրակի մարզի Ամասիա, Արփի, Աշոցք, Սարապատ, Անի խոշորացված համայնքներ և Արթիկի տարածաշրջանի Սարալանջ համայնք
խումբ 5	Լոռու մարզի Լոռի-Բերդ, Գյուլագարակ, Ստեփանավան, Սարչապետ, Տաշիր, Մեծավան խոշորացված համայնքներ
խումբ 6	Տավուշի մարզի Բերդ և Գեղարքունիքի մարզի Շողակաթ, Ճամբարակ խոշորացված համայնքներ
խումբ 7	Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնք և Ախպրաձոր, Լճավան, Ծովակ, Կարճաղբյուր, Լուսակունք, Մեծ Մասրիկ, Խաչաղբյուր, Տորֆավան համայնքներ
խումբ 8	Արագածոտնի մարզի Ներքին Բազմաբերդ, Ավան, Արտաշավան, Նոր Ամանոս, Օշական համայնքներ, և Ապարան և Ծաղկահովիտ խոշորացված համայնքներ
խումբ 9	Կոտայքի մարզի Սոլակ, Լեռնանիստ համայնքներ, Ակունք, Չարենցավան և Եղվարդ խոշորացված համայնքներ

Հավելված 2

Փորձագիտական հարցազրույցների կիսաստանդարտացված հարցաթերթ

- Արոտների կայուն կառավարումը որքանո՞վ է ներդրված հանրապետությունում և ըստ Ձեզ ինչ խոչընդոտող հանգամանքներ կան սրա իրականացման համար:
- Ինչպե՞ս կգնահատեք ձեր համայնքի/հանրապետության արոտավայրերի վիճակը:
- Ձեր կարծիքով ո՞րն է սրա հիմնական պատճառը (տնտեսական, կառուցվածքային, սոցիալական և այլն)
- Որպես կերի բազա, որքանով են կարևոր արոտավայրերը հանրապետության տարբեր մարզերի համար: Կան մարզային/տարածաշրջանային առանձնահատկություններ: Միջինում տարվա ընթացքում հավաքված քաշի, արտադրված կաթի քանի՞ տոկոսն է ստեղծվում արոտային շրջանում:
- Որո՞նք են այն հիմնական կուլտուրաները, որոնք որպես կերամիավոր արտադրվում են հանրապետությունում և որքանո՞վ է արտադրված տեսականին՝ թե իր բազմազանությամբ (կազմով), թե քանակով ի վիճակի հանրապետությունում եղած անասնազվաքանակին բավարար կեր ապահովել:
- Գործող իրավական դաշտը, պետության կողմից վարվող քաղաքականությունը ինչպե՞ս կարող են աջակցել ոլորտի բարելավմանը: Ինչքանո՞վ են դրանք խոչընդոտում ոլորտի բարելավմանը:
- Համայնքների ղեկավարները կամ արոտագտագործողները ինչպիսի աջակցության կարիք ունեն արոտների կայուն կառավարում ապահովելու տեսանկյունից:
- Ինչպե՞ս կգնահատեք արոտների կառավարման ոլորտում գիտահետազոտական աշխատանքների կարևորությունը, դրանց ներկա ծավալները: Ո՞ր ուղղություններն

են առավել կարևոր: Գիտահետազոտական աշխատանքներում, ըստ ձեզ, որ ուղղություններին են, որ թեմաներն են, որոնք այսօր ուշադրության խիստ կարիք ունեն և որոնք կարող են բարելավել անասնապահ տնտեսությունների եկամտաբերությունը:

9. Ինչպե՞ս կգնահատեք արոտների կառավարման մասնագետների առկայությունը և որակը:
10. Արոտների վիճակի վերաբերյալ համակարգված տվյալների բազայի առկայություն: Համայնքների միջև համագործակցություն:
11. Ինչպիսի նորագույն տեխնոլոգիաների եք ծանոթ, որ ըստ ձեզ օգտակար կլինեն արոտների կայուն կառավարման ոլորտում:
12. Արոտների՝ համայնքային և պետական սեփականություն լինելու նպատակահարմարությունը:
13. Նկատի ունենալով համայնքներում առկա տնտեսական, սոցիալական և բնապահպանական շահերը՝ որքանով է արդարացված, որ արոտների կառավարման գործում միակ պատասխանատուն այսօր համայնքն է:
14. Բնապահպանական հիմնական մարտահրավերները և դրանց դիմակայելու հնարավորությունները, կարողությունները:

Աղյուսակ 16. Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների ցանկ

	Անուն, ազգանուն	Կազմակերպություն
1	Գագիկ Խաչատրյան	Սյունիքի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի ժ/պ
2	Գոհար Խաչատրյան	Վայոց ձորի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
3	Մհեր Եղիազարյան	Կոտայքի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
4	Վաղարշակ Սուքոյան	Տավուշի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
5	Արմեն Գասպարյան	Լոռու մարզպետարան, Գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ
6	Յուրա Ազատյան	Արագածոտնի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
7	Մարտին Պետրոսյան	Գեղարքունիքի մարզպետարան, Գյուղատնտեսության բաժնի պետ
8	Մովսես Մանուկյան	Շիրակի մարզպետարան, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
9	Անդրեաս Մելիքյան	ՀԱԱՀ, Բուսաբուծության և բանջարաբուծության ամբիոնի վարիչ
10	Ռազմիկ Սահակյան	Մենդամբերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն ՊՈԱԿ, Կերարտադրության բաժնի վարիչ
11	Աշոտ Գիլոյան	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Տեղական ինքնակառավարման վարչության պետ
12	Արթուր Բաղդասարյան	Գյուղատնտեսության նախարարություն, Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ
13	Ռուդիկ Նազարյան	Գյուղատնտեսության նախարարություն, Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ

14	Արտեմ Թարգյան	Բնապահպանության նախարարություն, Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ
15	Աշոտ Վարդանյան	Բնապահպանության նախարարություն, Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետի տեղակալ
16	Հովիկ Սայադյան	ՄԱԶԾ, «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հայաստանի հյուսիս-արևելյան լեռնային լանդշափտներում» ծրագրի տեխ. առաջադրանքի ղեկավար
17	Արամ Տեր-Ջաքարյան	ՄԱԶԾ, «Կլիմա Իսթ» ծրագրի տեխ. առաջադրանքի ղեկավար
18	Գագիկ Թովմասյան	Բնական կերային հանդակների կառավարման փորձագետ